



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




25 NOV 2010

Ա. ՉԵԽՈՎ

252

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Թարգմ. Գ. Արարաջեան



ԱՐԷՒՍՏՆԻՐԱԳՈՒ

Տպարան Յ. Ղասապեանցի

1904

(28)

252

1904 թ. հունիս 22

1516

891.41

9-34

ար

Ս. 26604

22 JUN 2007

N-8913.

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

1002
5793

1516 45

1516
ԿԵ-Վ

Թարգմ. Գ. Արարաշեն



ԱՐԿԻՎԱՆԵՐԱԳՈՒ
Տպարան Յ. Ղաաբեանի
1904

16.07.2013

72671

Дозволено цензурою. Тифлисъ, 21 мая 1904 г.

ՔՆԵԼ ԵՄ ՅԱՆԿԱՆՈՒՄ

Գիշեր էր. տասերեք տարեկան Վարեան օրօրում էր երեխի օրօրօցը և հագիւ լսելի ձայնով քթի տակ երգում.

Օրօր եմ ասում,

Ես երգ կ'երգեմ...

Սրբի պատկերի առաջ վառւում էր կանաչ կանթեղը: Սենեակի մի անկիւնից մինչև միւս անկիւնը քաշ արած թոկի վրայ կախուած էին երեխի շորերը և մի մեծ, սև անդրավարդիկ: Կանթեղի լոյսից առաստաղի վրայ գոյացել էր մեծ կանաչաւուն բիծ, իսկ թոկի վրայ կախուած շորերից տարածուել էին երկայն ստուերներ վառարանի, օրօրօցի և Վարիայի վրայ... Երբ կանթեղի լոյսը վեր ու վայր էր անում, բիծը և ստուերները սկըսում էին շարժուել: Սենեակում օդը ծանր էր:

Երեխան լալիս էր: Նա վաղուց արգէն ձայնը զցել էր և ուշաթափ եղել լալուց,

բայց էլի շարունակում էր և յայտնի չէր, թէ երբ կգադարի լաց լինելուց. իսկ Վարեան ցանկանում էր քնել: Նորա աչքերը փակուում էին, գլուխը օրօրուում էր և պարանոցը ցաւում: Նա չէր կարողանում շարժել ոչ թերթերունքները և ոչ շրթունքները. նորան թւում էր, թէ դէմքը փետացել է և գլուխը այնքան փոքրացել, որ կարծես գնդասեղի գլուխ լինի:

— Օրօր եմ ասում, մըմնջում էր նա. քեզ համար խաշիլ կ'եփեմ...

Վառարանի մէջ ծփում էր ծղրիտը: Հարեան սենեակում, դռան այն կողմը, խրումփացնում էին տանտէրը և բանուոր Աֆանասին... Օրօրօցը ճռնչում էր, իսկ Վարեան քթի տակ երգում: Այս բոլորը միախառնուելով, կազմում էին մի տեսակ գիշերային քնաբեր երաժշտութիւն, որ այնքան հաճելի է լսել, երբ պառկում ես քնելու: Այժմ այդ երաժշտութիւնը միայն գրգռում էր Վարիայի ջղերը և ճնշում նորան: Նա քուն էր բերում նորա աչքերին, իսկ քնել չէր կարելի: Աստուած ոչ անէ, եթէ նա քնէր. դորա համար նա կ'ենթարկուէր ծեծի:

Վանթեղի բոցը վեր ու վայր էր անում: Կանաչ բիծը և ստուերները շարժուում էին: Նորանք ընկնում էին Վարիայի կիսաբաց և ան-

շարժ աչքերը: Մուայլ երագները պաշարել էին նորա կիսով շափ թմրած, նիբհած ուղեղը: Նա տեսնում էր մութ ամպեր, որոնք վազում են մէկը միւսի յետեից երկնքի վրայով և ճչում, ինչպէս երեխաներ: Բայց ահա փչեց քամին, ամպերը կորան, և Վարեան տեսնում է լայն ցեխոտ խճուղին: Կարաւանները շարժուում են խճուղու վրայով: Խոնուում են մարդիկ պարկերը ուսերին, յետ ու առաջ են գնում: Ինչ որ ըստուերներ: Ծանապարհի երկու կողմից ցրտաչունչ մառախուղի միջով երևում են անտառները: Յանկարծ պարկերով մարդիկ և ըստուերները թափուում են գետնի վրայ, ցեխի մէջ: — Ինչո՞ւ թափուեցիք, հարցնում է Վարեան: — Քնել, քնել ենք ցանկանում, պատասխանում են նորան: Եւ նորանք քնում են խորը և քաղցր. իսկ հեռագրաթելերի վրայ նստել են ազաւաններն ու բուերը, կրոնչում են, կանչում և աշխատում զարթեցնել նորանց:

— Օրօր եմ ասում, ես երգ կ'երգեմ, մըմնջում է Վարեան և արդէն իրան տեսնում նեղ և մութ խրճիթում:

Յատակի վրայ թաւալուում է նորա հանգուցեալ հայրը՝ Եֆիմ Ստեպանովը: Նա չի տեսնում նորան, բայց լսում է, թէ ինչպէս նա ցաւի սաստկութիւնից գալարուում է յատակի վրայ և հառաչում: Նորան տանջում

էր, իր ասելով, պորտաթափուլիւնը: Յաւը աչնքան սաստիկ էր, որ նա չէր կարողանում արտասանել և ոչ մի բառ և միայն ազահնութեամբ ներս էր ծծում ոգը և ատամները զընգզընգացնում:

Մայրը վազեց կարուածատիրոջ տունը յայտնելու, որ Եֆիմը մեռնում է: Նա վազուց արդէն գնացել էր և ժամանակ էր, որ վերադառնար, իսկ ինքը վառարանի վրայ պտակած սկանջ էր դնում հօր ատամների զընգզընգոցին: Բայց ահա ինչ որ կառքի ձայն է լսուում. մէկը մօտեցաւ խրճիթին: Գա երիտասարդ բժիշկն է, որին ուղարկել են Եֆիմին տեսնելու. նա քաղաքից հիւր էր եկել կալուածատիրոջ մօտ: Բժիշկը մտնում է խրճիթը. մթութեան մէջ նա չի երևում. բայց լսում էր նորա հազոցի ձայնը և ձեռքերով դռների շօշափելը:

— Կրակ վառեցէք, ասում է նա:

Պատասխանի փոխարէն լսում է Եֆիմի ատամների զընգզընգոցը:

Պելագէտն վազում է դէպի վառարանը և սկսում որոնել լուցկին: Մի րոպէ տիրում է լուութիւն: Բժիշկը վառում է իւր լուցկին:

— Սյս րոպէիս, բժիշկ, ասում է Պելագէտն և դուրս վազում խրճիթից. մի փոքր անց նա վերադառնում է այրուած մոմի մնացորդը ձեռին:

Եֆիմի հաշեացքը սուր էր, թշերը վարդազօյն. աչքերը փայլում էին, նա կարծես մատների արանքով էր տեսնում թէ խրճիթը, թէ բժիշկին:

— Ի՞նչ է պատահել քեզ, հարցնում է բժիշկը կռանալով դէպի նա. վաղուց է, որ ունիս այդ հիւանդութիւնը:

— Մեռնելուս ժամանակը եկել է, Ձերդ ազնուութիւն... այլ ևս չոյս չկայ ինձ օգուտի...

— Գրանք անմիտ խօսքեր են, կըբժշկուիս:

— Թող ձեր խօսքը լինի, ձերդ ազնուութիւն. շատ շնորհակալ եմ. միայն ես կարծում եմ... որ եթէ մահը մօտեցել է, ինչ արած, պէտք է հաշտուել նորա հետ:

Բժիշկը մի քառորդ ժամ զբաղւում է Եֆիմի մարմինը քննելով, լետու վեր է կենում և ասում.

— Ես այժմ ոչինչ չեմ կարող անել...

Բեզ հարկաւոր է գնալ հիւանդանոց. այնտեղ փոքրիկ անդամահատութիւն կանեն: Հէնց այժմ գնան, անպատճառ գնա. թէև մի փոքր ուշ է, հիւանդանոցում բուրբը քնած կըլինին, բայց այդ ոչինչ, ես քեզ տոմսակ կտամ:

— Ինչո՞վ նա կարող է գնալ, բժիշկ, մենք ձի չունինք, ասում է Պելագէտն:

— Ոչինչ, ես կըլինդրեմ աղաներին, որ տան:

Բժիշկը գնում է, շուտով հանգչում է մոմը, և նորից լսում ատամների զընգզընգոցը: Այս ժամից լետ խրճիթին մօտենում է մի կառք, որ ուղարկել էին Եֆիմին հիւանդանոց տանելու համար: Եֆիմը պատրաստում է և գնում...

Բայց ահա լուսանում է: Պայծառ և գեղեցիկ առաւօտ է: Պելագէան տանը չէ. նա գնացել էր հիւանդանոց Եֆիմին տեսութեան: Մի ինչ որ տեղ լալիս է երեխան և Վարեան լսում է, թէ ինչպէս մէկը երգում է իւր ձայնով:

— Օրօր եմ ասում, ես երգ կերգեմ...

Վերադառնում է Պելագէան. նա երեսը խաչակնքում է և շշնջում.

— Գիշերը ուղարկեցինք նորան հիւանդանոց, իսկ լուսադէմին նա արգէն աւանդել է հոգին... Երկնային արքայութիւն և յաւիտենական հանգիստ նորան... Ասում էին, որ ուշ էք հետևել... Հարկաւոր էր աւելի վաղ միջոցներ ձեռք առնել:

Վարեան գնում է անտառ և սկսում է այնտեղ լաց լինել. բայց յանկարծ մէկը խրփում է նորա ծոծրակին այնպիսի սաստիկութեամբ, որ ճակատը դիպչում է կէջի ծառին: Վարեան բարձրացնում է աչքերը և տեսնում առաջին կանգնած իւր տիրոջը՝ կօշկակարին:

— Երեխան լալիս է և դու քնում ես, անպիտան, ասում է նա:

Եւ նա ուժգին քաշում է Վարիայի ականջից, իսկ Վարեան թափէ տալիս գլուխը, սկսում է ճօճել օրօրօցը և մրմնջալ իւր երգը: Վանաչագոյն բիծը և թոկից կախած շորերի ստուերները շարժւում էին: Վարեան շուտով նորից ընկղմւում է կէսարթուն և կիսաքուն դրութեան մէջ: Նորից նա տեսնում է ցեխոտ խճուղին. մարդիկ պարկերը ուտերին և նրանց ստուերները, որոնք էլի թափւում են ցեխի մէջ և խորը քնում: Նայելով նորանց վրայ, Վարեան ինքն էլ սաստիկ ցանկանում է քնել, բայց մայրը թոյլ չի տալիս. նա գրնում է կողքիցը և շտապեցնում: Նորանք աճապարում են քաղաք վարձուելու...

— Ողորմութիւն արէք ի սէր Քրիստոսի, խնդրում է մայրը հանդիպողներին. ցոյց տուէք աստուածային ողորմութիւն, բարեսիրտ պարօններ:

— Այս կողմ տուր երեխին, պատասխանում է նորան ինչ որ մէկի ծանօթ ձայնը. տուր այս կողմ, կրկնում է նոյն ձայնը, բայց արգէն բարկացած: Քնում ես, անպիտան.

Վարեան վեր է թռչում և լետ նայելով հասկանում, թէ բանն ինչսւմն է: Խճուղին, մայրը և հանդիպողները լոկ երազ էին, սե-

նեակի մէջ տեղում կանգնած էր տիրուհին, որ եկել էր կերակրելու իւր երեխին: Մինչև որ հաստ ու թիկնաւէտ տիրուհին ծիծ կրտար մանկանը: Վարեան մի կողմ կանգնած նայում էր նրան և սպասում էր, թէ երբ կվերջացնի: Կրտում խաւարը սկսել էր նոսրանալ. ստուերները և առաստաղի վրայի կանաչ բիծը նկատելի կերպով դարկացել էին: Շուտով առաւօտ կլինէր:

— Վերցրու երեխին, ասում է տիրուհին, կոճկելով կրծքի կոճակները. լալիս է, երևի աչք են տուել:

Վարեան վերցնում է երեխին, դնում է օրօրօցը և նորից սկսում օրօրել: Վանաչ բիծը և ստուերները կամաց-կամաց չքանում են և այլևս ոչինչ չէր մնում, որ թափանցէր Վարիայի ուղեղը ու թմրացնէր նորան: Առաջուալ նման Վարեան դարձեալ սաստիկ ցանկանում էր քնել. նա գլուխը դնում է օրօրօցի ծայրին և ամբողջ մարմնով սկսում է օրօրուել, օրպէս զի ալդպիսով չաղթահարէ քունը, բայց և այնպէս աչքերը դարձեալ փակում էին, գլուխը ծանրացել էր:

— Վարիա, փառիր փառարանը, լուում է գռան այն կողմից կօշկակարի ձայնը:

Այդ նշան է, որ արգէն ժանանակ է վերկենալու և գործի լինելու: Վարեան թողնում

է օրօրօցը և վազում փայտանոց փայտ բերելու: Երբ մարդ վազում է և կամ քայլում, այլևս այնպէս ցանկութիւն չի զգում քնելու, ինչպէս նստած դուրթեան մէջ: Նա ուրախ է. բերում է փայտը, դարսում վառարանի մէջ և արգէն զգում է, թէ ինչպէս փետացած երեսը հետզհետէ զուարթանում է և մաքերը պարզում:

— Վարեա, ինքնատուր գցիր, կանչում է տիրուհին:

Վարեան մանրում է չքայ փայտը և հաղիւ կարողանում է վառել ու գցել ինքնատուր մէջ, երբ լուում է նոր հրաման:

— Վարեա, մաքրիր կրկնակօշիկները:

Վարեան նստում է յատակի վրայ, մաքրում է կրկնակօշիկները և մտածում, թէ ինչ լաւ կըլինէր կոխել գլուխը այս մեծ ու խորունկ կրկնակօշիկների մէջ և մի փոքր նիհրել... Եւ յանկարծ կրկնակօշիկը մեծանում է, ուռչում և բռնում ամբողջ սենեակը. խոզանակը վայր է ընկնում Վարիայի ձեռքից, բայց նա խկոյն թափ է տալիս գլուխը, պըլշացնում է աչքերը և աշխատում այնպէս նայել, որ առարկաները մեծ չերեան աչքերին և չչարժուեն:

— Վարեա, լուա սանդուղքի աստիճանները, յաջախորդներ են լինում, ամօթ է:

Վարեան լուանում է սանդուղքի աստի-
ճանները, հաւաքում է սենեակները, վառում
է երկրորդ վառարանը և վազում է
շուկայ. անելու բան շատ կար և ոչ մի բո-
ւաքէ ազատ:

Բայց ոչ մի բան այնքան ծանր չէ, որ-
քան կանգնել խոհանոցում սեղանի առաջ և
գլուխը կախ արած մաքրել գետնախնձոր:
Մօտովդ անց ու դարձ է անում հաստափոր
և բարկացկոտ տիրուհին քշած թևերով և
այնպէս բարձր է խօսում, որ ականջներդ
ձայն են տալիս: Գետնախնձորը մնոտում է
աչքերիդ առաջ, իսկ դանակը վայր ընկնում
ձեռքիցդ: Ճանջանքի չափ ծանր է նոյնպէս
երբեմն ծառայել ճաշի ժամանակ, լուանալ
և կամ կարել: Աինում են բուսակներ, որ ցան-
կութիւն ես զգում, ինչ էլ որ լինի, վայր
ընկնել լատակի վրայ և քնել:

Անցնում է օրը: Մօտեցող խաւարը ու-
րախութիւն է պատճառում Վարիային: Նորա
փետացած քունքերը շարժւում են, նա ժրպ-
տում է, ինքն էլ չգիտենալով, թէ ինչու:
Երեկոյեան մութը փաղաքշում է նորա քըն-
հատ աչքերը և խոստանում է շուտով քաղցր
քուն: Երեկոյեան զալիս են հիւրեր:

— Վարեա, գցիր ինքնաեռը, կանչում է
տիրուհին: Ինքնաեռը փոքր էր և առաջ քան

հիւրերին բաւականութիւն տալը, հարկաւոր
կլլինէր մի հինգ անգամ նորոգել: Թէչից լե-
տոյ Վարեան մի ամբողջ ժամ մնում է կան-
գնած միւկնոյն տեղը. նայում է հիւրերին և
սպասում նոր հրամանի:

— Վարեա, վագելով գնա և գնիր երեք
շիշ գարեջուր:

Վարեան գնում է, աշխատելով որքան
կարելի է արագ, որպէս զի այդպիսով գոնէ
փախցնէ քունը:

— Վարեա, վագիր արողի. Վարեա, որ-
տեղ է խցահանը: Վարեա, մաքրիր տառեխը:

Բայց ահա հիւրերը գնում են, կրակնե-
րը հանգցնում են և Վարիայի տիրուհին ու
նրա ամուսինը պառկում են քնելու:

— Վարեա, օրօրիւր երեխային, լաւում է
վերջին հրամանը:

Վառարանի մէջ սկսում է ծվծւալ ծղրի-
տը: Առաստաղի կանաչագոյն բիծը, անդրա-
վարդիկի և տեղաշորի ստուերները կրկին
թափանցում են նորա ուղեղը:

— Օրօր եմ ասում, ես երգ կ'երգեմ,
մրմնջում է նա...

Իսկ երեխան լալիս է և ուժաթափ լի-
նում լաց լինելուց: Վարեան դարձեալ տես-
նում է ցեխոտ խճուղին, պարկերով մարդկանց,
մօրը, հօրը Եֆիմին: Նա ամեն բան հասկա-

նում է, ճանաչում է բոլորին, բայց միայն
 կիսաքուն զրուժեան մէջ. նա ոչ մի կերպ
 չի կարողանում ճանաչել այն ոյժը, որ կաշ-
 կանդել է իւր ձեռքերն ու ոտները և խան-
 գարում է իրան քնել: Նա լետ է նայում,
 սրոնում է այդ ուժը, որպէս զի ազատուի
 նրանից, բայց չի կարողանում գտնել: Վեր-
 ջապէս շատ տանջուելուց լետ, նա լարում
 է իւր բոլոր ուժերը, տեսողութիւնը, գիտում
 է առաստաղի վրայ երերուող կանաչագոյն
 բիծը, ահանջ է գնում երեսի լացին և գլու-
 նում է թշնամուն, որ խանգարում էր նո-
 րան քնելու:

Այդ թշնամին՝ երեսան է:

Նա ծիծաղում է: Նորան զարմանալի է
 թւում, թէ ինչպէս աւելի շուտ չկարողա-
 ցաւ հասկանալ այդ բանը: Կանաչագոյն բի-
 ծը, ստուերները և ծղրիտը նոյնպէս կարծես
 ծիծաղում էին նորա վրայ և զարմանում:

Թիւր մտապատկերը ամբողջովին տիրա-
 պետում է նորան: Ժպիտը երեսին նա վեր է
 կենում աթուռից և չթերթելով աչքերը քայ-
 լում է սենեակում: Երեսից շուտով ազատ-
 ուելու միտքը հաճոյք է պատճառում նո-
 րան: Խեղդել մանկանը, որ կաշկանդել է
 ձեռքերս ու ոտքերս և այնուհետև քնել,
 քնել և քնել...

Ծիծաղելով և միևնույն ժամանակ մաս-
 ներով սպառնալով ստուերներին, Վարեան
 գաղտագողի սողում է դէպի օրօրօցը, խեղ-
 դում է մանկանը և շտապով պառկում յա-
 տակի վրայ: Այժմ կարելի է քնել և մի րո-
 պէից լետ նա արդէն մրավում էր խոր քնի
 մէջ, ինչպէս մեռած...

Գ Ի Մ Ն Ա Ջ Ի Ս Տ Ը

Վանեա Օտտեպելովը պէտք է գնար յու-
նարէն լեզուի քննութեան: Նա համբուրեց
սրբերի բոլոր պատկերները: Նորա աղիքները
գալարուում էին, մարմնի մէջ զգում էր մի
տեսակ սառնութիւն, սիրտը բաբախում էր
և կուչ գալիս երկիւղից: Ի՞նչ կը պատահի
այսօր ինչ հետ՝ երեք կըստանամ, թէ երկուս.
ահա այս անորոշութիւնը տանջում էր նի-
րան: Հինգ վեց անգամ նա մօտեցաւ մօրը
նիւրա օրհնութիւնը ստանալու, իսկ գնալիս՝
խնդրեց մօրաբրոջը, որ աղօթէ իր համար:
ձանապարհին նա երկու կուպէկ տուեց աղքա-
տին այն յուսով, որ այդ ողորմութիւնը կը-
փրկէ իրան և Աստուած կըտայ քննութեան
ժամանակ քերականութիւնից չեն հարցնի թը-
նական անունները, այդ «տեսարակօտնա»
և «օկտօկայգեկա»ներով:

Քիմնագիտից նա ուշ վերոգործաւ, ժա-
մը հնգին և առանց մի խօսք ասելու՝ լուռ
գնաց և պառկեց մահճակալի վրայ: Նիւրա
նիհար գէմքը գունատ էր. կարմրատակած
աչքերի շուրջը կապտել էին:

— Ի՞նչպէս եղաւ, քանի ստացար, հարց-
րեց մայրը մօտենալով մահճակալին:

Վանեան ճըպճպացրեց աչքերը, բերանը
մի կողմ ծռեց և լաց եղաւ: Մայրը գունատ-
ուեց. նորա բերանը բաց մնաց, ձեռքերը թու-
լացան և անդրաժարգիկը, որ նա կարկատում
էր, վայր ընկաւ ձեռքից:

— Ինչո՞ւ ես լաց լինում, ուրեմն չկարո-
ղացար քննութիւն բռնել, հարցրեց նա:

— Կ... կտրուեցի... երկուս ստացալ...
1002 3793

— Այդպէս էլ կարծում էի: Նախագգա-
ցումը կարծես ինձ ասում էր, որ այդպէս էլ
կըլինի: Ա՛խ Աստուած, Ի՞նչպէս եղաւ, որ
կտրուեցիր, ինչու, ի՞նչ աւարկայից:

— Յունարէնից... մայրիկ... հարցրին,
ինչպէս կըլինի «Ֆերօ», բառի ապառնին և
ես փոխանակ ասելու «օլօմայ» ասացի «օպ-
լօմայ»: Յետոյ... յետոյ... երկարաւուն շեշտ
չի դրուում, երբ վերջին վանկը երկար է, իսկ
ես... ես շփոթուեցի, մոռացալ, որ այնտեղ
այլֆան երկար է... վերցրի և գրի: Յետոյ
Արտակոստովը հրամայեց թուել շեշտ կորցնող

մասնիկները... Ես թուեցի և պատահաբար
ասացի և մի գերանուն... սխալուեցի... իսկ
նա վերցրեց և երկուս դրեց... Անբախտ մարդ
եմ ես... բոլոր գիշերը պարապեցի և այս ամ-
բողջ շաբաթը ժամը 4-ին էի վեր կենում...

— Ի՞նչ ես անբախտը, փո՛ւշ տղայ, այլ
ես եմ: Քո դարձից չո՞վ եմ դառել, իմ հո-
գեհանն, իմ չար բախտի ծնունդ: Մէջքից կէս
եմ լինում, վճարում եմ ուսմանդ վարձը,
չարչարում եմ, տանջում եմ, իսկ դու ինչ-
պէս ես վերաբերում, ինչպէս ես սովորում:

— Ես... ես աշխատում եմ, ամբողջ գի-
շերը... ինքներդ տեսաք...

— Ինչգրել եմ Աստուծուց, որ հոգիս
առնի, բայց մեղաւորիս չի լսում... Աւրիշնե-
րի որդիները կարգին տղերք են. իսկ ես մին
մինուճար որդի ունիմ և այն էլ բան դուրս
չի գալիս: Ի՛նչ անեմ քեզ, հոգեհան, ծեծե՛մ,
բայց որտեղից այդքան ոյժ: Ա՛խ Տիրամայր
Աստուածածին:

Եւ նա ծածկեց գէմքը վերնազգեստի
փէշերով ու սկսեց հեկեկալ: Վանեան սրտնե-
ղութիւնից շուռ եկաւ և ճակատը հուպ
տուեց պատին: Ներս մտաւ մօրաքոյրը:

Ահա թէ ինչ է նշանակում նախազգա-
ցում... իօսեց նա գունատութիւնով և միանգա-
մից գուշակելով, թէ բանն ինչնումն է, ասաց.

— Ամբողջ առաւօտ սիրտս մի տեսակ ճնշուում
էր... զգում էի որ գժբախտութիւն կը պա-
տահի, և ահա կատարուեց...

— Իմ հոգեհան, իմ պատիժ, ասում էր
մայրը:

— Ինչո՞ւ ես հայհոյում նորան, մի՛թէ նա
մեղաւոր է, ասաց մօրաքոյրը ջղաձգաբար
քաշելով իր գլխից կինամոնազոյն թաշկինա-
կը. դու ինքդ ես մեղաւոր, դու. ինչո՞ւ տուիր
նորան զիմնագիտ. ազնուականն ես, ինչ ես:
Աւգում եմ ազնուական լինել հա, հա, հա...
Ինչպէս չէ, անպատճառ. ահա և ձեզ ազ-
նուականութիւն: Կըլսէիր ինձ, կըտայիր նո-
րան առեւտրականի մօտ և կամ որևէ գրասե-
նեակ, ինչպէս իմ Կուզեան է, և ինքդ էլ
չէիր տանջուի և խեղճ աղային էլ չէիր տան-
ջի այդ անօգուտ ուսումով: Կուզեան այժմ
ստանում է հինգհարիւր բուրլի. դա հեշտ
բան չի: Նայիր սորան, խեղճը հազում է և
լղարել է բոլորովին... Չնայելով, որ տասնե-
րեք տարեկան է, բայց հազիւ տասը տարե-
կանի տպաւորութիւն է թողնում:

— Ոչ, Նաստենիկա, ո՛չ, սիրելիս. պատ-
ճառն այն է, որ քիչ եմ ծեծել ես նորան,
ինձ տանջողին: Հարկաւոր է ծեծել նորան,
ահա թէ ինչ: Ա՛խ... դու ճիզուիտ, մահմե-
տական, հոգեհան, կանչեց մայրը ձեռքը

չարժեղով որդու վրայ: Փորդ պէտք է թափել,
բայց ոչ չկայ: Առաջ, ինձ ասում էին, երբ
նա դեռ փոքր էր, «ծեծիր, ծեծիր», բայց ես
մեղաւորս չլսեցի և այժմ ասնջուում եմ:
Սպասիր, ես, ես հոգիդ կըհանեմ...

Մայրը սպառնաց որդուն արտասուքից
թըրջուած բռունցքներով և լալով գնաց Եւ-
տիխի Կուզմիչի սենեակը: Եւտիխի Կուզմիչ
Կուպարոսովը ապրում էր նրա տանը ամսա-
վճարով: Նա գտաւ նորան սենեակում, որ
նստել էր սեղանի առաջ և կարդում էր «պա-
րերի ինքնուսույց» ձեռնարկը: Եւտիխի Կուզմի-
չը խելացի և ուսումով մարդ էր. խօսում
էր քթի մէջ, լուացուում էր մի այնպիսի սա-
պնով, որի հոտից բոլոր տանեցիք փռշտում
էին, պասը ուտում էր և որոնում էր իրան
համար կրթուած հարսնացու, որի համար և
համարուում էր տան մէջ եղածներին ամենից
խելացին:

— Եւտիխի Կուզմիչ, ասաց նա արտա-
ուելով. եղէք այնքան բարի, որ ծեծէք իմ...
Արէք ողորմութիւն. կորուել է, հաւատողւմ
էք, չէ կարողացել քննութիւն բռնել: Ոչ
չունենալու պատճառով ես չեմ կարող պատ-
ժել նորան... Ծեծեցէք նորան իմ փոխարէն.
եղիք այնքան ազնիւ և բարի, Եւտիխի Կուզ-
միչ: Յարգեցէք հիւանդ կնոջս խնդիրը:

Կուպարոսովը կնճուեց, խորը արտաշն-
չեց քթածակերով, ապա մի փոքր մտածեց
և թխկթխկացնելով սեղանին ու միւս անգամ
ևս հառաչելով, ուղևորուեց դէպի Վանեան:

— Զեզ սովորեցնում են, սկսեց նա, կըր-
թում են, ուղղութիւն են տալիս. ինչու
դուք, անպիտան տղայ:

Եւ նա երկար խօսեց, ասաց մի ամբողջ
ճառ, լիչեց խաւարի, գիտութեան և լուսոյ
մասին:

— Ուրեմն այդպէս, երիտասարդ պարոն.

Վերջացնելով ճառը նա թոկով կապեց
Վանեայի ձեռքերը:

— Զեզ հետ ուրիշ կերպ չի կարելի,
ասաց նա:

Վանեան հլութեամբ կոխեց իւր գլուխը
Եւտիխի Կուզմիչի ծնկների մէջ: Նորա վար-
դագոյն և արորուած ակածջները երկար ժա-
մանակ հարուում էին Եւտիխի Կուզմիչի նոր
անդրավարդիկին, որի կողքերից կարուած էին
կինամոնագոյն ժապաւէններ...

Վանեան և ոչ մի ծպտուն չհանեց:
Երեկոյեան, ընտանեկան խորհրդում, որոշ-
ուեց հանել նորան գիմնազիայից և տալ ան-
տրականի մօտ:

ուսերը և ուրիշ ոչինչ: Ես ճանաչում եմ մի
ինտելիգենտ կնոջ, որ նախագուշակեց իւր
մահուան օրը և իսկապէս նոյն օրն էլ մե-
ռաւ, թէև ըստ երևոյթին ո՛չ մի պատճառ
չկար, որից կարող լինէր հետևել մահը: Նա ա-
սաց կրմեռնեմ այս ինչ ժամանակը և մեռաւ:

— Զրկայ երևոյթ առանց պատճառի, ա-
սաց բժիշկը: Եթէ տեղի է ունեցել մահ,
ուրեմն կըլինէր և պատճառ: Մնչ վերաբերում
է նախագագման, գա այնքան էլ զարմանալի
չէ. մեր բոլոր կանայք և պատուները առան-
ձին ընդունակութիւն ունին նախագգալու
և գուշակելու գալիքը:

— Այդ այդպէս է, բայց իմ ասած կինը,
բժիշկ, բոլորովին այլ կին էր: Նորա նախագ-
գացման և մահուան մէջ չկար ոչինչ պա-
ռաւական բան: Նա երիտասարդ էր, առողջ,
խելացի և ազատ ամեն տեսակ նախապաշա-
րումներից: Նորա աչքերը և դէմքը կրում
էին խելացի, պայծառ և ազնիւ հոգու ար-
տայայտութիւն: Հայեացքի մէջ, պայծառ
դէմքի և շրթունքների վրայ խաղում էր մի
տեսակ ժպիտ, որ միայն ռուսներին յատուկ
է: Մի բան միայն կար նորա մէջ կանացի,
այդ նորա զեղեցկութիւնն էր, եթէ ցանկա-
նում էք իմանալ: Նա վայելչակազմ էր, շնոր-
հալի, ինչպէս ահա այս կէճի ծառը, իսկ

Ք Ն Ն Ի Չ Ը

Մի գեղեցիկ, գարնանային կէսօր գաւա-
ռական բժիշկը և դատաստանական քննիչը
գնում էին անդամահատութեան: Քննիչը երե-
սուն և հինգ տարեկանի արտայայտութիւն
ունէր: Նա մտախոհ կերպով նայեց կառքի
ձիերին և ասաց:

— Բնութեան մէջ, բժիշկ, չափազանց
շատ խորհրդաւոր, մութ և անբացատրելի
բաներ կան. բայց սովորական կեանքում էլ
քիչ են լինում այնպիսի երևոյթներ, որ մարդ
ուղղակի անկարող է բացատրել: Այսպէս, ես
գիտեմ մահուան մի քանի անբացատրելի
դէպքեր, որ գուցէ միայն սգիների հետ խօ-
սողները և կամ գերբնական, խորհրդաւոր
բաների հետ առընչութիւն ունեցողները կա-
րողանան բացատրել: Սովորական, առողջ
ուղեղի տէր մարդիկ, երբ նրանց հարցնէք
տարակուսանքով միայն թափ կըտան իրանց

մագերը՝ հրաշալի: Արտէսգի ոչինչ չմնայ ձեզ համար անհասկանալի, պէտք է աւելացնեմ, որ նա ուրախ և անհոգ բնաւորութեան տէր էր. իւր ուրախ բնաւորութեամբ նա վարակում էր շրջապատողներին: Նորա մէջ կար և մի փոքր թեթեւամտութիւն, որ ունենում են առհասարակ մտածող, բայց սրտի տէր և ուրախ մարդիկ: Այլևս այստեղ կարող է խօսք լինել հիւանդ երեւակալութեան, նախազգալու ընդունակութեան և կամ այլ դպչափնման բաների մասին: Նա ծիծաղում էր այդ բոլորի վրայ:

Կառքը կանգնեց ջրհորի մօտ: Քննելը և բժիշկը, ջուր խմեցին ու թիկ ընկան կառքի լենարանին, սպասելով մինչև որ կառապանը կըջրէր ձիերը:

— Ապա ինչո՞ւն մեռաւ այդ կինը, հարցրեց բժիշկը, երբ կառքը սկսեց նորից շարունակել ճանապարհը:

— Մեռաւ նա շատ տարօրինակ կերպով: Մի գեղեցիկ օր ամուսինը ներս է մտնում նորա սենեակը և ասում, որ վատ չէր լինի գարնանադէմ ծախել հին կառքը և նորա փոխարէն գնել աւելի նորը ու մի փոքր թեթեւը և թէ չէր խանգարի նույնպէս փոխել կառքի ձախ կողմից լծուող ձին, իսկ Բորջինսկուն (այդպէս էր կոչւում ամուսնու ձին) թողնել հանգիստ:

Կինը լսում է նորան և ասում.

— Արո՛, ինչպէս կամենում ես, ինձ համար միևնույն է, ամառը ես արդէն դերեղմանում կըլինեմ:

Ամուսինը, իհարկէ, թափ է տալիս սուտերը և ծիծաղում:

— Ես բոլորովին կատակ չեմ անում, ասում է նա. լրջօրէն լայտնում եմ քեզ, որ ես շուտով մեռնելու եմ:

— Այսինքն ինչպէս թէ շուտով:

— Ծննդաբերութիւնից լետոյ անմիջապէս. կաղատուեմ և կ'ըմեռնեմ:

Այդ խօսքերին ամուսինը ոչ մի նշանակութիւն չի տալիս: Նա ոչ մի նախազգացման չի հաւատում և միևնույն ժամանակ շատ լաւ գիտէ, որ կանաչք, երբ նրանցով հետաքրքրուում են, սիրում են քմահաճութիւններ անել և ընդհանրապէս անձնատուր լինել մօտայ մտքերի: Անցնում է մի օր և կինը դարձեալ կրկնում է, թէ ծննդաբերութիւնից լետոյ իսկոյն կըմեռնի և այնուհետև ամենայնօր միշտ միևնույն բանի մասին էր խօսում, իսկ ամուսինը ծիծաղում էր և անուանում նորան Փալջի, նախապաշարուած կին: Մօտալուտ մահը գտնում է կնոջ համար *idée fixe*, երբ ամուսինը չէր լսում նորան, նա

գնում էր խոհանոց և այդ մասին խօսում
խոհարարուհու և ծծմօր հետ:

— Քիչ մնաց ինձ ապրելու, ծծմայր, ա-
սում էր նա, երբ կ'ազատուեմ, իսկոյն և եթ
կրմեռնեմ: Ձէի ցանկանում այդպէս շուտ
մեռնել, բայց ինչ արած, այդպէս է ինձ վի-
ճակուած:

Ծծմայրը և խոհարարուհին, իհարկէ,
արտասուում էին: Պատահում էր, որ գալիս
էին նորա մօտ երիցուհի և կամ կալուածա-
տիրուհի: Նա նորանց տանում էր դէպի ան-
կիւնը և սկսում խօսել իւր մօտալուտ մահ-
ուան մասին: Խօսում էր նա լուրջ կերպով,
անգուր ժպիտը երեսին, այդպիսի դէպքերում
նորա գէմքը կրում էր նոյնիսկ չար արտա-
լայտութիւն, որ անկարող է հանդուրժել որ-
ևէ առարկութեան: Նա մօղայի հետևող էր,
սիրում էր պճնուած երևալ, բայց մօտալուտ
մահուան պատճառով, թողել էր ամեն ինչ,
դառել էր փինթի, այլ ևս չէր կարդում, չէր
ծիծաղում, բարձրաձայն չէր խօսում ինքն
իրան... Այդ դեռ ոչինչ, մօրաքրոջ հետ ան-
ձամբ գնում է գերեզմանատուն և ընտրում
գերեզմանատեղին, իսկ ծննդաբերութիւնից
հինգ օր առաջ գրում է կտակը: Եւ ի նկատի
ունեցէք, որ այդ բոլորը տեղի է ունենում
այն ժամանակ, երբ նա բոլորովին առողջ էր,

երբ հիւանդութեան և ոչ մի նշան չկար
նորա վրայ: Ծննդաբերութիւնը երբեմն պատ-
ճառում է մահ, բայց նորա վերաբեր-
մամբ, որի մասին ես ասում եմ, երկիւղ
կրելու առիթ չկար. պայմանները բոլորովին
բարեյաջող էին: Ամուսնուն վերջ ի վերջոյ
ձանձրացնում են այդ անվերջ խօսակցութիւն-
ները մահուան մասին և մի անգամ արդէն
նա ճաշի ժամանակ բարկանալով հարցնում է.

— Նստաշան, երբ վերջապէս վերջ կը-
ղնես այդ լիմարութիւններիդ:

— Պա լիմարութիւն չէ. ես լուրջ եմ
ասում:

— Գտտարկ բան է. խորհուրդ կըտալի
քեզ դադարել լիմարութիւններ ասելուց, որ-
պէսդի վերջը ինքդ շամաչես քո ասածներից:

Բայց ահա հասնում են և ազատուելու
օրերը: Ամուսինը հրաւիրում է քաղաքից
ամենալաւ մանկաբարձուհուն: Ծննդաբերու-
թիւնը առաջին անգամն է լինում և նա ա-
զատուում է բոլորովին յաջող կերպով: Երբ
ամեն ինչ վերջանում է, ծննդկանը ցանկու-
թիւն է յայտնում նայել մանկանը, նայում
է և ասում:

— Այժմ արդէն կարելի է մեռնել:

Եւ նա հրաժեշտ է տալիս բոլորին,
փակում է աչքերը ու արդէն կէս ժամից

լետոյ Աստուծուն յանձնում հոգին: Մինչև վերջին րոպէն էլ նա չի կորցնում իւր դիտակցութիւնը. գոնէ, երբ ջրի փոխարէն տալիս են կաթ, նա մեղմ շըշնջում է և ասում.

— Ինչո՞ւ էք ջրի փոխարէն կաթ տալիս:

Այսպէս, ուրեմն, ինչպէս նախազգում էր, այնպէս էլ կատարուեց:

Քննիչը լւեց, խորը սխ քաշեց և ապա ասաց.

— Ահա բացատրեցէք, թէ ինչո՞ւ նա մեռաւ: Հաւատացնում եմ Ձեզ; որ ասածս հնարովի չէ, այլ իսկական փաստ:

Բժիշկը խորհրդածելով նայեց դէպի երկինք:

— Պէտք էր անդամահատել զիակը, ասաց նա:

— Ինչո՞ւ:

— Որպէսզի իմանալ մահուան պատճառը: Նախազգացումից հօ չմեռաւ. ամենայն հաւանականութեամբ թունաւորուել է:

Քննիչը արագութեամբ գործրեց իւր դէմքը դէպի բժիշկը և պլշացնելով աչքերը՝ հարցրեց.

— Ինչո՞ւ էք եզրակացնում, որ նա թունաւորուել է:

— Ես չեմ եզրակացնում, այլ ենթադրում եմ: Սիրով էին ապրում ամուսնու հետ:

— Հրմ... ոչ բոլորովին, թիւրիմացութիւնները սկսուել էին հէնց հարսանիքից լետոյ շատ շուտով, ինչոր մի դժբախտ հանդիպումի պատճառով: Հանգուցեալը մէկ անգամ նկատել էր ամուսնուն ուրիշ կնոջ հետ... Ասենք շուտով գարձեալ ներել էր:

— Իսկ ո՞րն աւելի շուտ էր տեղի ունեցել, ամուսնու գաւաճանութիւնը, թէ մահուան նախազգացումը:

— Թո՛ղ տուէք, պատասխանեց նա միանգամից, թո՛ղ տուէք մտաբերել և նա հանեց գլխարկը ու սրբեց ճակատի քրտինքը: — Այո, այո... նա սկսեց մահուան մասին խօսել հէնց այդ դէպքից լետոյ:

— Ահա, ուրեմն, տեսնո՞ւմ էք... Ամենայն հաւանականութեամբ նա դեռ այն ժամանակ է սրոշած եղել թունաւորուել, բայց որովհետև չի ցանկացել իր հետ սպանել և մանկանը, ուստի և անձնասպանութիւնը լետաձգել է ծննդից լետոյ:

— Հազիւ թէ, հազիւ թէ... Այդ անկարելի է: Նա այն ժամանակ և եթ ներել է:

— Շուտով ներել է, նշանակում է, ուրեմն չար միտք է լղացած եղել: Երիտասարդ կանայք շուտով չեն ներում:

Քննիչը բռնագրօսիկ կերպով ժպտաց և որպէսզի թագցնէ իւր ներքին լուզմունքը, սկսեց ծխել:

— Հազիւ թէ, հազիւ թէ... շարունակեց նա: Իմ մտքով անգամ չէր անցնում, որ կարող է այդպիսի բան լինել... Դէ՛հ ամուսինը այնքան էլ մեղաւոր չէ, որքան թւում է... Գաւաճանութիւնը տեղի է ունեցել բոլորովին տարօրինակ կերպով և ոչ իր ցանկութեամբ: Գալիս է տուն գիշերը ուրախ տրամադրութեան մէջ և ցանկութիւն է ըզգում սիրային փառաքշանքների որևէ մէկի հետ, իսկ կնոջ հետ չէր կարելի... Այդտեղ, սատանան նորան տանի, գէ՛մ է գուշո գալիս նորան մի գատարկ, լիմար, տգեղ կին, որ հըւր էր եկել երեք օրով: Այդ մինչև անգամ չի կարելի դաւաճանութիւն համարել: Կինը, ինքն էլ մատների արանքով էր նայել այդ բանի վրայ և շուտով ներել. իսկ յետոյ այդ մասին խօսք անգամ չէր եղել...

— Մարդիկ առանց պատճառի չեն մեռնում, ասաց բժիշկը:

— Այդ այդպէս է, իհարկէ, բայց այնուամենայնիւ... չեմ կարող ենթադրել, որ նա թունաւորուել է: Բայց զարմանալի է, թէ ինչպէս մինչև այժմ իմ գլխով չէ անցել այդ միտքը... Եւ ոչ ոք չէր կասկածում, բարբե-

քեան զարմացած էին, որ գուշակութիւնը կատարուեց... իսկ թունաւորման մասին խօսք անգամ չկար... Անկարելի է, որ թունաւորուած լինի, ո՛չ, անկարելի է:

Քննիչը ընկղմուեց մտածմունքի մէջ: Կնոջ տարօրինակ մահուան մասին միտքը հանգիստ չէր տալիս նորան և անգամահատութեան ժամանակ: Նշանակելով թղթի մէջ այն, ինչ որ թելադրում էր բժիշկը, նա մտալ կերպով շարժում էր լսնքերը և տրուում ճակատը:

— Մի՞թէ կան այնպիսի թոյներ, որոնք ազդում են կամաց, կամաց, առանց ցաւ պատճառելու, և մի քառորդ ժամուայ մէջ սպանում են մարդուն, հարցրեց քննիչը բըժշկին, երբ նա բաց էր անում գանգը:

— Այո՛ կան, օրինակ մօրֆին:

— Հըմ... տարօրինակ է... լիշու՞մ եմ...

Նա ինչ որ այդպիսի մի բան պահում էր իւր մօտ... բայց հազիւ թէ:

Վերադարձին քննիչը բոլորովին լողնած մարդու արտայայտութիւն ունէր. ջղայնաբար կրճում էր բեխերը և խօսում ակամայ:

— Գնանք մի փոքր ոտով, խնդրեց նա բժշկից, լողնեցի նստելով:

Անցնելով հարիւր քալլ, քննիչը, ինչպէս երևաց բժշկին, բոլորովին թուլացաւ,

կարծես մի բարձր սար բարձրացած լինէր: Նա կանգնեց, տարօրինակ հայեացքը, որ աւելի հարբած մարդու արտայայտութիւն ունէր, ուղղեց դէպի բժիշկը և սասց:

— Աստուած իմ, եթէ ձեր ենթադրութիւնը ճշմարիտ է, այն ժամանակ... այդ չափազանց խիստ է և ամարդի: Թունաւորել է իրան, որպէսզի այդպիսով պատժէ ուրիշին. միթէ այդքան մեծ էր ամուսնու մեղքը: Ա՛խ, Աստուած իմ: Ի՞նչու, բժիշկ, ներշնչեցիք իմ մէջ այդ անիծուած միտքը:

Քննիչը յուսահատութեան մէջ ձեռքերով բռնեց գլուխը և շարունակեց.

— Այդ ես պատմեցի ձեզ իմ կնոջ և իմ մասին: Ա՛խ, Աստուած իմ: Ես մեղաւոր եմ. ես վիրաւորել եմ նորան, բայց միթէ մեռնել աւելի հեշտ է, քան ներելը: Սհա քեզ իսկական կանացի արամադրութիւն՝ դաժան, անողորմ տրամարանութիւն: Օ՛հ, նա դեռ կենդանութեան ժամանակ էլ շատ խիստ էր. այժմ ես մտարերում եմ: Հիմա ինձ համար ամեն ինչ պարզ է:

Քննիչը խօսում էր մերթ թափ տալով ուսերը, մերթ բռնելով գլուխը ավերի մէջ. նստում էր կառք, էլի նորից վեր գալիս և շարունակում ստով գնալ: Բժիշկի հաղորդած նոր միտքը թունաւորել էր նորան, նա կորցրեց

ինքն իրան, բնիճուեց հոգեպէս և ֆիզիքայէս: Աերադառնալով քաղաք, նա բաժանուեց բրժիշկից և հրաժարուեց ճաշից, թէև դեռ նախընթաց օրից խոստացել էր բժիշկին միասին ճաշել:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՐԸ

Այդ պատահում է սովորաբար թղթա-
խաղի մէջ լաւ տարուելուց յետոյ և կամ երբ
խմիչքը առքացնում է կատարը:

Ստեփան Ստեփանիչ Ժիլինը զարթնում
է անսովոր մռայլ տրամազրութեան մէջ:
Նորա թթուած և կարծես արօրուած դէմ-
քը արտայայտում է անբաւականութիւն, որ
ոչ կարելի էր ասել, թէ վերաւորանքի արտա-
յայտութիւն էր և ոչ արհամարանքի: Նա
զանգաղ կերպով հագնում է, խմում է և
սկսում է քայլել սենեակներում:

— Կրցանկանալի իմանալ, թէ այս որ ա-
նասունն է գնում գալիս այստեղով և դռնե-
րը բաց թողնում, փնթփնթում է նա, բար-
կացած խալաթի փէշերը վրայ բերելով և բար-
ձրը խորխելով: — Վերցրէք այս թղթի կտորը,
ինչո՞ւ նա շփրթուած է այստեղ: Քսան ծա-
ռայ ենք պահում և զարձեալ կարգ, — կանոն

չկայ, կարծես զինետուն լինի: Ո՞վ է այնտեղ
զանգահարում, այդ ո՞վ եկաւ:

— Անփիսա տատն է, պատասխանում է
կինը:

— Քաշ են գալիս այստեղ... ձրեակերներ:

— Քեզ չի կարելի հասկանալ, Ստեփան
Ստեփանիչ. ինքդ հրաուիրում ես և յետոյ
հայհոյում:

— Նս չեմ հայհոյում, այլ խօսում եմ:
Աւելի լաւ կըլինէր մի բանով դբազուէք,
քանց այդպէս նստէք ձեռքերդ ծալած և վէճի
բռնուէք: Երգւում եմ պատուովս, ոչ չեմ
կարող հասկանալ այս կանանց, չեմ կարող
թէ ինչպէս նորանք կարողանում են ամբողջ
օրեր անցկացնել անգործ: Մարդը աշխատում
է, չարչարում է, ինչպէս եզ, ինչպէս անա-
սուն, իսկ կինը, կեանքի ընկերուհին, ոչինչ
չի անում, նստում է և սպասում դէպքի,
որ ձանձրութից սկսէ հայհոյել ամուսնուն:
Ժամանակ է թողնել այդ ինտախուտական
սովորութիւնները: Քու այժմ արդէն ոչ ա-
շակերտուհի ես և ոչ ազապ աղջիկ, դու մայր
ես և կին: Երեսդ շուռ ես տալիս, հա՛, հա-
ճելի չէ լսել դառն ճշմարտութիւններ:

— Զարմանալի է, որ դառն ճշմարտու-
թիւններ ասում ես միայն այն ժամանակ,
երբ տաքացած է լինում կատարը:

— Սկսիր օլիններդ, սկսիր...

— Իսկ երէկ եղե՛լ ես քաղաքից դուրս
և կամ թուզթ խաղացե՛լ ես որևէ մէկի մօտ:

— Թէկուզ այդպէս էլ լինի, ո՛ւմ ինչ
գործն է. մի՛թէ ես պարտաւոր եմ հաշիւ
տալ որևէ մէկին, մի՛թէ իմ փողը չեմ տար-
ւում: Այն, ինչ որ ես ծախսում եմ և կամ
միսւում է այս տան մէջ, ինձ է պատկանում,
հասկանում էք:

Եւ այսպէս շարունակաբար, նոյն ոգով:
Բայց ոչ մի ժամանակ Ստեփան Ստեփանիչը
չի լինում այնպէս խոհեմ, բարեացակամ, խիստ
և արգարասէր, որքան ճաշի ժամանակ, երբ
նորա շուրջը նստած են լինում ընտանիքի
բոլոր անդամները: Ամենից առաջ սովորաբար
տրւում է արգանակը: Մի գտալ բերանն առ-
նելուց լեա, Թիլինը լանկարձ կնճուում է և
փայր գնում գղալը:

— Սատանան գիտէ, թէ ինչպէս... փրնթ-
փնթում է նա. երևի հարկ կըլինի ճաշարա-
նում ճաշել:

— Ինչ, մի՛թէ արգանակը լաւը չէ, ան-
հանգստութեամբ հարցնում է կինը:

— Չգիտեմ, ինչպիսի խոզային ճաշակ
պէտք է ունենալ այս սրտոր բմպելիքը խը-
մելու համար: աղի է, ջնջոցի համ է տալիս...
սոխի փոխարէն ինչ որ միջատներ են լողում

մէջը... Աւղղակի վրդովեցուցիչ է. Անֆիսա
Իւանովնա, ասում է նա, դառնալով դէպի
հիւրը: Ամենայն օր տալիս եմ ահագին քա-
նակութեամբ փող մթերքի համար, զրկում
եմ ինձ ամեն բանի մէջ, և ահա ինչով են
կերակրում: Երևի ցանկանում են, որ թողնեմ
ծառայութիւնը և ինքս գնամ խոհանոց կե-
րակուր պատրաստելու:

— Արգանակը այսօր լաւն է... երկչոտու-
թեամբ նկատում է անային դատարակչուհին:

— Այո՛, ձեզ դժուր է զայիս, ասում է Թիլինը
բարկութեամբ լի աչքերը պլշացնելով նօրա
վրա: Ասենք ամեն մարդ առանձին ճաշակ
ունի: Ես և դուք, Վասիլա Վասիլենա,
ընդհանրապէս խիստ գանազանուում ենք ճա-
շակի մէջ. օրինակ, ձեզ դուր է զայիս այս
մանուկը (Թիլինը գէմքի առանձին տհած ար-
տայալուութեամբ ցոյց է տալիս իբր սրգուն
— Փեղիային), դուք սքանչացած էք նորանով,
իսկ ես... ես վրդովում եմ, այն:

Եօթը տարեկան Փեղիան դադարում է
ուտելուց և խոնարհեցնում աչքերը: Նսրա
գաւնաա և վատաուզջ գէմքը աւելի ես գու-
նատում է:

— Այո, դուք սքանչացած էք նորանով,
բայց ես միայն վրդովում եմ... Ա՛յ է մեղա-
նից իրաւացին, չգիտեմ, բայց ես, ինչպէս

նորա հայրը, համարձակուամ եմ ասել, որ ես աւելի լաւ եմ ճանաչում նորան, քան դուք: Նայեցէք, թէ ինչպէս է նստած: Միթէ դաստիարակուած երեխաները այդպէս են նստում: Նստիր ուղիղ:

Ֆեդիան բարձրացնում է կզակը և երկարացնում պարանոցը: Նորան թւում է, թէ ուղիղ է նստած: Նորա աչքերում երևում են արցունքներ:

— Կեր, բռնիր գդալը ինչպէս հարկաւոր է: Սպասիր, անպիտան տղայ: Չհամարձակուիս լաց լինել: Նայիր ինձ վրա ուղիղ:

Ֆեդեան աշխատում է նայել ուղիղ, բայց նորա գէմքը դողում է և աչքերը լըցւում են արցունքներով:

— Ա՛, ա՛, ա՛... լաց ես լինում. դու մեղաւոր ես և դու էլ լաց ես լինում: Գնա՛, կանգնիր անկիւնում, անասուն:

— Բայց... թող գոնէ առաջ ճաշէ, միջամտում է կինը:

— Թող մնայ առանց ճաշի: Այդպիսի անպի... այդպիսի չարերը իրաւունք չունին ճաշելու:

Ֆեդիան ծռում է գէմքը: Նա ամբողջ մարմնով ձգւում է և սողալով ցած իջնում ավտոսից ու գնում գէպի անկիւնը:

— Այդ դեռ քիչ է, շարունակում է ժիլինը: — Եթէ ոչ ոք չի ցանկանում զբաղուիլ քո դաստիարակութեամբ, ա՛ն ժամանակ կը սկսեմ ես... Իմ ներկայութեամբ, չիմար, չես կարող չարութիւն անել և լաց լինել ճաշի ժամանակ. հարկաւոր է գործ անել, հասկանում ես, գործ: Քո հայրը աշխատում է, գու ինքդ էլ աշխատիր: Ոչ ոք չպէտք է ձրի հաց ուտէ: Հարկաւոր է մարդ լինել, մարդ:

— Բաւական է, ի սէր Ասատուծոյ, գիծում է նորան կինը Ֆրանսերէն: — Գոնէ օտարների ներկայութեամբ մի մաշիր մեր կեանքը... Պառաւր բոլորը լսում է և ալժմ, շնորհիւ նորան, ամբողջ քաղաքին լայտնի կըլինի...

— Ես օտարներից չեմ վախենում, պատասխանում է ժիլինը ուսերէն: — Անֆիսա Իւանովնան ինքն էլ տեսնում է, որ ճշմարիտ եմ տտում: Ի՛նչ, քո կարծիքով ես պէտք է գո՛հ լինիմ այս տղայից: Դու գիտես, որքան է նստում նա ինձ վրա: Կամ թէ դու կարծում ես, որ ես փող եմ կտրում և կամ փողը ինձ ձրի են տալիս: Մի լար, լո իր, լսում ես, թէ ոչ, ուզում ես, որ քեզ թափեմ:

Ֆեդիան սկսում է բարձրաձայն հեկեկալ:

— Այ՛, արդէն անտանելի է, ասում է կինը վերկենալով սեղանի մօտից և շփուտելով անձեռոցիկը: — Ոչ մի ժամանակ չես թող-

նում հանգիստ ճաշել: Քո այգ մի կտոր հա-
ցը այտեղս է կանգ առել:

Նա շուռ է տալիս երեսը և, թաշկինակը
դնելով աչքերին, հեռանում է սեղանաձեռնից:

— Վերաւորուեց... փնթփնթում է ժի-
լինը գոռագին ծիծաղելով:— Քնքոյշ է դաս-
տարակուսած... Այդպէս, Անֆիսա Բւանովնա,
այժմ չեն սիրում ճշմարտութիւն լսել... Մենք
ենք մեղաւոր:

Անցնում է մի քանի րոպէ լուսթեան
մէջ: Ժիլինը հայեացք է ձգում ափսէների
վրայ և նկատելով, որ ոչ ոք դեռ ձեռք չէ
տուել արգանակին, խորը հառաչում է ու
լառած նայում դաստիարակչուհու կարմրած
և անհանգստութիւն արտայայտող դէմքին:

— Ինչու չէք ուտում, Վառվառա Վա-
սիլենա, — հարցնում է նա: — Երևի վերաւոր-
ուեցիք, այո... ճշմարիտ խօսքը դուր չի գա-
լիս. ներեցէք, այդպէս է իմ բնաւորութիւնը.
կեղծել չեմ կարող... Միշտ անողորմ կերպով
ասում եմ ճշմարտութիւնը: Սակայն նկատում
եմ, որ իմ ներկայութիւնը հաճելի չէ. ոչ
կարողանում էք խօսել և ոչ ուտել... Ի՞նչ
արած. կ'առէիք և ես կըրգնայի... Ահա գնում եմ:

Ժիլինը վեր է կենում և ուղևորւում
դէպի գուռը: Անցնելով Ֆեդիայի մօտից, որ
դեռ լալիս էր, նա կանգ է առնում:

— Այն բոլորից լեռու, ինչ որ տեղի ու-
նեցաւ այտեղ, դուք ազատ էք, ասում է նա
Ֆեդիային, գլուխը ինքնաբաւահանութեամբ
լեռ շրջելով: — Ես այլևս չեմ խառնուի ձեր
դաստիարակութեան մէջ, լուսնում եմ ձեռ-
քերս. ներողութիւն եմ խնդրում, որ՝ ինչպէս
հայր, անկեղծ կերպով ցանկանալով ձեր բա-
րին, անհանգստացրի ձեզ և ձեր դաստիարա-
կիչներին: Այսուհետև մի անգամ ընդ միշտ
թօթափում եմ իմ վրայից ամեն պատասխա-
նատուութիւն ձեր բախտի նկատմամբ. .

Ֆեդիան սկսում է աւելի բարձր հեկե-
կալ: Ժիլինը ինքնաբաւահանութեամբ շուռ
է գալիս դէպի գուռը և գնում է ննջարան:

Նա պտտկում է քնելու և գարթներով
սկսում է զգալ խղճի խալթոց: Ճաշի վրայ
տեղի ունեցած անցքի վիշողութիւնը ճնշում
էր նորա սիրտը: Նա սկսում է ցուել կնոջը,
որդուն և Անֆիսա Բւանովնային, բայց չա-
փագանց մեծ ինքնատիրութիւնը թոյլ չէր
տալիս նրան անկեղծ լինելու և նա շարու-
նակում էր դարձեալ փքեւի և փրնթփրնթալ...

Միւս ատատօտնա գարթնում է լու-
տրամագրութեամբ և լուացուելիս սկսում է
ուրախ-ուրախ շվշվացնել: Ապա ուղևորւում
է սեղանատուն սուրճ խմելու: Նոր երևալուն

պէս, Ֆեդեան ոտքի է կանգնում և շփոթուած նայում նորա վրայ:

— Զը, ինչ կայ, երիտասարդ, ուրախ ուրախ հարցնում է ժիլինը, նստելով սեղանի:

— Ինչ նորութիւն կ'ասէք, լաւ ես. արի, փոքրիկս, համբուրիը հօրդ:

Ֆեդեան գունատ և լուրջ դէմքով գընում է հօր մօտ և դողգոջուն շրթունքները մօտեցնում նորա թշներին. լեռայ հեռանում է և լուռ նստում իւր տեղը:

Թ Ղ Ն Ա Մ Ի Ն Ե Ր

Սեպտեմբերի մութ գիշերներից մէկում, ժամը տասին մեռաւ գաւառական բժիկ Կիրիլովի միակ որդի վեց տարեկան Անդէլը: Այն ժամանակ, մինչդեռ բժշկի կինը, յուսահատութեան առաջին տագնապի մէջ, չօքել էր մեռած մանուկի մահճակալի առաջ, միջանցքում մի քանի անգամ հնչեց զանգակը:

Ծառաները դեռ առաւօտուանից զիֆտերիտի պատճառով հեռացուած էին տանից, ուստի Կիրիլովը անձամբ զնաց դուռը բանալու: Նա այդ ժամանակ առանց սերտուկի էր. հագին ունէր միայն մի ժիլետ բաց կոճակներով: Նա մինչև անգամ չ'սրբեց թաց երեսը և կարբուլեան թըթուտից այլուած ձեռքերը: Միջանցքում մութ էր. հագիւ կարելի էր նկատել, որ ներս մտնող մարդը միջահասակ էր, ունէր պարանոցին սպիտակ վզնոց,

չափազանց զուճատ դէմքով, այնպէս որ կար-
ծես այդ դէմքի գուճատութիւնից միջանցքը
մի փոքր լուսաւորուեց...

— Բժիշկը տանն է; շտապով հարցրեց
եկուորը:

— Բժիշկը ես եմ, ինչ էք կամենում:

— Ախ, այդ դուք էք, շատ ուրախ եմ,
ասաց եկուորը մթութեան մէջ որոնելով բը-
ժշկի ձեռքը. — շատ, շատ ուրախ եմ. մենք
կարծեմ ծանօթ ենք, — և նա պինդ կերպով
սեղմեց բժշկի ձեռքը իբր ավերի մէջ: — Ես
Աբողիսն եմ... բախտ եմ ունեցել ծանօթա-
նալ ձեզ հետ Գնուզեի մօտ: Ծատ գոհ եմ,
որ ձեզ տանը գտայ... Ի սէր Աստուծոյ, խըն-
դրում եմ չմերժէք ինձ հէնց այժմ միասին
գնալ մեզ մօտ... Կինս վտանգաւոր կերպով
հիւանդացաւ... Ես կառք էլ եմ բերել...

Այցելուի ձայնից և շարժումներից
նկատելի էր, որ նա խիստ լուզուած է, կար-
ծես փախած լինէր հրդեհից և կամ կատա-
ղած շանից: Նորա ձայնը գողում էր. հազիւ
կարողանում էր պահպանել արագ շնչատու-
թիւնը, իսկ ամբողջ խօսուածքի մէջ հնչում
էր ինչ որ մանկական և միևնոյն ժամանակ
ոչ շինծու անկեղծութիւն: Ինչպէս բո-
լոր վախեցածները և կամ շփոթուածները,
նա խօսում էր ընդհատումներով, նախագա-

սութիւնները դուրս էին գալիս կարճ, բայց
և այնպէս դորձ էր ածում շատ աւելորդ բա-
ւեր, որոնք ամենեւին չէին վերաբերում
գործին:

— Ես վախենում էի, թէ ձեզ տանը չեմ
գտնի: Ամբողջ ճանապարհին տանջուել եմ
հոգեպէս... Հազնուեցէք, ի սէր Աստուծոյ, և
դնանք... Ահա թէ բանն ինչու՞մն է: Քալիս
է ինձ մօտ Աղէքսանդր Սիմեօնովիչ Պապչի-
նըսկին, որին կարծեմ դուք ճանաչում էք...
Մենք երկար խօսեցինք... և ապա նստեցինք
թէյ խմելու. լանկարձ կինս մի ճիչ է արձա-
կում և ձեռքը սեղմելով սրտին, լետ է շըր-
ջում աթոռի լենարանի վրայ: Մենք տարանք
նորան դէպի իւր մահճակալը... Ես շփեցի նո-
րա քներակները նաշադրի սպիրտով, ջուր սը-
րսկեցի վերան... բայց նա կարծես մեռած
լինէր... վախենում եմ, որ երակների ընդ-
լայնումն ստացած լինի... նորա հայրն էլ
մեռաւ այդ հիւանդութիւնից...

Կիրելովը լսում էր և լսում, կարծես
ուսներէն հասկանալիս չլինէր:

Երբ Աբողիսը մէկ անգամ էլ լիչեց Պապ-
չինսկու և իր կնոջ հօր մասին ու սկսեց նո-
րից մթութեան մէջ որոնել բժշկի ձեռքը,
բժիշկը ցնցուեց և երկարացնելով իւրաքան-
չիւր բառը, անտարբեր կերպով ասաց.

—Ներեցէք չեմ կարող գալ... Հինգ լոպէ
առաջ... մեռաւ սրգիս...

—Միթէ, մրմնջաց Ասողինը, մի քալ
լետ գնալով:— Աստուած իմ, ինչպիսի վատ
լոպէ պատահեցի ես ալստեղ: Զարմանալի
դժբախտ օր... և ինչպիսի զուգադիպու-
թիւն... կարծես գիտմամբ լինի:

Աբողինը, մի ձեռք գէպի դուռը, ընկըղ-
մուկեց մտածման մէջ, կախ զցելով գլուխը:
Նա տատանուում էր և չգիտէր ինչ անել՝
գնալ, թէ շարունակել խնդրել բժշկին:

—Լսեցէք խնդրեմ, տաքացած ասաց
նա, բռնելով Կիրիլովի թևից:— Ես մտնում եմ
ձեր գրութեան մէջ, ինչ համար էլ ամօթ է,
որ այսպիսի մի լոպէ համարձակուում եմ
գրաւել ձեր ուշադրութիւնը ուրիշ բանի
վրայ, բայց ինքներդ դատեցէք՝ ինչ կարող
եմ անել ես, չէ որ բացի ձեզանից այստեղ
ուրիշ բժիշկ չկայ: Գնանք, ի սէր Աստուծոյ:
Ինչ համար չեմ խնդրում... Հիւանդը ես չեմ:

Տիրեց լուսթիւն: Կիրիլովը շուռ եկաւ և
մի լոպէ կանգ առնելով, իւր դանդաղ քայ-
լերը ուղղեց գէպի դահլիճ: Գտնելով նորա
անհաստատ ու մեքենայական քայլածքից
և այն ցրուած ուշադրութիւնից, որով նա
ուղղեց դահլիճում չվառած լամպի լուսամ-
փոփը և կամ աչքի անցկացրեց սեղանի վրայ

դրած հաստ գիրքը, կարելի էր ենթադրել,
որ նա այդ լոպէին ոչ մի բանի մասին չէր
մտածուում, չկար նորա մէջ ոչ ցանկութիւն
և ոչ որևէ գիտաւորութիւն ու թերևս
արդէն մոռացել էր, որ միջանցքում իրան
օտար մարդ է սպասում: Գահլիճում տիրող
լուսթիւնը և խաւարը աւելի էին սաստիկ-
ցնում նորա ցրուածութիւնը: Այստեղից անց-
նելով իւր առանձնատենեակը, նա այլ ոտը
աւելի բարձրացնում էր, քան հարկաւոր էր
և ձեռքերով շօշափում էր դռները. կարծես
օտար բնակարանում լինէր: Այդ ժամանակ
նորա ամբողջ ղէմքի և կազմուածքի վրայ
նկատելի էր մի տեսակ տորակուսանք. թւում
էր, թէ նա հարբել է կեանքում առաջին ան-
գամ, անձնատուր լինելով այդ նոր զգացու-
թեանը:

Առանձնատենեակի մի պատի վրայովու-
րածուում էր լոյսի մի լայն շերտ: Այդ լոյսը
կարբսլեան թթւուտի և խեժերի ծանր հոտի
հետ գալիս էր ննջարանի կիսաբաց դռնից:
Բժիշկը թեք ընկաւ սեղանի մօտ դրուած
բազկաթուռի վրայ. մի լոպէ քնէածութեանց
աչք ամեց դրքերի վրայ, որ լուսաւորուած
էին ննջարանից թափանցող լոյսով և ապա,
վերկենալով, գնաց ննջարան:

Այստեղ ննջարանում տիրում էր մեռել-
 լային լուսթիւն: Ամեն բան, սկսած ամե-
 նափերջին շիւղից անգամ, գեղեցիկ կերպով
 կարծես պատմում էին մի փոքր սառչ տեղի
 ունեցած ծանր կորստի մասին: Սենեակը պայ-
 ծառ կերպով լուսաւորում էին կամոզի վրայ
 դրուած մեծ լամպը և մի մում, որ բազմաթիւ
 փոքր ու մեծ շիշերն և թղթարկղաների հետ
 աշտանակով դրուած էր աթոռի վրայ: Առ-
 սամուտի մօտ, մահճակալի վրայ պառկած էր
 մանուկը բաց աչքերով: Գէմքի արտալայտու-
 թիւնը զարմանալի էր. նա չէր շարժուում,
 բայց աչքերը կարծես աւելի ու աւելի մըթ-
 նագունում էին և խորը ընկնում: Մահճա-
 կալի սառչ չուքել էր մայրը: Նա իւր գէմքը
 թագցրել էր մանկան անկողնու ծալքերի մէջ
 և ձեռքերը տարածել անշնչացած գիակի
 վրայ: Մանկան նման նա նույնպէս չէր շար-
 ժւում, բայց որքան կեանք էին արտալայ-
 տում նրա մարմնի և ձեռքերի մկանները:
 Ի՞նչ ամբողջ էութեամբ և բոլոր ուժով կպել
 էր նա մահճակալին, կարծես վախենալիս լի-
 նէք կորցնել այն հանգիստ ու լարմար դրու-
 թիւնը, որ վերջապէս լաջողել էր գտնել իւր
 տանջուած մարմնի համար: Վերմակները, փա-
 լաններն և թասերը, այս ու այն կողմ շաղ
 տուած գտալներն ու վրձինները, յատակի

առաջ մեռաւ ձեր որդին, ուրեմն ո՞վ աւելի,
 քան դուք, կարող է ըմբռնել իմ սարսափը:
 Աբողինի ձայնը դողում էր լուզմունքից:
 Այդ դողը և այն տոնը, որով նա խօսում էր,
 աւելի համոզեցուցիչ էին, քան արտասանած
 բառերը: Աբողինը խօսում էր անկեղծ սրտից,
 բայց զարմանալին այն էր, որ ինչ էլ որ ասե-
 լու լինէր, նորա խօսքերը դուրս էին գալիս
 ստան, զգացմունքից դուրի և անտեղի ծաղկե-
 ցրած. այդ խօսքերը կարծես նույնիսկ
 թունաւորում էին բժշկի բնակարանի օդը և
 վիրաւորում մեռնող կնոջը: Աբողինը ինքն
 էլ զգում էր այդ և դրա համար ամեն կերպ
 աշխատում էր փափկութիւն և քնքշութիւն
 տալ ձայնին: Վախենալով անհասկանալի լի-
 նել, նա աշխատում էր համոզել ոչ այնքան
 բառերով, որքան ձայնի անկեղծութեամբ:
 Գեղեցիկ և խորը զգացմունք արտալայտող
 նախադասութիւնները ընդհանրապէս ազդում
 են սառնասիրտ մարդկանց վրայ: Նա, որ բախ-
 տաւոր է և կամ անբախտ, չի կարող
 բաւականութիւն զգալ ալիպիսի խօսքերից:
 Բախտաւորութեան և անբախտութեան ամե-
 նալու արտալայտութիւնը լաճախ լինում է
 լուսթիւնը: Սիրահարները աւելի հասկանում
 են միմեանց, երբ լուռ են: Որեւէ գերեզմա-
 նի վրայ արտասանած կրակոտ և զգացմուն-

քով լի ճառը կարող է միայն ազդել կողմնա-
կի մարդկանց վրայ. մեռածի կնոջ և որդի-
ների վրայ, նա կըթողնէ շատ աննշան
տպաւորութիւն:

Կիրիլովը կանգնել էր և լռում: Աբողինը էլի
մի քանի խօսք ասաց բժշկիների բարձր կոչման,
անձնագոհութեան և այլ բաների մասին:

— Տեղը հեռու է, հարցրեց բժիշկը դա-
ժան կերպով:

— Մտաւորապէս 13-14 վերստ: Զիբրս
շատ լաւն են, բժիշկ, տալիս եմ ազնիւ խօսք
մի ժամուայ ընթացքում տանել ձեզ այնտեղ
և լետ բերել. միմիայն մի ժամուայ ըն-
թացքում:

Աերջին խօսքերը աւելի ներգործութիւն
աբիւ՛ Կիրիլովի վրայ, քան մարդասիրութիւն,
բժշկի կոչում բասերը: Բժիշկը մի բոպէ էլ
մտածեց և ասաց հասաչելով:

— Լաւ, զնանք:

Եւ նա արագ ու հաստատ քայլերով
ուղևորուեց ասանձնասենեակի, որտեղից փոքր
ինչ անց՝ վերադարձաւ երկար սերտուկը հա-
զին: Աբողինը սերտութիւնից չէր կարողա-
նում մի տեղ կանգնել: Նա օգնեց բժշկին հազ-
նելու վերարկուն և միտին դուրս եկան տփնից:

Փողոցում մութն էր, բայց աւելի լոյս,
քան միջանցքում: Այստեղ արդէն պարզ կա-

րելի էր նկատել բժշկի բարձր և փոքր ինչ
կորացած կերպարանքը նեղ ու երկայն միրու-
քով և արծուաքթով. Աբողինը գունատ
էր, մեծ գլխով: Ուսանողական փոքրիկ գը-
սակը հաղիւ ծածկում էր գագաթը: Սպիտակ
վզնոցը լետեւում ծածկուած էր երկար մա-
զերի տակ:

— Հաւատացէք, որ ես կըկարողանամ
զնահատել ձեր մեծահոգութիւնը, ասաց Աբո-
ղինը, բժշկին նստեցնելով կառքի մէջ: Մենք
կըսլանանք արագ: Գու, Լուկա, հօգիս, խըն-
դրում եմ քշիւր ձիերը որքան կարելի է արագ:

Կառքը սլանում էր: Սկզբում ձգւում
էին մի շարք ոչ գեղեցիկ շինութիւններ հի-
ւանդանոցի բակի երկարութեամբ: Ամեն տեղ
մութն էր, միայն հայտնի խորքում ինչ որ
պատուհանից պայծաս լոյս էր թափանցում
ցանկապատի միջով: Երկրորդ յարկի երեք լուսա-
մուտներում լոյսը աւելի դալուկ էր, քան օդը:
Յետոյ կառքը սկսեց սլանալ այնպիսի տեղե-
րով, ուր աւելի թանձր էր խաւարը: Զգալի
էր խոնաւութիւն, լսելի էր ծոռերի մեղմ
սօսափիւնը: Ագռաւները զարթնելով կառքի
աղմուկից, սկսեցին պտպտալ տերևների վրայ
և բարձրացրին սղբալի աղաղակ. կարծես նը-
բանք էլ գիտէին, որ մեռել է բժշկի որդին,
իսկ Աբողինի կինը հիւանդ է: Բայց ահա

սկսեցին մթութեան մէջ առանձին-առանձին նկարուել ծառերն ու թփերը, որոնց մեծ ու սև ստուերները, կարծես նիրհել էին մուլլ լճի մակերևոյթի վրայ: Կառքի անիւները գլորոււմ էին հարթ տարածութեան վրայով: Ագուաւների կլանչոցը արդէն լուում էր խուլ կերպով և շուտով բոլորովին դադարեց:

Ամեռոջ ճանապարհին Կիրիլովը և Աբոգինը համարեա լուռ էին: Միայն մէկ անգամ Աբոգինը խորը հառաչեց և բրթմնջիւնով սասայ.

— Տանջող զրութիւն է. մարդ երբէք այնպէս չի սիրում իւր մերձաւորներին, ինչպէս այն ժամանակ, երբ վառնգ կայ նրանցից զրկուելու:

Սև երբ կառքը հանդարտ անցնում էր գետի միջով, Կիրիլովը լանկարծ ցնցուեց, կարծես վախենալիս լինէր ջրի ցալտումից:

— Թոյլ տուէք ինձ յետ դառնալ տուն, սասայ նա սրտնեղութեամբ: — Կինս բոլորովին մենակ է. զանէ զեզագործին ուղարկէք մօտը:

Աբոգինը լուռ էր: Կառքը օրօրուելով և զբնգզընգացնելով քարերին, անցաւ լճի աւազոտ ափը և սլանում էր գէպի հետուն:

Կիրիլովը սրտնեղութեամբ զիտում էր շուրջը: Աստղերի ազոտ լուսաւորութեան ներքոյ երևում էին գետ նոր անցած ճանապարհը և

վրայ թափուած ջրից գույացած լճակները, սպիտակ շիշը կրային ջրով և վերջապէս ծանր ու խեղդող օդը, այդ բոլորը միախառնուելով ընդհանուր մեռելային տալաւորութիւն էին թողնում:

Բժիշկը կանգ առաւ կնոջ մօտ, ձեռքերը դրեց անդրաժարդիկի գրպանները և գլուխը թեքելով մի կողքի վրայ, հայեացքը ուղղեց գէպի որդին: Նժրա գէմքը արտայատում էր անտարբերութիւն և միայն միբութի վրայ փայլող արցունքներից նկատելի էր, որ նա մի փոքր առաջ լաց էր եղել:

Ննջարանում չէր տիրում այն վանող սարսափը, որ առհասարակ տեղի է ունենում մահուան զէպքերում: Մանուկի մօր դիրքը և բժշկի անտարբեր հայեացքը կրում էին մարգկային վշտի մի այնպիսի արտայայտութիւն, որ ճիշտ չի կարելի ըմբոնել և նկարագրել: Այդ գէպի իրան քաշող և սիրտ շարժող արտայայտութիւնը կազմում է մարդկային վշտի գեղեցիկ տարրը: Նրաժշտութիւնը միայն, կարծեօք, բնգունակ է արտայատելու այդ զգացումը: Գեղեցկութիւն, զգացում էր և տիրող ահսելի լուսութեան մէջ: Կիրիլովը և կինը լուռ էին, նորանք լաց չէին լինում. կորուստի ամբողջ ծանրութեան հետ, նրանք կարծես զգում էին իրանց զրութեան

ողրերգական լինելը: Ինչպէս որ անցել էին իր ժամանակին նրանց կեանքի երիտասարդ տարիները, այնպէս էլ այժմ՝ այս մասնակի հետ, ընդմիջտ կորչում էր զաւակ ունենալու լույսը: Բժիշկը 44 տարեկան էր, բայց արդէն սպիտակահոտեր և ծերի տպաւորութիւն թողնող, իսկ գունատ և հիւանդոտ կիներ 35 տարեկան: Անդրէյը նրանց ոչ միայն միակ, այլ և վերջին որդին էր:

Հակառակ իր կնոջ, բժիշկը պատկանում էր այն մարդկանց թւին, որոնք վշտի ժամանակ կարիք են գգում շարժողութեան: Կանգնելով կնոջ մօտ հինգ ըսպէ, նա անցաւ փոքր սենեակը: Սա կիսով չափ բռնուած էր մեծ ու լայն բազկաթոռով: Այստեղից մտաւ խոհանոց, ուր աղախնու անկողնու և վառարանի մօտ մի փոքր քաշ գալուց լետուլ, նա կռացաւ և փոքր դռնով դուրս եկաւ դէպի միջանցքը:

Այստեղ նա նորից տեսաւ գունատ դէմքը և սպիտակ վզնոցը:

— Վերջապէս, ասաց Աբոգինը ախ քաշելով.— գնանք, խնդրում եմ, և նա մեկնեց ձեռքը դէպի դուռը:

Բժիշկը ցնցուեց, նայեց նօրա՞ վրայ և մտաբերեց...

— Չէ որ արդէն ասել եմ ձեզ, թէ չեմ կարող գալ: Ո՛րքան տարօրինակ է ձեր վարմունքը:

— Բժիշկ, ես անզգայ արձան չեմ, շատ լաւ մտնում եմ ձեր դրութեան մէջ... Խորապէս զգացւում եմ ձեր զժբախտութեամբ, — ասաց Աբոգինը աղերսող ձայնով և ձեռքերը ծալելով կրծքին:

— Չէ որ ինձ համար չեմ խնդրում... Մեռնում է կինս: Եթէ դուք լսած լինէիք նորա ճիշը և տեսած դէմքի արտապայտութիւնը, այն ժամանակ ձեզ համար հասկանալի կըլինէր իմ պնդելը: Աստուած իմ, իսկ ես արդէն կարծում էի, թէ դուք արդէն գնացիք հազնուելու: Բժիշկ, ժամանակը թանգ է, գնանք, խնդրում եմ ձեզ:

— Չեմ կարող գալ, ասաց բժիշկը շեշտելով իւրաքանչիւր բառը, և քալէրը ուղղեց դէպի գահլիճ:

Աբոգինը գնաց նորա լեռակից և բռնեց թւիցը:

— Այս բոպէին ձեզ տանջում է վիշտը, ես այդ հասկանում եմ, ասաց նա աղերսող ձայնով:— Ես չեմ հրաւիրում ձեզ ատամ բժշկելու և ոչ զննութեան, այլ հրաւիրում եմ մարդկային կեանք փրկելու: Ամեն մի կեանք աւելի բարձր է, քան որևէ անձնական վիշտ: Յույց տուէք արիութիւն և անձնագոհութիւն, զոնէ լանուեն մարդասիրութեան:

Աբողիները հանդարտ քայլեց գէպի բժիշկը, ուղղեց գէպի նա իւր սպիտակ փափուկ բուռնցքները և շարունակեց գառնութեամբ ազազակել:

— Խարել է ու գնացել: Ինչո՞ւ համար էր այդ խարէութիւնը, Աստուած իմ: Ինչո՞ւ նա գործադրեց այդ կեղտոտ, խորգախ միջոցը, այդ սատանայական և դիւալին խաղը: Ի՞նչ եմ արել ես նորան, ինչո՞ւ փախաւ:

Արցունքները ցայտեցին նորա աչքերից: Նա շուռ եկաւ մէկ ոտի վրայ և սկսեց քայլել հիւրասենեակում: Այժմ նա չափազանց նմանութիւն ունէր առիւծի: Բժիշկի անտարբեր գէմքի վրայ շարժուեց հետաքրքրութիւն: Նա կանգնեց տեղիցը, ոտքից գլուխ մի հայտացք ձգեց Աբողինի վրայ Ա հարցրեց.

— Թո՛ղ տուէք իմանալ, որտեղ է հիւանդը:

— Հիւանդը, հիւանդը, դառն ծիծաղը երեսին և արտասուելով տապ Աբողինը, շարժելով բուռնցքները: — Նա հիւանդ չէ եղել, նա գործել է ստորութիւն, ցածութիւն, որից աւելի վատը թերևս սատանան անգամ չկարողանար հնարել: Աւարակել է ինձ ձեր յետևից, սրպէս զի ինքը փախչի, փախչի մի ծագրածու, տխմար խարերայի հետ: Օ՛հ Աստուած

իմ, աւելի լաւ կըլնիէր, որ նա մեռնէր: Ես այդ չեմ կարող տանել, ոչ, չեմ կարող:

Բժիշկը ուղղուեց: Նորա աչքերը ճրպճրպացին և լցուեցին արցունքով. նեղ միւրութեամբ ծնօտների հետ շարժուեց աջ ու ձախ:

— Խնդրեմ ասացէք, ի՞նչ է նշանակում այս, հարցրեց նա հետաքրքրութեամբ այս ու այն կողմ նայելով: — Երեխաս մեռած, կինս վշտահար և մեն մկնակ ամբողջ տան մէջ, ես ինքս հազիւ կարողանում եմ ոտքի վրայ կանգնել, երեք գիշեր չեմ քնել... և ի՞նչ ստիպում են ինձ գեր խողալ ինչ որ մի խայտառակ կատակերգութեան մէջ: Չեմ... չեմ հասկանում:

Աբողինը բաց արեց բուռնցքներից մէկը, շարժեց լատակի վրայ մի տրորած տամսակ և կանգնեց նրա վրայ, ինչպէս կանգնում են մի միջատի վրայ, որին ցանկանում են ճղել:

— Եւ ես չէի տեսնում... չէի հասկանում, ասում էր նա պինդ հուպ տուած ատամների միջով և հէնց բիտ տակին շարժելով բուռնցքը: — Չէի նկատում, որ Պասչինսկին գալիս էր մեզ մօտ ամենայն օր. չնկատեցի նոյնպէս, որ նա այսօր փակ կառքով էր և ինչո՞ւ համար էր փակ կառքով: Ո՞րքան լիմար եմ: Բո՛լոր այս ժամանակ Աբողինի գէմքը մի

այնպիսի արտայայտութիւն ունէր, որ կարծես մէկը զիդմամբ կոխել էր սաքի մազոյրը:

— Չեմ... չեմ հասկանում, բրթմնջում էր բժիշկը, թէ ինչ է նշանակում այս: — Չէ որ դա միծաղքէ անձնաւորութեան և մարդկային տանջանքների վրայ: Այդ անկարելի բան է... առաջին անգամն է՛ք որ կեանքումս տեսնում եմ այսպիսի մի բան:

Այդ բոպէին բժշկի դէմքը ունէր բուրթ գարմացական արտայայտութիւն: Կարծես նոր էր հասկանում, որ իրան վիրաւորել են շատ ծանր կերպով: Նա չգիտէր՝ ինչ խօսէր և կամ ինչ անէր: Աւսերը թափ տուեց և ձեռքերը պարզելով, նա թուլացած ընկաւ բազկաթռոխ վրայ:

— Գողարեցիր ինձ սիրելուց և սիրեցիր ուրիշին. Աստուած քեզ հետ, ասում էր Աբողիկը լացակրկնած: Բայց ինչո՞ւ համար էր այդ խաբէութիւնը, այդ ստոր միջոցը, ինչո՞ւ, ինչ էի արել ես քեզ: Լսեցէք, բժիշկ, ասաց նա, մօտ գնալով Կիրիլովին: Գուք ակամայ վկայ եղաք իմ գժբախտութեանը եւ ես չեմ ծածկի ձեզանից ճշմարտութիւնը: Երգւում եմ, որ ես սիրում էի այդ կնոջը ամենաջերմ կերպով, ինչպէս մի ստրուկ: Նորա համար, նորա սիրուն, ես գոհեցի ամեն բան. կրօնուեցի ազգականներիս հետ, թողի ծառայու-

լճի ափում բուսած ուռենիները, որոնք հետըզհետէ անյայտանում էին թանձր խաւարի մէջ: Գէպի աջ տարածւում էր մի դաշտավայր, որ նոյնքան հարթ էր և անսահման, որքան երկինքը: Այդ դաշտավայրի այս ու այն կողմում, հաւանօրէն կիզահագ ճահիճների վրայ, երևում էին աղան կրակներ: Գէպի ձախ՝ ճանապարհի հետ զուգահեռաբար, ձգւում էր բլուրը, ծածկւած մանր թփերով, իսկ բլրի գլխին՝ երկնակամարում անշարժ կանգնել էր մեծ, կարմրուուն կիսալուսինը: Մասախուզը թեթեւ կերպով սքողել էր նրա սկաւառակը, իսկ շրջապատող փոքրիկ ամպերը կարծես պահպանութիւն էին անում, որպէս՝ զի նա չգնայ:

Ողջ բնութեան մէջ զգացւում էր ինչ որ մի բան, որ անյուսալի հիւանդի ազաւորութիւն էր թողնում: Երկիրը նմանում էր մի բնկած կնոջ, որ մենակ փակոււմ է մութ սենեակում և աշխատում է չլիշել անցեալը: Գորնան և ամառձան մտաին յիշողութիւնները տանջում են նրան և նա տհաճութեամբ սպասում է անխուսափելի ձմրան: Ար կողմն էլ, որ նայելու լինիս, բնութիւնը ներկայանում է արպէս մի խաւար և անսահման խոր անդունդ, որտեղից ոչ Կիրիլովը կարող էր գուրս գալ, ոչ Աբողիկը և ոչ կիսալուսինը...

Արքան կառքը մօտենում էր բնակարանին, այնքան անհամբեր էր դառնում Արոզինը: Նա շարժումներ էր գործում, տեղիցը վեր թռչում, շուտ-շուտ կառապանի ուսի վը նայում էր դէպի առաջ: Վերջապէս կառքը կանգնեցաւ պատշգամբի մօտ, որ գեղեցիկ կերպով զարգարուած էր զօլաւոր քաթանով: Արոզինը հայեացքը ձգեց դէպի վերին յարկի լուսաւորուած լուսամուտները և նորա շնչառութիւնը սկսեց արագանալ:

— Եթէ մի բան պատահի, ես չեմ դիմանայ, ասաց նա, բժշկի հետ մտնելով միջանցքը:— Իրարանցում չկայ, ուրեմն ամեն բան դեռ բարեյաջող է, աւելացրեց նա, յուզմունքից շփելով ձեռքերը:

Միջանցքում չէր լսում և ոչ մի ձայն: Չնայելով պայծառ լուսաւորութեանը, ամբողջ տունը կարծես քնած լինէր: Ազատուելով զբռն թանձր խաւարից, բժիշկն ու Արոզինը այժմ միայն կարողանում էին գիտել միմեանց: Բժիշկը բարձրահասակ էր, փոքր ինչ կորացած կազմուածքով և տգեղ դէմքով: Հազնուած էր անմաքուր: Հաստ, նեղբային շրթունքները, արծուանման քիթը և մարած ու անտարբեր հայեացքը կրում էին ինչ որ անհաճելի, ծակող և անհամբուր արտայայտութիւն: Նորա չսանրուած գլուխը, ներս

ընկած բունքերը, մազերի վաղաժամ սպիտակութիւնը, որ նկատելի էր նեղ ու երկար միրուքի վրայ, բաց-մոխրագոյն կաշին և անփոյթ ու կոպիտ ձևերը վկայում էին, որ այդ մարդը իր կեանքի ընթացքում ճաշակել է շատ դատնութիւններ, տարել է նեղութիւններ և այժմ բոլորովին լողնած է կեանքից և մարդկանցից: Նայելով նորա սառն դէմքի վրայ, մտրդ դժուար կաբազ էր հաւատալ, որ այդ մարդը կին ունի և ընդունակ է արասուելու գաւակի վրայ: Արոզինը բոլորովին այլ մարդ էր՝ վայելչակազմ, շիկահեր և մեծ գլխով. գիմագծերը խոշոր էին, բաց դուրեկան. հազնուած էր շքեղ, ամենավերջին մօդայի համաձայն: Նորա քալուածքի և ամբողջ շարժումների մէջ ազնութեան ու անվեհերութեան հոտ էր փչում: Քայլում էր նա գլուխը բարձր բռնած և կուրծքը դուրս ձրգած. ձայնը դուրեկան էր, իսկ ձևերի մէջ նկատելի էր մինչև իսկ կանացի նրբութիւն: Գէմքի վրայ այդ բոպէին դրօշմուած մանկական երկիւղը և ընդհանուր գունատութիւնը չէին խոնդարում նրա ձևերի և կազմուածքի մէջ եղած այն վայելուչ ներդաշնակութիւնը, որ լատուկ է միայն կոշտ, առողջ և ինքնահաւան մարդկանց:

— Մարդ չի երևում և ոչ ձայն է գալիս, —
ասաց նա, բարձրանալով աստիճանները: — Իրա-
րանցում չկայ. տայ Աստուած:

Նա միջանցքից բժշկին առաջնորդեց
դէպի մեծ դահլիճը, ուր մի թիւն էր տալիս
սև գաշնամուրը և աչքի էր ընկնում բազ-
մաստեղեան ջահը, սպիտակ շորում պարու-
րած: Այստեղից անցան հիւրասենեակը, որ
մի փոքր, դուրեկան և գեղեցիկ սենեակ էր.
այնտեղ տիրող վարդագոյն կիսախաւարը հա-
ճելի տպաւորութիւն էր թողնում:

— Նստեցէք այստեղ, բժիշկ, իսկ ես...
իսկոյն. գնամ տեսնելու և նախազգուշացնելու:

Կիրիլովը մնաց մենակ: Սենեակի ճոխու-
թիւնը, հաճելի կիսախաւարը և նոյն իսկ ան-
ճանօթ, օտար տան մէջ լինելը, որ աւելի
արկածի բնաւորութիւն էր կրում, ըստ եր-
ևոյթին մի առանձին ներգործութիւն չարին
նորա վրայ: Նա նստել էր բազկաթոռի վրայ
և դիտում էր կարբուրով այրուած իւր ձեռքե-
րը: Աչքի տակով միայն նկատեց բաց կար-
մրագոյն լուսամփոփը և վիօլենչելի արկղը,
իսկ թեքուելով դէպի այն կողմը, ուր խփում
էր ժամացույցը, նա նկատեց գալիխրաուելակը,
որ նոյնքան կոշտ, լիքը և ինքնագոհ տպա-
ւորութիւն էր թողնում, ինչպէս ինքը տէրը:

թիւնը և երաժշտութիւնը: Ներում էի նո-
րան այն բոլորը, ինչ որ չէի կարողանում
ներել մօրս, կամ քրոջս... Ոչ մի անգամ
ճուռը չեմ նայել նորա վրայ... ոչ մի անգամ
առիթ չեմ տուել: Ինչո՞ւ համար էր այս
խաբէութիւնը: Չեմ պահանջում սէր. բայց
ինչո՞ւ խաբել այսպէս գարշելի կերպով: Չես
սիրում, ասո՞ւ պարզ և ազնուութեամբ, մանա-
ւանդ որ դիտես իմ հայեացքները այդ մասին...

Արցունքը աչքերին և ամբողջ մարմնով
զողալով, Աբոգինը անկեղծութեամբ բաց էր
անում իւր սիրտը բժշկի առաջ: Նա խօսում
էր կրակոտ կերպով, սեղմելով երկու ձեռքերը
սրտին: Առանց նոյն իսկ փոքրիկ տատանման,
նա մերկացնում էր իւր ընտանեկան գաղտ-
նիքները: Նա կարծես մինչև անգամ ուրախ
էր, որ վերջապէս այդ գաղտնիքները դուրս
թռան իւր կրծքից: Խօսէր նա այդ կերպով
մի ժամ, երկու ժամ, բաց անէր սիրտը և
անկասկած կըզգար թեթեւութիւն ու թերևս
բժիշկին էլ, ինչպէս այդ լաճախ պատահում
է, լսելով նորան, բարեկամաբար կը զգացուէր
նորա գժբախտութեամբ, կը հաշտուէր իւր վըշ-
տի հետ, առանց բողոքելու, առանց աւելորդ
յիմարութիւններ անելու: Բայց պատահեց հա-
կառակը: Մինչդեռ Աբոգինը խօսում էր, վի-
բաւորուած բժիշկը նկատելի կերպով փոխուեց:

Անտարբերութիւնը և զարմանքը նորա դէմ-
քի վրայ կամաց, կամաց տեղի տուին զայրոյ-
թի, բուռն բարկութեան և դառն վիրաւո-
րանքի արտայայտութեան: Նորա դիմագծերը
դարձան աւելի ծակող և անդուրեկան: Աբո-
գինը մօտեցրեց նորան երիտասարդ կնոջ պատ-
կերը, որի գեղեցիկ, բայց սառն ու անանձին
արտայայտութիւնից զուրկ դէմքը նմանա-
թիւն ունէր միանձնուհու: Երբ նա նկատեց, որ
թէ նայելով այս դէմքի վրայ, կարելի էր են-
թագրել, որ նա ընդունակ էր այսպիսի մի
ստորութեան, բժիշկը չանկարձ վեր թռաւ,
աչքերը բացավառուեցին և ասաց կոպիտ կեր-
պով շեշտելով իւրաքանչիւր բառը:

— Ինչու էք պատմում ինձ այդ բոլորը:
Ձեմ ցանկանում լսել, ո՛չ, չեմ ցանկանում,
գոռաց նա, բռունցքով խփելով սեղանին: —
Ինձ պէտք չեն ձեր ստոր գաղտնիքները. սա-
տանան նրանց տանի: Չհամարձակուիք պատ-
մել ինձ այդպիսի ստոր բաներ: Գուցէ դուք
կարծում էք, որ դեռ բաւականին վիրաւոր-
ուած չեմ. ինչ, ես ծառայ եմ, որին մինչև
վերջ կարելի է վիրաւորել. հա:

Աբոգինը մի քալ լետ գնաց Կիրիլովից և
զարմացած հայեացքը յառեց նորա վրայ:

— Ինչու դուք ինձ բերիք այստեղ, շա-
րունակեց բժիշկը տըմբալմբացնելով միւրուքը: —

Ինձ ինչ, եթէ դուք ճարպի շատութիւնից
ամուսնանում էք, կատաղում էք, խաղում
էք մելօզրամաներ: Ի՛նչ ընդհանուր բան կա-
րող է լինել իմ և ձեր բոմանների մէջ: Թո-
ղէք ինձ հանգիստ: Վարժուեցէք ազնիւ
բունամարտութեան մէջ, ցոյց տուէք ձեր
մարդասիրական զազափարները, նուագեցէք
կոնզերաբասի և տրոմբոնի վրայ (բժիշկը խեթ
աչքով նայեց վեօլենչելի արկղին) պարարտա-
ցէք ինչպէս աքաղաղ, բայց միք համարձակուի
ծաղրել ուրիշի անձնաւորութիւնը: Եթէ չէք
կարող յարգել նորան, գոնէ ազատ թողէք
ձեր ուշագրութիւնից:

— Խնդրեմ, ինչ է նշանակում այդ, հար-
ցրեց Աբոգինը կարմրելով:

— Այն է նշանակում, որ ստորութիւն է,
ցածութիւն է այդպէս խաղալ մարդկանց հետ:
Ես բժիշկ եմ: Բժիշկներին ու ընդհանրա-
պէս, բանւորներին, որոնք հեռու են դուխի
գործածելուց և պառնիկ կեանքից, դուք հա-
մարում էք ձեր ծառաները և համարեցէք, բայց
ոչ ոք իրաւունք չէ տուել ձեզ այդպէս վար-
ուել մի տանջող մարդու հետ:

— Ի՛նչպէս էք համարձակուում ասել ինձ
այդ, հարցրեց Աբոգինը ցածր ձայնով և նո-
րա դէմքը նորից այլալուեց, բայց այս ան-
գամ արդէն բարկութիւնից:

— Իսկ դուք գիտենալով իմ վիշաքը, ինչպէս
 Համարձակուեցիք բերել ինձ այստեղ ստոր ար-
 կածների պատմութիւն լսելու, բացականչեց
 բժիշկը, նորից բռունցքով խփելով սեղանին:
 — Ո՞վ տուեց ձեզ իրաւունք այդպէս ծաղրել
 օտարի վշտերը:

— Դուք խելագարուեցիք, աղաղակեց Ա-
 բրոգինը:

— Դա վեհանձնութիւն չէ: Ես ինքս սաս-
 տիկ գժբախտ եմ և... և...

— Դժբախտ, արհամարական ձայնով և դառն
 ժպիտով ասաց բժիշկը: — Միք գործածի այդ
 բռնը, նա ձեզ չի յարմարուում: Անպիտան մար-
 դիկ էլ, որոնք չեն կարողանում մուրհակով
 փող վերցնել, իրանց անբախտ են համարում:
 Աքաղաղն էլ, որ տանջուում է ճարպի շատու-
 թիւնից՝ անբախտ է: Չնչին մարդիկ:

— Պարոն, դուք մոռանում էք, որ այդպի-
 սի խօսքերի համար... մարդկանց թակուում են,
 հասկանում էք, գոռաց Աբրոգինը:

Աբրոգինը շտապով ձեռքը տարաւ գրպանը
 և դուրս հանելով քսակից երկու թղթաղբամ,
 շփուտեց սեղանի վրայ:

— Ահա՛ ձեզ ձեր այցելութեան վճարը,
 ասաց նա թժածակերը շարժելով: — Ձեզ ար-
 դէն վճարուած է:

— Չհամարձակուիք ինձ փող առաջարկել,
 աղաղակեց բժիշկը սեղանի վրայից դէն շփուտե-
 րով թղթաղբամները: — Աիրաւորանքը փողով
 չի վերացուում:

Աբրոգինն ու բժիշկը կանգնել էին իրար
 դիմաց և բարկութեամբ լցուած՝ շարունա-
 կում էին վերաւորել միմեանց անվայել խօս-
 քերով: Թերևս կեանքի մէջ և մինչև անգամ
 զառանցելիս, նրանք ասած չլինէին այնքան
 անարգար, կծու և անտեղի խօսքեր, ինչպէս
 այժմ: Երկուսի մէջ էլ խօսում էր վերաւոր-
 ուած մարդու ետսիրութիւնը: Իժբախտները
 լինում են՝ եսական, չար, անարգար, դաժան և
 աւելի քան լիմարները, անընդունակ միմեանց
 հասկանալու: Անբախտութիւնը ո՛չ թէ միաց-
 նում է մարդկանց, այլ հեռացնում: Մինչև ան-
 գամ այնտեղ, ուր միատեսակ վիշտը ըստ եր-
 ևոյթին պէտք է կապէր նրանց, բնդհակասակը
 աւելի անարգարութիւններ և խտտութիւններ
 են տեղի ունենում, քան իրենց վիճակից գոհ
 մարդկանց շրջանում:

— Բարեհաճեցէք ինձ ճանապարհ գցել
 դէպի տուն, գոռաց բժիշկը շունչը կտրուելով:

Աբրոգինը ուժգին հնչեցրեց զանգակը,
 բայց ոչ ոք չերևեցաւ: Նա նորից հնչեցրեց
 և բարկութիւնից այս անգամ զանգակը շփու-
 տեց լատակի վրայ: Երկար լսելի էր նրա զրնգ-

զբնագոցը, որ կարծես մահամերձ հիւանդի հա-
ռաչանքի ձայն լինէր: Երեւեցաւ սպասաւորը:

— Ո՛ւր էիք կորել, սատանան ձեզ տանի,
բարկացած յարձակուեց նորա վրայ Աբողինը
սեղմելով բռունցքները:— Ո՛րտեղ էիր այս
բողէիս: Գնա՛, առա՛, որ շուտով այս պարոնի հա-
մար լծեն բաց կառքը, իսկ ինձ համար փակ
կառքը: Կո՛ց, աղաղակեց նա, երբ սպասաւորը
շուռ եկաւ գնալու:— Վաղը, որպէս զի ոչ ոք
դաւաճաններէցդ չմնայ այստեղ,— վաղը կը
վարձեմ նորերին: Իսկ այժմ, դուրս բոլորե-
քեանք էլ, անպիտաններ:

Մինչև որ կը լծէին կառքերը, Աբողինն
ու բժիշկը երկուսն էլ լուռ էին: Աբողինի
դէմքը արդէն ստացաւ իր նախկին արտայա-
տութիւնը, որ կուշտ և հեշտասէր մարդու
տպաւորութիւն էր թողնում: Նա քայլում էր
հիւրասենեակում, վայելուչ կերպով շարժում
էր գլուխը և ինչպէս երևում էր խորհում
էր ինչ որ բանի մասին: Նորա բարկութիւնը
դեռ ևս չէր անցել, բայց նա աշխատում էր
այնպէս ցոյց տալ, որպէս թէ չի նկատում
թշնամուն: Բժիշկը կանգնել էր մի ձեռքով
յետուելով սեղանի ծայրին և նայում էր Աբո-
ղինի վրայ մի այնպիսի խորին և ցինիֆական
արհամարանքով, որպիսի հայեացքով, կարող են
նայել միայն վիշտն ու անբախտութիւնը, երբ

տեսնում են իրանց առաջ որեւէ կուշտ և հեշ-
տասէր անձնաւորութիւն:

Մի փոքր լետոյ բժիշկը նստեց կառք և
ճանապարհ ընկաւ: Նորա աչքերը դեռ շա-
րունակում էին նայել արհամարանքով: Մութն
էր, աւելի մութ, քան մի ժամ առաջ: Կարմ-
րաւուն կիսալուսինը արդէն ծածկուել էր բլրի
լետեր և նրան պահպանութիւն անող ամպե-
րը, որպէս մութ բծեր, տարածուել էին աստ-
ղերի շուրջը: Կարմիր լապտերներով փակ
կառքը գրնգրնգացնելով քարերին առաջ
անցաւ: Նրա մէջ նստած էր Աբողինը, որ
գնում էր բողոքելու, լիմարութիւններ գոր-
ծելու...

Ամբողջ ճանապարհին բժշկի մտածողու-
թեան առարկան Աբողինն էր և նրա տան մէջ
ապրող մարդիկ: Նա մինչև անգամ մոռացել էր
կնոջը և Սնգրէին: Նորա մտքերը անարդար-
էին և խիստ մինչ այն աստիճան, որ անվայել
է մարդուն: Գտապարտում էր նա Աբողինին,
և նրա կնոջը, և Պասչինսկուն ու բոլոր այն
մարդկանց, որոնք ապրում էին այն վտրդագոյն
կիսախաւարի և անուշահոտ բուրմունքով լի
տան մէջ: Ամբողջ ճանապարհին նա, մինչև
սրտի խորքը, զգում էր ատելութիւն և արհա-
մարանք դէպի նորանց: Նորա սեղեղում կազ-
մուեց խորը համոզմունք այդ մարդկանց մասին:

Կանցնի ժամանակ, կը մոռացուի Կերելովի վիշտը, բայց այդ անարդար, մարդկային խղճին ու սրտին անվայել համոզմունքը չի անհետանայ և կը մնայ բժշկի ուղեղում նոյն իսկ մինչև գերեզման:



Ա Պ Օ Ր Ի Ն Ի Զ Ա Ի Ա Կ

Կալեթսկի ասեսոր Միգուևը իբր երեկոյեան զբօսանքը կատարելիս, կանգ առաւ հեռագրական սեան մօտ և խորը անքաշեց: Ինքանից մի շաբաթ առաջ, հէնց նոյն այդ տեղը, երբ նա զբօսանքից վերադառնում էր դէպի տուն, նորան կանգնեցրել էր իւր նախկին աղախին Ադնեան և ասել կատաղութեամբ:

— Սպասիր, այնպիսի մի բան կըբերեմ քո գլխին, որ դու իմանաս, թէ ինչ է նշանակում անմեղ աղջիկների կուսութիւնը խախտել: Մանկանը քո դուռը կըբերեմ, դատարանը կըզնամ և կնոջդ առաջ էլ ամեն ինչ կըպարզեմ...

Եւ նա պահանջել էր Միգուևից հինգ հազար ռուբլի դնել բանկը իւր անունով: Միգուևը լիշեց այդ, հառաչեց և մինչև սրբոտի խորքը զղջալով, մի անգամ ևս լանդիմանեց իրան այն բոլեական բաւականութեան

համար, որ այժմ պատճառում էր նրան
այնքան հոգսեր և տանջանքներ:

Հասնելով իւր ամառանոցին, Միգուկը
նստեց պառզգամբում հանգստանալու: Ժամը
ուղիղ տասն էր: Ամպերի միջից նայում էր
լուսնի մի պատառ: Փողոցում և ամառանոց-
ների շուրջը չէր երևում և ոչ մի մարդ: Ծե-
րունիները արդէն պառկել էին քնելու, խկ
երիտասարդները դեռ գբօսնում էին անտա-
ռում: Ծխախոտը այրելու համար, նա սկսեց
գրպանների մէջ լուցքի որոնել և լանկարծ
արմունկով դիպաւ ինչ որ մի փափուկ բանի:
Նա շուռ եկաւ և նորա դէմքը միանգամից
ընդունեց մի այնպիսի սարսափելի արտայա-
տութիւն, որ կարծես առաջիե՛ս օձ լինէր տե-
սած: Պատշգամբում հէնց դռան մօտ գրուած
էր մի կապոց. ինչ որ երկարաւուն բան փա-
թաթում էր փոքրիկ վերմակի մէջ: Կապոցի
մի ծայրը փոքր ինչ բաց էր և Միգուկը
կոխելով ձեռքը այնտեղ զգաց կենդանի շունչ:
Սարսափահար նա վեր թռաւ տեղից և լետ
նարեց, ինչպէս մի լանցաւոր, որ աշխատում
է փախչել...

— Բերել վայր է գցել, շըշնջաց նա կա-
տաղութեամբ ատամների միջից սեղմելով բը-
ռունցքները — Ահա նա պառկած է... իմ
ապօրինի գաւակը. ախ, Աստուած իմ:

Ահից, ամօթից և կատաղութիւնից նա
փետացել էր... Ի՛նչ անէր այժմ: Ի՛նչ կ'ատէ
կինս, եթէ իմանայ, ի՛նչ կ'ատեն ծառայողնե-
րը: Նորին գերազանցութիւնը այժմ հաւանօ-
րէն կատակով կըխփէ փորիս, կըփռնչայ և
կ'ատէ. «Շնորհաւորում եմ... հա, հա, հա...
չարածճի Սիմէօն Երաստովիչ, մազերդ ար-
դէն սպիտակել են, բայց...» Բոլոր ամառ-
նոց եկողները այժմ կ'իմանան գաղտնիքս և
թերևո պատուաւոր ընտանիքներում այլ ևս
թող չտան ինձ մուտք գործել: Ընկեցիկների
մտտին գրուած են բոլոր լրագրներում, և այսպի-
սով իմ մինչև այժմ համեստ տնունը կըտա-
րածուի ամբողջ Ռուսաստանում...»

Տան միջին լուսամուտը բաց էր, որտե-
ղից պարզ լուում էր, ինչպէս Աննա Ֆիլիպով-
նան, Միգուկի կինը, պատրաստում էր ընթ-
րիքի սեղանը: Բակում միւսնոյն ժամանակ զը-
ռահ այն կողմը տխուր նուազում էր դռնապան
Նրմալոյը... բաւական էր միայն, որ մանու-
կը զարթնէր և կամ ճչար, և ահա ամբողջ
գաղտնիքը բացուած կըլինէր: Միգուկը
զգում էր շտապելու անյաղթելի ցանկութիւն:

— Շուտով, շուտով... մըմնջում էր նա,
հէնց այս րոպէին, քանի դեռ ոչ ոք չէ նը-
կատել, կըտանեմ մանկանը և կըղնեմ ուրի-
շի պատշգամբի վրայ:

Միգուեւը մէկ ձեռքով վերցրեց կապոցը և հանդարտ ու հաւասար քայլերով դեմեց դէպի փողոց... Նա ամեն կերպ աշխատում էր, որ կասկածելի չերևայ:

— Զգուելի դրուժիւն է, — մտածում էր նա, աշխատելով անտարբեր ձևանալ: — Կալեժսկի ասեսոր և յանկարծ գնում եմ փողոցով այսպիսի մի բան ձեռքիս: Ա՛խ, Աստուած իմ. եթէ մէկը տեսնի և կամ գլխի ընկնի, այն ժամանակ ես կորած եմ... Գնեմ կապոցը այստեղ այս պատշգամբի վրայ... բայց ոչ այստեղ լուսամուտները բաց են և կարող է պատահել, որ մէկը նայելիս լինի: Բայց ուր տանեմ նորան. հա՛, միտս ընկաւ. կըտանեմ վաճառական Մէլիկինի ամառանոցը. հարուստ մարդիկ են և կարեկէց. թերևս շնորհակալ էլ լինին և վերցնեն մանկանը, որպէս որդեգիր:

Եւ Միգուեւը վճռեց տանել և դնել մանկանը անպատճառ Մէլիկինի դռանը, թէև նորա տունը գտանւում էր գաղութի վերջին փողոցի վրայ հէնց գետի մօտ:

«Միայն թէ երեխան չլայ և գուրս չընկնի կապոցից, — ասում էր ինքն իրան կալեժսկի ասեսորը: — Ահա թէ ինչ իսկապէս, շնորհակալ եմ, չէի սպասում. կռանս տակ, ինչպէս թղթակալի նման տանում եմ կենդանի

մարդու, որ ունի նոյն հոգին և զգացմունքները, ինչպէս բոլոր մարդիկ... Եթէ տայ Աստուած և Մէլիկինը վերցնէ նորան որդեգիր, ո՞վ գիտէ, ինչ կարող է գուրս գալ նորանից... թերևս պրօֆեսօր, զօրավար, գրող... չէ՞ որ ամեն բան պատահում է աշխարհում: Այժմ տանում եմ ես նորան կռանս տակ, ինչպէս մի որևէ անպէտք բան, իսկ 30—40 տարուց լետոյ, թերևս հարկ լինի նորա առաջ գլուխ խոնարհեցնել...»

Միգուեւը գնում էր նեղ և դատարկ փողոցով, որ ձգւում էր մի շարք երկար ցանկապատների միջով: Լորինների խիտ և մութ ստուերը տարածուել էր փողոցի վրայ: Միգուեւին յանկարծ սկսեց թուալ, որ ինքը կատարում է մի լանցաւոր և շատ դաժան գործ:

«Եւ իսկապէս, որքան ստոր է իմ արածը, մտածում էր նա: Գորանից աւելի ստոր բան մտքով անգամ չի կարելի անցկացնել... Ինչո՞ւ համար այս անբախտ մանկանը ձգում ենք պատշգամբից պատշգամբ: Մի՞թէ մեղաւոր է նա, որ ծնուել է: Եւ ինչ վատութիւն է արել նա մեզ: Ստահակներ ենք մենք... Սիրում ենք զբօսնել սահնակներով, որոնց ստիպում ենք քաշել անմեղ երեխաներին... Հարկաւոր է միայն խորը ըմբռնել այս գրու-

թեան ահաւելութիւնը: Ես անառակութիւն արի, իսկ երեխային իմ պատճառով սպասում է զառն վիճակ... Աայր կըզգեմ ես նորան Մէլկինների զուանը, իսկ նորանք կ'ուզարկեն նորան պետական գաստիարակիչ տունը, ուր բոլորեքեան օտար են. ոչ փաղաքշանք, ոչ սէր և ոչ գգուանք... Յետոյ կըտան նորան կօշկակարի... այնտեղ կըսովորի հարբել, հայհայել և վերջը կըմեռնի քաղցածութիւնից... Կօշկակար, չէ որ նա Կալէժսկի ասեսորի որդի է, ազնիւ արիւնից...»

Լորենինների տարածած ստուերները վերջացան և Միգուէրը դուրս եկաւ ճանապարհը, որ լուսաւորուած էր լուսնի լուսով. նա լետ տարաւ կապոցի մի ծայրը, որպէսզի գիտէ մանկանը:

— Քնած է, շըշնջաց նա:— Տեսնո՞ւմ ես անպիտանի քիթը սապատաւոր է, նման հոր քիթին: Քնած է և չի զգում, որ իր վրայ նայում է հարազատ հայրը... քեզ հետ, եղբայր, կատարում է դրամա... Ղէհ, ինչ արած, ներքը եզրայր... Երևի այգայէս էր գըրուած ճակատիդ...

Կալէժսկի ասեսորը ճղճպացրեց աչքերը. նա զգաց, որ թշերի վրայով ինչ որ բան է սողում, նման մըջիւնի... Նա ծածկեց մանկան երեսը, գրեց կուան տակը և քայլեց գէ-

պի առաջ: Ամբողջ ճանապարհին, մինչև Մէլկինի ամառանոցը, նորա գլխում խճճուել էին զանազան սոցիալական հարցեր, իսկ կրծքի վանդակում հանգիստ չէր տալիս խղճի ձայնը:

«Եթէ լինէի ես ազնիւ մարդ, մտածում էր նա, կը թքէի այդ բոլորի վրայ, մանուկը ձեռքիս կը գնայի Աննա Ֆրիլպովնայի մօտ, կը չոքէի նորա տուօջ և կ'ասէի. «Ներքը, մեղաւոր եմ. արն ինձ ինչ որ կամենաս, բայց խնայիր այս անմեղ մանկանը: Երեխաներ չունինք, վերցնենք նորան մեզ երեխայ»: Նա բարի կ'ինէ, կը համաձայնուէր... Եւ այն ժամանակ իմ երեխաս կը լինէր ինձ մօտ... Ախր»:

Նա մօտեցաւ Մէլկինի տանը և տատանում էր, թէ ինչ անէր... Նորա երեւակայուում էր, թէ ինչ անէր... Նորա երեւակայուում էր թէ ինչպէս ինքը նստած կը լինի գահլիճում, լրագիր կարդալիս, իսկ իր մօտ չորեքթաթ կ'անէ սասպատաւոր քթով մանկիկը և կը խաղայ հօր գիշերազգեստի փէշերի հետ: Միևնոյն ժամանակ նորա երեւակայութիւնից չէին հեռանում ծառայակիցների քմծիծաղը, նորին գերագանցութեան փռնչալը և ձեռքերով փօրին խփելը... Խղճի խայթոցը հանգիստ չէր տալիս նորան, իսկ հոգուն տիրել էր թախիճը...

Կալէժսկի ասեսորը զգուշութեամբ գրեց մանկանը պատշգամբի աստիճանի վրայ թափ

տուեց ձեռքը: Նորա դէմքի վրայ, վերեւից ներքև նորից սողացին մըջիւններ...

— Ներքիւր ինձ, եղբայր, անպիտանիս, մըրմնջաց նա: — Վատս մի լիշիւր:

Նա մի քայլ արեց դէպի լետ, բայց իսկոյն մի ճիչ արձակեց և սոսայ վճռողաբար.

— Ե՛հ, ինչ եղել է, եղել. թքած բոլորի վրայ, կը վերցնեմ մանկանը, իսկ մարգիկ, ինչ կ'ուզեն, թո՛ղ ասեն:

Միգուէր վերցրեց երեխին և արագ, արագ քայլեց գէպի տուն:

Թո՛ղ ասեն, ինչ որ կամենան, ասու՛մ էր նա ինքն իրան: — Կըգնամ, իսկոյն կըչոքեմ և կասեմ. «Աննա Ֆիլիպովնա»: Նա բարի կին է, կըհասկանայ ինձ... Եւ մենք երկուսով կըդաստիարակենք երեխին: Եթէ տղայ է, կ'անուանենք Վլադիմիր, իսկ եթէ աղջիկ՝ Աննա... Գոնէ մեր ճերութեան ժամանակ մեզ կըմխիթարէ...

Եւ նա արաւ այնպէս, ինչպէ՞ս վըճուել էր: Աբտասուելով, երկիւղից և ամօթից կուչ գալով, նա ոտ կոխեց իւր տունը. լի յոյսերով և անըմբռնելի ցնծութեամբ նա ուղևորուեց կնոջ մօտ և չոքեց նորա առաջ...

— Աննա Ֆիլիպովնա, ասաց նա հեկեկալով ու դնելով երեխին յատակի վրայ: — Մի հրամայիր ինձ պատժել, այլ շնորհ արա ինձ

լսելու... Մեղաւոր եմ, սա իմ զաւակն է... Յիշու՛մ ես Ազնիւշալին, ահա սա նորանից է... Սատանան ինձ մոլորեցրեց...

Եւ ամօթից ու երկիւղից իրան կորցնելով, նա շտպասեց պատասխանի. վեր թռաւ և ճեծուածի նման վագեց գէպի դուրս մաքուր օդ ծծելու...

Կըմնամ այստեղ դռանը, մինչև որ ինքը կըկանչէ. ժամանակ կըտամ նրան ուշքի գալու և մտածելու...

Գոնապան Երմուլայը նուազելու գործիքը ձեռքին՝ անցաւ մօտովը, նայեց նորա վրայ և թափ տուեց ուսերը... Մի բուպէից լետոյ նա նորից անցաւ նորա մօտով և կրկին թափ տուեց ուսերը...

— Ա՛յ քեզ բան, հիմա եկ ու խղճա, մըրթմըրթաց նա ծիծաղելով: — Բիչ առաջ, Սիմէօն Երաստիչ, եկաւ այստեղ լուացարար Ակսենեան. լիմաբը իւր երեխին դրեց փողոցի պատշգամբի վրայ և մինչդեռ այստեղ ինձ մօտ նստած էր, չգիտեմ ո՞վ է վերցրել և տարել երեխին... Ա՛յ քեզ օլին:

— Ի՞նչ, ինչ ես ասում, գոռաց Միգուէրը: Երմուլայը այլ կերպ հասկանալով աղալի բարկութիւնը, ծոծրակը քորեց և անքաշեց:

— Ներեցէք, Սիմէօն Երաստիչ, ասաց նա. — այժմ ամառ ային ժամանակ է... առանց դորան չի կարելի... այսինքն առանց կնոջ...

Եւ նայելով աղաչի լայն բացած ու չարահամութեամբ և զարմանքով լի աչքերին, նա, յանցաւորի նման կռնչաց և շարունակեց:

— Իհարկէ մեղք բան է, բայց ինչ կարող ես անել... Գուք չէիք հրամայել, որ օտար կանաց չթողնենք բազը: Առաջ, երբ այստեղ Ագնիւշան էր լինում, նա օտարներին չէր թույլ տալիս, որովհետեւ իրանն ունէր, իսկ այժմ, ինչպէս տեսնում էի, առանց օտարների չի կարելի... Եւ ճշմարիտ է Ագնիւշի ժամանակ անկարգութիւններ չէին լինում, որովհետեւ...

— Կորիք, անպիտան, գողաց նորա վրայ Միգուլեր, ոտքերը գետնին խփելով և մտաւ սենեակ:

Աննա Փիլիպովնան ապշած և զայրացած նստած էր միւսնոյն տեղը և չէր հեռացնում մանուկից արտասուլաթոր աչքերը...

— Ես կատակ արի, մըրթմըրթաց գունատուած Միգուլեր բերանը ծոկելով և ժպիտը երեսին: — Ես կատակ արի, դա իմ երեխան չէ, այլ... լուացարար Ակսինեայինը: Ես... ես կատակ արի... տար յանձնիր գոնապանին:

ԱՔՍՈՐԱՆՔԻ Մէջ

Գետի ափին, խարուկի շուրջը, նստել էին ծերունի Սիմէօն Տօլկովը և մի երիտասարդ թուրք, որի անունը ոչ ոք չգիտէր: Մնացած երեք ընկերները խրճիթումն էին: Սիմէօնը վաթսուն տարեկան մի ծերունի էր. նիհար, ատամները թափած, բայց լայնաթիկունք և տեսքով առողջ մարդու տպաւորութիւն թողնող: Նա հարբած էր. վազուց արդէն զնացած կըլինէր քնելու, բայց արագի շէշը գրպանումն էր և վախում էր չլինի թէ ընկերները խրճիթում արող խնդրեն իրանից: Թուրքը հիւանդ էր և նեղուած էր: Փաթաթուկելով իջր ցնցոտիների մէջ, նա պատմում էր, թէ սրբան լաւ էր Սիբիրսկի նահանգում և թէ ինչպէս գեղեցիկ ու խելացի

կին ունի տանը: Նա քսան և հինգ տարեկանից աւել չէր լինի, բայց խարոյկի լուսաւորութեան տակ նորա գունատ, տխուր և հիւանդոտ արտայայտութեամբ դէմքը բոլորովին երեխայի տպաւորութիւն էր թողնում:

— Իհարկէ այստեղ դրախտ չէ՞, — ասում էր ծերունին: — Ինքդ տեսնում ես՝ ջուր, լերկ ափեր, շուրջը կաւ և ուրիշ ոչինչ... Չատիկը արդէն վաղուց անցել է, իսկ գետի վրայ դեռ ևս սառույց կայ. հէնց այսօր առաւօտեան ձիւն եկաւ:

— Վատ է, վատ, ասաց թուրքը և վախեցած լետ նայեց:

Տասը քայլ հեռու հոսում էր պղտոր գետը. նա հառաչում էր, սաստկութեամբ խփում էր կաւային անհաւասար ափերին և արագ գլորւում դէպի հեռուն, հեռաւոր ծովը: Հէնց ափի մօտ միտին էր տալիս մեծ լաստը, որին թիավարները «կարբաս» էին անուանում: Հեռու միւս ափի վրայ օձանման պտոյտներով երևում էին կրակներ, որոնք մերթ հանգչում էին և մերթ բոցավառւում. այդ անցեալ տարուայ խոտն էին այրում: Կրակներից այն կողմ դարձեալ տիրում էր խաւար: Լսելի էր, թէ ինչպէս սառույցի կրտորները զարնւում էին լաստին: Յուրտ և խոնաւ գիշեր էր...

Թուրքը նայեց դէպի երկինք: Այստեղ աստղերը նոյնքան շատ են, որքան հայրենիքում. նոյն խաւարը շուրջը, բայց կարծես ինչ որ բան պակասում, է: Հայրենիքում, Սիբիրսկի նահանգում բոլորովին այսպէս աստղեր չեն և ոչ այսպիսի երկինք:

— Վատ է, վատ, կրկնեց թուրքը:

— Կը սովորես, ասաց ծերունին ծիծաղելով: — Այժմ դու դեռ ջահել ես, կաթի համը դեռ բերանումդ է: Գուր կարծում ես թէ քեզանից անբախտ մարդ չկայ աշխարհում, բայց կըզայ ժամանակ, որ ինքդ կասես. «Փառք Տիրոջը, ես գոհ եմ իմ վիճակից»:

Նայիր ինձ վրայ: Մի շաբաթից յետոյ ջուրը կը քչանայ և դուք կըզնաք շրջագայելու Սիբիրի զանազան կողմերը, իսկ ես կըմնամ այստեղ և կըսկսեմ մի ափից դէպի միւս ափը գնալ, գալ: Արդէն քսաներկու տարի է, որ զօր ու գիշեր այս գործով եմ պարապում: Ես ջրի երեսին: Փառք Աստուծոյ. ինձ ոչինչ հարկաւոր չէ, ես գոհ եմ իմ վիճակից:

Թուրքը մի փոքր ցախ աւելացրեց կրակին, պառկեց խարոյկին աւելի մօտ և ասաց.

— Հայրս հիւանդոտ մարդ է. երբ նա մեռնի, մայրս և կինս կըզան այստեղ. խոտացել են:

— Ինչիդ են պէտք մայրդ և կինդ, հարցրեց ծերունին:— Իրանք լիմարութիւն են, եղբայր: Սատանան է քո սիրտն ու հոգին պղտորում. մի լսիր այդ անիծածին, երես մի տար նորան: Երբ նա լիշեցնում է քեզ կանանց և կամ ազատ կեանքի մասին, դու հակառակուիք, ոչինչ հարկաւոր չէ՝ ոչ հայր, ոչ մայր, ոչ կին, ոչ ազատ կեանք և ոչ հայրենական օջախ. ոչինչ հարկաւոր չէ, խոցոտիր սատանայի հոգին:

Ծերունին արողի շիշը տարաւ դէպի բերանը և շարունակեց:

— Ես, եղբայր, հասարակ գիւղացի չեմ, ես տիրացուի որդի եմ և երբ Կուրսկում ազատ ապրում էի, հագնում էի սերտուկ, իսկ այժմ կարող եմ մինչև անգամ մերկ պառկել գետնի վրայ և խոտ ծամծամել: Ես գոհ եմ իմ վիճակից: Ինձ ոչինչ հարկաւոր չէ, ես ոչ ոքից չեմ վախում և ինձ թւում է, թէ ինձանից աւելի հարուստ ու ազատ մարդ չկայ աշխարհում: Երբ ինձ Ռուսաստանից աքսորեցին այստեղ, ես հէնց առաջին օրուանից սկսեցի յամառողել: Սատանան լիշեցնում էր ինձ կնոջս, հայրենիքիս, ազատ կեանքի մասին. իսկ ես ասում էի, թէ ինձ ոչինչ հարկաւոր չէ: Յամառողեցի իմ ասածի վրայ և ահա, ինչպէս տեսնում ես, լաւ եմ

ապրում, չեմ գանգատուում: Ով գէթ մի անգամ երես կըտայ սատանին և կըլսէ նորան, նա կորած է, նորա համար չկայ փրկութիւն. մինչև կոկորդը կըխրուի ճահճի մէջ և այլևս չի կարողանայ դուրս գալ այնտեղից: Ոչ միայն, եղբայր, լիմար գիւղացիս, այլ և ազնուականները ու ուսումնականներն էլ են կորչում: Տասնուհինգ տարի սրանից առաջ, Ռուսաստանից այստեղ աքսորեցին մի ուսումնական պարոնի: Եղբայրների հետ ինչ որ անհամաձայնութիւններ էր ունեցել և կըտակի մէջ ինչ որ կեղծիք մտցրել: Ասում էին, որ իշխանական, բարոնական տանից է. ո՞վ գիտէ, գուցէ և հասարակ աստիճանաւոր էր: Գալով այստեղ, նորա առաջին գործն եղաւ գնել Մուխորտինում տուն և հող: «Ցանկանում եմ, ասում էր, սեփհական աշխատանքով և ճակատի քրտինքով ապրել, որովհետեւ ես այժմ այլևս ազատ քաղաքացի չեմ, այլ աքսորական»: Ինչո՞ւ չէ, Աստուած տայ, լաւ գործ է, ասում եմ ես: Նա այն ժամանակ գեռ երիտասարդ էր, վառվռուն և եռանդոտ: Ինքը հնձում էր, երբեմն գնում էր ձուկ որսալու, վաթսուն վերստ ձիով էր ճանապարհ էր գնում: Միայն ահա թէ դըժբախտութիւնը ինչու՞մն էր. հէնց առաջին տարուանից, նա սկսեց գնալ գալ Գիրինօի

փոստատունը: Պատահում էր, որ երբեմն կանգնում էր լաոտի վրայ և հառաչում: «Է՛հ Սիմէօն, ասում էր նա, վաղուց է, որ տանից փող չեն ուղարկում»: Ինչի՞ք է հարկաւոր փողը, Վասիլ Սերգէիչ, ասում եմ նորան: Թողէք հինը, մոռացէք անցեալը, որ կարծես բոլորովին գոյութիւն ունեցած չլինի և ապրեցէք նոր կեանքով: Միք լսիլ սատանային, նա ձեզ գէպի բարին չի տանի, ծուղակը կը կըզցէ: Այժմ դուք փող էք ցանկանում, իսկ կ'անցնի մի փոքր ժամանակ և յետոյ, ո՞վ գիտէ, թէ ինչ կըրանկանաք: Եթէ ցանկանում էք բախտաւոր լինել, ամենից առաջ աշխատեցէք պահանջներ չունենալ: Այո... ասում եմ, քանի որ բախտը մեզ երկուսիս այսպէս դառն կերպով պատժել է, ուրեմն կարիք չկայ մինչև ծունկը խոնարհուիլ և նրանից ողորմութիւն հայցել. հարկաւոր է արհամարել նրան, ծիծաղել նրա վրայ, ապա թէ ոչ, նա ինքը կըծիծաղի մեզ վրայ... Անցաւ երկու տարի: Մէկ անգամ անց եմ կացնում նորան միւս սփը. նա շատ ուրախ էր, շփում էր ձեռքերը ու ծիծաղում: «Քրնում եմ Գիրինօ գիմաւորելու կնոջս», ասում էր նա. լաւ և բարի կին է, խղճացել է ինձ և գալիս է թեթեացնելու իմ դառն վիճակը: Մի օր անցաւ. ահա և տեսնում եմ Վասիլ Սերգէ-

իչին մի երիտասարդ գեղեցիկ կնոջ հետ. կինը գրկում ունէր մի փոքրիկ աղջիկ: Վասիլ Սերգէիչը ուրախութիւնից չգիտէր ինչ անել, անգագար այս ու այն կողմ էր վազում, ծանրոցներին էր մտիկ տալիս, նայում էր կնոջ երեսին և չէր կշտանում նայելուց: «Այ՛ն, Սիրերում էլ են մարդիկ ապրում, եղբայր Սիմէօն», ասում էր նա: Լաւ, շատ մի ուրախանայ, ասում եմ ինքս իմ մէջ: Այդ ժամանակից սկսած, նա համարեա ամենայն շաբաթ գնում էր Գիրինօ տեղեկանալու, թէ արդեօք փող չեն ուղարկել Ռուսաստանից: Փողի խիստ կարօտութիւն էր զգում: «Կինս, ասում էր նա, ինձ համար թողել է ամեն ինչ և եկել այստեղ թեթեացնելու իմ դառն օրերը, ուստի ես պարտաւոր եմ հաճելի դարձնել նորա համար կեանքը այստեղ, պատճառել նորան ամեն տեսակ բաւականութիւն...» Որպէսզի կնոջ համար տխուր չլինի, նա ծանօթութիւններ սկսեց աստիճանաւորների հետ և ամեն տեսակ մարդկանց հետ, որոնց ուտել, խմացնել էր հարկաւոր, շրջապատեց կնոջը ամեն տեսակ շքեղութեամբ և շուտով թեամբ, բայց կինը երկար չապրեց մօտը: Մալրաքաղաքում մեծացած և փալփալուած, նա շուտով սկսեց ձանձրանալ այս ցուրտ, անհիւրընկալ երկրում, ուր շուրջը միայն

տեսնում էր՝ կաւ, ջուր, տգիտութիւն, հարբեցողութիւն, կոպիտ վարմունք, ուր կարելի էր նույնիսկ ընդեղէններ ճարել և ոչ պտուղներ. մարդն էլ առաջուայ աղան չէր, այլ աքսորական: Երեք տարի անցնելուց յետ, լիշոււմ եմ, հէնց Աստուածածնայ Վերափոխման տօնի գիշերը, ձայն են տալիս ինձ գետի միւս ափից: Ես թիւփարում եմ լաստը դէպի միւս ափը: Նայում եմ և ինչ տեսնում. Վասիլ Սերգէիչի կինը ամբողջովին փաթաթուած շալերով, կանգնած էր մի երիտասարդ աստիճանաւորի հետ: Նորանք եռաձի կառքով էին... Ես անցկացրի նորանց միւս ափը: Լուսողէմին հասնում է Վասիլ Սերգէիչը: «Չանցան այստեղով, Սիմէօն, կինս և ակնոցաւոր մի պարօն», հարցնում է նա: Անցան, պատասխանում եմ, այժմ որոնիր նրանց ազատ դաշտում: Եւ նա սլացաւ նորանց յետեից. ամբողջ հինգ զօր ու գիշեր աշխատեց նորանց հասնել, բայց իզուր: Երբ վերադարձին ես անց էի կացնում նորան միւս ափը, նա վայր ընկաւ լաստի վրայ սկսեց գլուխը խրփել տախտակներին և հեկեկալ: Ես ծիծաղում եմ և լիշեցնում նորան իւր խօսքերը: «Սիրելիում էլ մարդիկ են ապրում»: Եւ նա աւելի ևս բորբոքւում է... Կինը արգէն անցել էր Ռուսաստան և այժմ նա սաստիկ

ցանկանում էր տեսնել նորան և դուրս կորզել նորան սիրահարի գրկից: Նա սկսեց գրեթէ ամենաչն օր լաճախել փոստատուն և կամ քաղաք կառավարչական հաստատութիւնները: Եարունակ խնդիրներ էր տալիս, որ ներեն իրան և թույլ տան վերագտնալ հայրենիք: Պատմում էր, որ միայն հեռագրների վրայ ծախսել է երկու հարիւր բուրլի: Հողը ծախեց, տունը գրաւ գրեց հրէաների մօտ, իսկ ինքը սպիտակեց, կորացաւ, երեսի գոյնը այնպէս դեղնեց, որ կարծես բարակացաւ և հիւանդ լինէր: Հետո մի բան խօսելիս՝ կակազեցնում էր... և արցունքները իսկույն լցւում էին աչքերը: Տանջուեց, քաշքաշուեց խնդիրների յետեից ութը տարի և այժմ միայն կարծես նորից կենդանացել ու գուարթացել է: Այդ ժամանակամիջոցում աղջիկը հասաւ: Պա մի նոր միտիթարութիւն էր նորահամար, որ մոռացնել տուեց նորան հին կրրած վշտերը: Նայում է աղջկայ վրայ և չի կըշտանում նայելուց, իսկ աղջիկը իրաւ որ գեղեցիկ էր, սև կամար յօնքերով և աշխոյժ: Ամենաչն կիրակի նա աղջկայ հետ գնում է Գիրինօ եկեղեցի: Երկուսով կանգնում են լաստի վրայ կողք կողքի, աղջիկը շարունակ ժպտում է, իսկ նա չի կշտանում նորա վրայ նայելուց: «Այո, Սիմէօն, ասում է, Սիրելիում

էլ են մարդիկ ապրում, Սիբիրում էլ կարելի է բախտաւոր լինել: Նայիր, ինչպիսի դեղեցիկ աղջիկ ունեմ. հազար վերստ տարածութեան վրայ անգամ չես գտնի հատը»: Աղջիկդ, ճըշմարիտ, շատ լաւն է, ասում եմ ես և մտքիս մէջ մտածում, սպասիր... նա դեռ ջահել է, նորա մէջ էլ արիւնը կըխաղայ, նա էլ կըցանկանայ ապրել, իսկ այստեղ ի՞նչ կեանք է: Եւ իրաւ, եղբայր, աղջիկը սկսեց սրտնեղուիլ, ձանձրանալ, հետզհետէ մաշուել և այժմ թոքախտով հիւանդ է: Ահա և քեզ Սիբիրի բախտաւորութիւն, ահա քեզ Սիբիրում էլ մարդիկ են ապրում... Սկսեց նա շարունակ բժիշկների լեռեից գնալ, հրաւիրել նորանց իւր մօտ: Հէնց որ լսում էր, թէ երկու, երեք հարիւր վերստ հեռաւորութեան վրայ ինչ որ բժիշկ և կամ հէքիմ կայ, իսկոյն գնում էր նորա լեռեից: Ո՛րքան շատ փող գնաց բժիշկներին, իսկ իմ կարծիքով աւելի լաւ կըլինէր այդ փողերով խմել... Միւսնոյն է, կըմեռնի, կըմեռնի անպատճառ, իսկ այն ժամանակ նա բոլորովին կորած է. սրտի ցաւից կամ կըկախուի. և կամ կըփախչի Ռուսաստան, իսկ հետեանքը արդէն այն կըլինի, որ կըբռնեն նորան, դատի կ'ենթարկեն, իսկ յետոյ տաժանակիր աշխատանք և գանահարութիւն...

— Լաւ, լաւ, ասաց թուրքը, չցրտից կուչ գալով:

— Ի՞նչը լաւ, հարցրեց ծերունին:

— Կինը, աղջիկ... թող լինի տաժանակիր աշխատանք, ինչ կ'ուզէ, թող լինի, բայց գոնէ նա տեսել է կնոջը և աղջկան... Դու ասում ես, որ ոչինչ հարկաւոր չէ: Ի՞նչ վատ բան է եղել: Կինը ապրել է նորա հետ երեք տարի: Դա Աստուծոյ մի տեսակ ողորմութիւն է եղել նորա համար: Ինչպէս կ'ուզես հասկացիր, ոչինչ վատ բան չկայ դրա մէջ:

Թուրքի Ռուսերէն բռնորդ պաշարը շատ քիչ էր: Յրտից դողալով և դժուարութեամբ արտասանելով բռնորդ, նա խօսում էր այն մասին, որ Աստուած չամէ հիւանդանալ և մեռնել օտար երկրում և որ եթէ կինը գոնէ մի օրով և կամ նոյն իսկ մի ժամով զար իւր մօտ, այդպիսի մի բախտաւորութեան համար նա պարտաւոր կըլինէր կրելու ամեն տեսակ տանջանքներ և շնորհակալ լինել Աստուծոյ: Լաւ է գէթ մի օրով ճաշակել բախտաւորութիւն, քան երբէք:

Յետոյ նա նորից պատմեց, թէ ինչպիսի խելացի ու գեղեցիկ կին է թողել տանը և գըլուխը բռնելով, սկսեց լաց լինել ու հաւատացնել Սիմէօնին, որ ինքը ոչ մի բանով մեղաւոր չէ և իզուր անցն է կրում կեանքի դառն հարուստ

ծը: Երկու եղբայրներս և հօրեղբայրս գողացան մի գիւղացու ձիերը և ծեծեցին ծերունուն մինչև կիսամահ, իսկ հասարակութիւնը հակառակ խղճի, համախօսական կազմեց, որով երեք եղբայրներս Սիբիւր արքսորուեցանք, իսկ հօրեղբայրս, որ հարուստ մարդ է, մնաց տանը:

— Ոչինչ, կ'ընտելանաս, կըհաշտուիս գրութեանդ հետ, ասաց Սիմէօնը:

Թուրքը լռեց և արտասուլաթոր աչքերը յառեց դէպի կրակը: Նորա գէմքը արտայատոււմ էր տարակուսանք և երկիւղ: Նա կարծես դեռ չէր հասկանում, թէ ինչու այստեղ է, նստած մթութեան մէջ, օտար մարդկանց մօտ և շնչում է այս խոնաւ օդը. նորա համար անհասկանալի էր, թէ ինչու Սիբիւրսկի նահանգում չէ: Ծերունին պառկեց կրակի մօտ, ինչ որ ժպտաց և սկսեց քթի տակ երգել:

Ինչ բաւականութիւն աղջկայ համար ապրել հօր մօտ: ձշմարիտ է, նա սիրում է նորան և մխիթարում նորանով, բայց, եղբայր, հայրը խիստ և յամառ ծերունի է, իսկ մատաղահաս օրիորդներին հարկաւոր է ոչ թէ խտուրթիւն, այլ փաղաքշանք, անուշահոտիւղ և օծանելիք հա՛, հա՛, հա՛: Ե՛հ աշխարհ, աշխարհ, հառաչելով ասաց Սիմէօնը

և ծուլութեամբ վերկացաւ տեղիցը: — Արաղը վերջացաւ, ուրեմն ժամանակ է քնելու...

Մնալով միայնակ, թուրքը կրակի վրայ ցախ աւելացրեց, պառկեց խարոյկին աւելի մօտ, և սկսեց մտածել հայրենի գիւղի և կնոջ մասին: Նորա հայեացքը յառած էր դէպի կրակը: — Ա՛խ, որքան լաւ կըլինէր, եթէ կինս գոնէ մի ամսով, նոյնիսկ մի օրով դարմօտս և լետոյ թէկուզ լետ դառնար, մտածում էր նա: Աւելի լաւ է մի ամիս, մինչև անգամ մի օր զգալ իրան երջանիկ, քան երբէք: Բայց, եթէ կինս իւր խոստումը կատարէ և գայ, ինչո՞վ պէտք է պահեմ նորան, ո՞րտեղ նա պէտք է ապրի:

Եթէ որ նոյնիսկ բան չկայ ուտելու, ինչո՞վ պէտք է նա ապրի, հարցրեց ինքն իրան թուրքը լսելի ձայնով:

Գիշեր, ցերեկ թխավարելու համար նորան աալիս էին ընդամենը տասը կօպէկ օրական: ձշմարիտ է, անցորդները երբեմն նուրում էին մի քանի կօպէկ, բայց ընկերները այդ փողերը բաժանում էին իրանց մէջ, իսկ թուրքին ոչինչ չէին տալիս և ծիծաղում էին նորա վրայ: Սովաճաւթիւնը և ցուրտը նեղում էին նորան... Այժմ, երբ ամբողջ մարմինը ցաւում էր և ցրտից դողում, նա ոչինչ չուներ ծածկուելու համար: Գնալ խրճիթ,

այնտեղ նոյնքան ցուրտ էր, որքան ափը. այնտեղ գտնէ տաքանում էր խարոյկի մօտ...

— Մի շաբաթից չետոյ, երբ ջուրը բոլորովին կըցածանայ, բոլոր թիավարներս, բացի Սիմէօնից, արդէն անպէտք կըլինինք և ես ստիպուած կըլինիմ գիւղից գիւղ գնալ ողորմութիւն և կամ աշխատանք խնդրելու, մտածում էր նա: — Կինս զեւեւս տասն և եօթը տարեկան է, գեղեցիկ, փաշփաշուած: Մթթէ նա բաց երեսով գիւղից գիւղ պէտք է գնալ և ողորմութիւն խնդրէ: Ոչ, այդ մասին անգամ մտածելը, նոյնիսկ սարսափելի է...

Արդէն լուսանում էր, պարզ կերպով նշմարվում էին թիավարող նաւը, ջրի կոհակները և գետափնեայ ուռենիները, իսկ յետևի կողմում կաւային փլուածքը, որից ներքև խրճիթն էր, ծածկուած ծըղնատով, իսկ վերևում ձգուած էին գիւղական խրճիթները: Գիւղում արդէն կանչում էին աքաղաղները:

Շիկազոյն, կաւային փլուածքը, նաւը, գետը, օտար և խտասիրտ մարդիկ, քաղցածութիւնը, ցուրտը և հիւանդութիւնը՝ այս բոլորը թերևս իսկապէս գոյութիւն չունին, այլ մի երազ է, մտածում էր թուրքը: Նա զգում էր, որ քնում է և լսում է իւր խրխոոցը... Իհարկէ տանն է, Սիբիրսկի նահանգում և բաւական է միայն կնոջը անունը

տալ, որ նա իսկոյն մարդ լինի, իսկ հարևան սենեակում մայրն է... Սալայն, ինչպիսի սարսափելի երազներ է տեսնում մարդ երբեմն: Թուրքը ժպտաց և բացեց աչքերը: Ինչ գետ է սա, Առլգան:

Ձիւն էր գալիս:

— Մօտեցրու նաւը, կանչում էր մէկը միւս ամից:

Թուրքը սթափուեց և գնաց զարթեցնելու ընկերներին՝ նաւակը դէպի միւս ափը թիավարելու համար: Ոտքի վրայ հագնելով պատառոտած քուրքերը, հայհոյելով խապոտ ձայնով, քնաթաթախ և ցրտից կծկուելով, ափում երևացին թիավարները: Գիշերային քնից չետոյ, գետը կարծես աւելի անհանդուրժելի էր դառել նրանց համար. նրանից փչում էր մինչև ոսկոռները թափանցող ցուրտ: Առանց շտապելու նորանք թռան նաւակի վրայ... Թուրքը և երեք թիավարները կանգնեցին իսկոյն լայնաբերան թիերի մօտ, իսկ Սիմէօնը փորը դէմ արեց նաւի դէկին: Միւս ամից զեռ շարունակում էին կանչել և երկու անգամ ատրճանակ արձակեցին, հաւանաբար կարծելով թէ թիավարները քնած են և կամ զնացել են գիւղը, գինետուն:

— Ա՛յլ, շատ մի շտապիր, կըհասնես, ասում էր Տօլկովը մի այնպիսի մարդու ար-

տայայտութեամբ, որ համոզուած է, թէ աշխարհում կարիք չկայ շտապելու, որովհետև միևնոյն է, ոչինչ էլ դուրս չի գայ:

Ծանր, անճոռնի նաւը հեռացաւ փիեց և սկսեց առաջ լողալ ուռենիների միջով: Փոքրիկ ծառերի լետ մնալուց միմիայն կարելի էր եզրակացնել, որ նաւը կանգնած չէ մի տեղում, այլ շարժուած է: Թիավարները համաչափ կերպով շարժուած էին թիերը, իսկ Տօլկովը փորը դէմ արած՝ պառկել էր նաւի դէկի վրայ, որի շարժուելուց օդի մէջ աղեղներ էին գոյանում. նա մերթ գգուած էր իրան նաւի այս ծայրին, մերթ միւս: Այդ տեսարանը մթութեան մէջ մի առանձին տպաւորութիւն էր թողնում. կարծես մարդիկ նըստել էին երկայն թաթերով անդրջրհեղեղեան մի կենդանու վրայ և լողում էին գէպի ցուրտ, մռայլ երկիր, մի այնպիսի աշխարհ, որ միայն զարհուրելի երազներում գոյութիւն ունի:

Անցնելով թփերի միջից, նա սկսեց լողալ ջրի ընդարձակ տարածութեան վրայ: Միւս փիեց արդէն լուծ էին ալիքների խըշխըշոցը և նըկատուած թիերի համաչափ շարժումը: «Շուտով, շուտով», կանչում էին այնտեղից: Տասը բոպէ ևս և նաւը ծանր կերպով ընդհարուեցաւ նաւահանգստին:

--Շարունակ գալիս է ձիւնը առանց դադարելու, մըրթմըրթում էր Սիմէօնը, սըրբելով երեսէ ձիւնը: --Ստուուած գիտէ, թէ որտեղից է այսքան ձիւնը:

Ափում սպասում էր նիհար, ոչ մեծ հասակով մի ծերունի, որ հագին ունէր աղուէսի մորթուց մի կիսաքուրք, իսկ գլխին սպիտակ գլխարկ գառան մորթուց: Նա կանգնել էր ձիաներից հեռու և չէր շարժուած: Նորա դէմքի արտայայտութիւնը մռայլ էր և կենդրոնացած: Նա կարծես աշխատում էր մտարեւել ինչ որ բան և զայրանում էր իւր թոյլ լիշողութեան վրայ: Երբ Սիմէօնը մօտեցաւ նորան և ժպտալով հանեց գլխարկը, նա սասց:

--Շտապում եմ Անաստասեկա. աղջըկաս գրութիւնը դարձեալ վատացաւ. ասում են այնտեղ նոր բժիշկ են նշանակել:

Կառքը քաշեցին նաւի վրայ և նաւը սկսեց դէպի լետ լողալ: Նանապարհորդը, որին Սիմէօնը Վասիլ Սերգէիչ էր անուանում, ամբողջ ժամանակը կանգնել էր անշարժ, պինդ հուպ տուած շրթուները և անթարթ նայում էր մի կէտի վրայ: Երբ կառավարը թողլաւութիւն խնդրեց ծխելու, նա նոյնիսկ չպտտատխանեց, ձեացնելով, որպէս թէ չէ լսում: Սիմէօնը փորը դէմ արած պառկել

էր զէկի վրայ և քմծիծաղ նայելով նորա վրայ, ասում էր.

— Սիբիրում էլ են մարդիկ ապրում, այն:

Տօլկովի զէմքը արտայայտում էր ցընծուծիւն: Նա կարծես մի բան ապացուցել էր և ուրախանում էր, որ այնպէս դուրս եկաւ, ինչպէս ինքը ենթադրում էր: Անբախտ ու անճար մարդու զէմքը ըստ երևոյթին մեծ բաւականութիւն էր պատճառում նորան:

— Այժմ ցեխ է, դժուար է գնալը, Վասիլ Սերգէիչ, ասաց Սիմէօնը, երբ ափում սկսեցին լծել ձիաները:— Կըսպասէիք գոնէ մէկ, երկու շաբաթ, մինչև որ ճանապարհները կըչորանային և կամ բոլորովին չգնայիք... Եթէ գնալուց գոնէ մի բան դուրս գար, այդ դեռ հասկանալի է. ինքներդ գիտէք, որ մարդիկ գիշեր, ցերեկ շարունակ գնում գալիս են, բայց էլի ոչինչ:

Վասիլ Սերգէիչը լռելեայն տուեց նրան մի քանի կոպէկ արաղի փող, նստեց կառքը և ճանապարհ բնկաւ:

— Ահա գնաց բժշկի յետևից, ասաց Սիմէօնը ցրտից կուչ գալով:— Այն, որոնիր լաւ բժշկի, սրացիր քամու յետևից ազատ դաշտում, բռնիր սատանի ագիից, տանջիր հո-

գիդ: Ե՛լ, լիմարներ, ներիր ինձ Աստուած մեղաւորիս:

Թուրքը մօտեցաւ Տօլկովին: Նորա հայեացքը այդ ժամանակ արտայայտում էր ատելութիւն և զգուանք: Սմբողջովին դողալով, նա խառն կոտրատուած լեզուով, ասաց Տօլկովին:

— Նա լաւ... լաւ մարդ է, իսկ դու վատ: Ազան լաւ հոգի ունի, իսկ դու դազանային, վատ: Նա կենդանի մարդ է, իսկ դու մեռած... Աստուած ստեղծել է մարդուն, նրա մէջ զնելով կեանք. նա պէտք է ճաշակէ և՛ ուրախութիւն և՛ վիշտ և՛ ձանձրոյթ: Գու ոչինչ չես ցանկանում, նշանակում է քո մէջ կեանք չկայ, դու քար ես, կաւ: Քարին ոչինչ հարկաւոր չէ, նոյնպէս և քեզ: Գու անզգայ ես և Աստուած քեզ չի սիրում, իսկ աղին սիրում է:

Բոլորեքեան ծիծաղեցին: Թուրքը կընճուռեց, թափ տուեց ձեռքը և փաթաթուելով իւր պատառոտած ցնցոտիների մէջ, մօտեցաւ խարոյկին: Սիմէօնը և թխավարները մտան խրճիթ:

— Ցուրտ է, ասաց խոստ ձայնով թխավարներից մէկը և ձգուեցաւ լարդի վրայ, որով ծածկուած էր թաց կաւահող յատակը:

— Այն, առք չէ, համաձայնուեց միւսը, —
աքսորականի կեանք է:

Բոլորեքեան պառկեցին: Քամուց դուռը
բացուեցաւ և ձիւնը սկսեց լցուել խրճիթի
մէջ: Վերկենալ և ծածկել դուռը ոչ ոք չէր
ցանկանում:

— Իսկ ինձ համար լաւ է, խօսեց Սի-
մէօնը փակելով աչքերը: — Ես դո՛հ եմ իմ
վիճակից:

— Ի՞նչ արդէն գելուած աքսորական ես,
սատանաներն անգամ չեն կարող բեզ շարժել:

Գրսից լսուեցան ձայներ, որ նման էր
շան հաջոցի:

— Այդ ինչ է. ո՞վ է այնտեղ:

— Թուրքն է լաց լինում:

— Ա՛յ բեզ... լիմար:

— Ոչինչ, կ'ընտելանայ, ասաց Սիմէօնը և
խօսին քնեց:

Շուտով քնեցին և միւսները, իսկ դուռը
այնպէս էլ մնաց բաց:

ԱՆՏԱՆԵԼԻ ՄԱՐԳԻԿ

Նւզրաֆ Իւանովիչ Շիրեաւը կանգնել
էր անկիւնում պղնձեայ լուացարանի մօտ և
լուանում էր ձեռքերը: Նա մանր կալուածա-
տէրերից էր և քահանայի որդի: Նորա հայրը
ստացել էր Գեներալուհի Գովշինկովայից իբրև
պարգև 102 դեսեատին հող: Նւզրաֆ Իւա-
նովիչի գէժքը ըստ սովորականին մտազբաղ
էր մե մօայլ, միջուքը չսանրած:

— Է՛հ, ի՛նչ անտանելի եղանակ է, ա-
սում էր նա: — Սա եղանակ չէ, այլ Աստու-
ծոյ պատիժ: Ելի սկսեց անձրև գալ:

Մինչդեռ նա ալսպէս լուացում էր և ինքն
իրան փընթփընթում, նորա կինը՝ Փեօգօսիա
Սիմէօնովնան, ուսանող որդին՝ Պետարը, մեծ
աղջիկ Վառվառէն և երեք երեխաները
նստել էին սեղանի շուրջը և սպասում էին
նախն, որպէսզի սկսեն ճաշել: Երեխաները,

որոնցից մէկի անունն էր Կօլիա, միւսինը՝ Վանեա, իսկ երրորդինը՝ Արիսիպիա, անհամբերութիւնից թրխկթրխկացնում էին աթոռները: Նորանց կորընթարթ քթերով կլոր, լիք-լիք դէմքերը կեղտոտ էին, իսկ կոշտ մազերը վաղուց չխուզուած: Մեծերը նստել էին անշարժ և ըստ երևոյթին նրանց համար բոլորովին միևնույն էր՝ ուտել, թէ սպասել...

Կարծես գիտմամբ նորանց համբերութիւնը փորձելու համար, Շիրեառը դանդաղ կերպով սրբեց ձեռքերը, աղօթեց նոյնպիսի դանդաղութեամբ և սպա առանց շտապելու գնաց և իւր տեղը նստեց: Իսկույն մատուցին արգանակ: Գրսից գալիս էին կացնի հարուածների ձայներ և լսուում էր բաննօր Փոմկայի ծիծաղը, որ բարկացնում էր հնդկահաւին: Բահում հիւսնեքը շինում էին փայտանոց: Անձրևի խոշոր և հոտ-հոտ կաթիլները բաղխում էին լուսամուտի սպակիներին:

Պետրը ուտում էր արգանակը և շուտ, շուտ աչքի տակով նայում մօր երեսին: Նորա կազմուածքը փոքր ինչ կորացած էր, իսկ աչքերին կրում էր ակնոցներ: Նա մի քանի անգամ վայր դրեց զգալը, հազաց ցանկանալով խօսել. բայց ուշի ուշով նայելով հօր դէմքին, նա նորից շարունակում էր ուտել:

Վերջուպէս, երբ մատուցին կորկտախաշիլը, նա վճռողաբար հազաց և ասաց.

— Այսօր ես ցանկանում եմ երեկոյեան գնացքով ճանապարհ ընկնել: Վաղուց արդէն ժամանակ է և դեռ երկու շաբաթ էլ ուշացել եմ: Գասախօսութիւնները սկսուում են սեպտեմբերի մէկից:

— Գնա՛, համաձայնուեց Շիրեառը: — Ի՞նչ ունիս այստեղ սպասելու: Գնա՛, Աստուած քեզ հետ:

Անցաւ մի րոպէ լուսթեան մէջ:

— Եւգրաֆ Իւանովիչ, խօսեց հանդարտութեամբ մայրը, նորան ճանապարհաձախա է հարկաւոր:

— Փող, ինչ արած. առանց փողի ճանապարհ չես գնայ: Եթէ հարկաւոր է, հէնց աչժմ կարող է վերցնել: Վաղուց կարող էիր ասել:

Ուսանողը ազատ շունչ քաշեց և ուրախ ուրախ նայեց մօր: Երեսին: Շիրեառը առանց շտապելու հանեց կողքի զբաղանից քսակը և ակնոցները զրեց: աչքերին:

— Ո՞րքան է հարկաւոր, հարցրեց նա:

— Մինչև Մոսկուայ տոմսակը արժէ 11 ռուբլի քառասուն և երկու...

— Փող, փող, հոգոց քաշելով ասաց հայրը, որ սովորութիւն ունէր միշտ այդպէս

Հասաչել, երբ փող էր տեսնում և կամ նույն-
իսկ երբ ստանում էր: Ահա քեզ 12 բուբլի.
դժբանից մի բան կաւելանայ, այն էլ ճանա-
պարհին քեզ համար կըծախսես:

— Ենորհակալութիւն:

Մի փոքր սպասելով, սւսանողը ասաց.

— Անցեալ տարի ես միտնգամից չգտայ
դաս: Չգիտեմ այս տարի ինչպէս կըլինի. բայց
երևի շուտով չեմ դանի: Կըլնդրէի ձեզ տալ
ինձ տասնուհինգ բուբլի էլ բնակարանի և
ճաշի վարձ:

— Տասն էլ բաւական կըլինի, մի փոքր
մտածելուց և հոգոց քաշելուց լետոյ, ա-
սաց հայրը: Ահա վերցրո՛ւ:

Սւսանողը շնորհակալութիւն յայտնեց:
Հարկաւոր էր նաև խնդրել շորի, ուսման
վարձի և գրքերի փող, բայց ուշի ուշով
նայելով հօր գէժքին, նա վճռեց ալլևս ոչինչ
չասել: Մայրը, որ անհեռատես էր և ոչ քա-
ղաքագէտ, ինչպէս լինում են բոլոր մայրե-
րը, չհամբերեց և ասաց:

— Եւզրաֆ Իւանովիչ, տալիք նորան
գոնէ վեց բուբլի ևս կոշիկներ գնելու հա-
մար. նայիք, կարելի է այսպիսի պատառոտած
կոշիկներով գնալ Մոսկուա:

— Թող իմ հները վերցնէ. նրանք գեռ
ևս բոլորովին նոր են:

— Գոնէ անգրավարգիկի համար տալիք:
նրա վրայ նայելը անգամ ամօթ է...

Եւ դորանից լետոյ իսկույն տեղի ունե-
ցաւ այն, որի առաջ այնպէս գողում էր ամ-
բողջ ընտանիքը: Եիրեանի կարճ և գեր պա-
րանոցը լանկարձ կարմրեց, ինչպէս ալ կտոր,
կարմբութիւնը կամաց կամաց բարձրացաւ
դէպի ականջները, այնտեղից քունքերը և
վերջապէս տարածուեց ամբողջ երեսի վրայ:
Եւզրաֆ Իւանովիչը անհանգիստ շարժում-
ներ գործեց տեղումը, արձակեց օձիքը, որ-
պէսզի կարողանայ ազատ շնչել: Երևում էր,
որ նա կուռում էր այն զգացմունքի գէժ, որ
տիրապետել էր նորան: Տիրեց մեռելային
լուութիւն: Երեխաները շունչերը իրանց քա-
շեցին, իսկ Ֆեոդօսիտ Սիմէօնովնան կարծես
չհասկանալով, թէ ինչ է կատարւում ամուս-
նու հետ շարունակեց:

— Չէ որ նա այժմ փոքր չէ. ամօթ է
նորան մերկ ման դալ:

Եիրեանը լանկարձ վէր ցտակեց, ամ-
բողջ ոյժով շփոտեց փողի քսակը սեղանի
վրայ, որից հացի կտորը մի կողմ թռաւ ամ-
սէի միջից: Նորա գէժքի վրայ երևան էկաւ
բարկութեան, վիրաւորանքի և ազատութեան
մի տեսակ զգուելի արտայայտութիւն:

— Վերցրէք բոլորը, աղաղակեց նա ոչ բնական ձայնով. կողոպտեցէք, խեղդեցէք ինձ:

Նա վեր ցատքեց տեղից, բռնեց գլուխը տփերի մէջ և սալթաքելով սկսեց վազել սենեակում:

— Կողոպտեցէք մինչև վերջին թելը, քամեցէք մինչև վերջին կաթիլը, գոռաց նա կատաղի ձայնով: Խեղդեցէք կոկորդիցս:

Ուսանողը կարմրեց և խոնարհեցրեց աչքերը: Նա այլևս արդէն չկարողացաւ ուտել: Փեռօսիա Սիմէօնովնան, որ ամբողջ քսան և հինգ տարուայ ընթացքում չէր կարողացել ընտելանալ իբր ամուսնու անտանելի բնաւորութեանը, կձկուեց և մէկ-մէկ խօսքեր էր արտասանում իրան արդարացներու համար: Նժրա տանջված և փոքրիկ դէմքի վրայ արտափայլում էր զարմանքի և երկիւղի բուրբ արտայայտութիւն: Երեխաները և մեծ աղջիկ Վառվառէն, որ մի գեռահաս օրիորդ էր, ոչ գեղեցիկ և գունատ դէմքով. վայր գրին իրանց գդալները և կարծես քարացան տեղերումը:

Երբեք քանի գնաց աւելի կատաղեց, արտասանում էր մէկը միւսից աւելի կոպիտ ու սարսափելի խօսքեր. չետոյ ոստիւն գործեց դէպի սեղանը, վերցրեց քսակը և սկսեց դուրս ածել նրա միջից փողերը:

— Վերցրէք. մըրթմըրթաց նա: Կերաք, խմեցիք, ահա և ձեզ փող: Ինձ ոչինչ հարկաւոր չէ: Կարել տուէք ձեզ համար նոր կոշիկներ և համազգեստ:

Ուսանողը գունատուեց և վերկացաւ:

— Լսեցէք, հայրիկ, սասց նա շունչը կտրուելով:— Ես... ես խնդրում եմ ձեզ վերջացնել, որովհետեւ...

— Լսի՛ր, գոռաց նորա վրայ հայրը այնպէս բարձր, որ ականոցները վայր ընկան քրթից:— Լռի՛ր:

— Առաջ ես... ես կարողանում էի տանել այսպիսի տեսարաններ, բայց... այժմ ես չեմ կարող, հասկանում էք, չեմ կարող:

— Լռի՛ր, գոռաց հայրը ոտքերը գետին խփելով:— Ի՞նչ պարտաւոր ես լսել ինձ: Ինչ ցանկանում եմ, այն էլ կարող եմ ասել, իսկ դու պէտք է լռես: Քո հասակում ես փող էի աշխատում, իսկ դու, գիտես անպիտան, թէ որքան ծախս ես նստում ինձ վրայ: Ես քեզ դուրս կ'անեմ տանից, ձրիակեր:

— Եւզրաֆ Սիմէօնիչ, միջամտեց Փեռօսիա Սիմէօնովնան, շղայնաբար շարժելով մատները, չէ՛ որ նա... չէ՛ որ Պետեան...

— Լռի՛ր, գոռաց նորա վրայ Երբեքը և բարկութիւնից մինչև անզամ արցունքներ երևացին աչքերին:— Ի՞նչ ես երես տնկել

նորանց, բոլորի մեղաւորը դու ես: նա մեզ
չի յարգում, ազօթք չի անում, փող չի աշ-
խատում: Դուք տասը հոգի էք, իսկ ես մէկ:
Բոլորից դուքս կ'անեմ տանից:

Վառվառէն բերանը բաց արած, երկար
նայում էր մօրը կրեպին, լեռայ բուժ հայե-
ացքը ուղղեց դէպի լուսամուտը, գունատ-
ուեց և բարձր ճչալով, լեռ շրջուեց ակօսի
լեռաբանի վրայ: Հայրը թափ տուեց ձեռքը,
թքեց և դուրս վազեց սենեակից:

Դորանով սովորաբար վերջանում էին
Երեւոսները ընտանեկան անտարժույթիւն-
ները, բայց այս անգամին ուսանող Պետեա-
լին լանկարձ տիրեց մի տեսակ անչաղթելի
չար զգացմունք: Նա նույնքան զիւրազրզիւ
էր և անտանելի, որքան հայրը և քահանայ
պատը, որ ձեռնում էր ծխականներին՝ փաշ-
տով: Սփրտնած՝ սեղմած բուռնցքներով՝ նա
մօտեցաւ մօրը և գոսաց այնպիսի մի բարձր
ձայնով, որից աւելին անկարող էր դուրս
գալ նորա կօկորդից:

Ես անկարող եմ տանել այդ լանդիմա-
նութիւնները. դրանք զգուելի են ինձ հա-
մար: Ինձ այլևս ոչինչ հարկաւոր չէ՝ ձեզա-
նից, ոչինչ: Աւելի-շուտ կըմեռնեմ սովից,
քան թէ այսուհետև կըկտրեմ ձեր հացից,

թէկուզ մի պատաս: Ահա ձեզ ձեր անիծած
փողերը, վերցրէք:

Մայրը սեղմիւնեց պատին և թափ էր
սալիս ձեռքերը, կարծես առաջին կանգնած
լինէր ոչ թէ որդին, այլ մի հրէշ:

— Ինչով եմ ես մեղաւոր, լալիս էր նա,
ինչով:

Որդին նայալէս, ինչպէս հայրը, թափ
տուեց ձեռքը և դուրս վազեց սենեակից:
Երեւոսի տունը կանգնած էր մենմենակի ձու-
րակի ափին, որի լայն բացուածքը անապատի
միջով տարածուած էր մինչև հինգ վերստ:
Զորի եզերքին բուսել էին մատաղահաս կաղ-
նիներ, իսկ խոր լատակում հասում էր սո-
սուկը: Տունը մէկ կողմով նայում էր դէպի
ձորը, իսկ միւսով՝ դէպի դաշտը: Ցանկապատ-
ներ և պատնէշներ չկային: Սրանց փոխարի-
նում էին ամեն տեսակ շինութիւններ, որոնք
խիտ առ խիտ շինուած էին միմեանց կողքի և
բռնում էին ոչ մեծ տարածութիւն: Բակու-
մըն էին լինում հաւերը, բաղերը և խոզերը:

Դուքս գալով տանից, ուսանողը ուղե-
որուեց դէպի դաշտ: Ճանապարհը ցեխ էր,
օդի մէջ զգալի էր խոնաւութիւն, որ թա-
փանցում էր մինչև մարդու սկօրները: Այս
ու այն կողմ նկատուած էին անձրևի ջրեց
գոյացած լճակներ: Դեղնած, թորչոմած խո-

տերի միջից նայում էր տիուր և յուսահատութիւն ներշնչող աշուհը: Ճանապարհի աջ կողմում գտնուում էր մի ագարակ՝ ամբողջովին փորփրուած և մռայլ տեսքով. տեղ, տեղ միայն նրա վրայ բաբձրանում էին արեւածաղիկի ցողուններ՝ կախ զցած, բայց արգէն սեւացած գլուխներով:

Պետորը մտածում էր, որ վառ չէր լինի ոտով գնալ Մոսկուա, հէնց այնպէս, ինչպէս կար՝ այսինքն առանց գլխարկի, պատառոտած կօշիկներով և առանց մի կոպէկի: Նորա երեւակայութեան մէջ պատկերանում էր, թէ ինչպէս հարիւրերորդ վերստի վրայ կըհասնի իրան հայրը՝ վախեցած և ամբողջովին ինքն իրան կորցրած, ու կսկսէ խնդրել լետ դառնալ և կամ փող ընդունել, իսկ ինքը մտիկ էլ չի տայ նորա վրայ և կըշարունակէ յառաջ գնալ... Մերկ անտառները տեղի կըտան մռայլ դաշտերի, դաշտերը անտառների և շուտով երկիրը կըճածկուի առաջին ձիւնով, գետակները սառնոյցով... Որևէ տեղ՝ Կուրսկի, կամ Սերպուխի մօտերը, նա ուժաթափ եղած և սովից տանջուած, վայր կ'ընկնի և կըմեռնի. դիակը կըգտնեն և բոլոր լրագրներում կըգրգռվի, որ այս ինչ տեղում, այս ինչ ուսանողը մեռել է սովից...

Սպիտակ շունը ցեխոտ պոչով, որ թափառում էր ագարակում և ինչ որ բան որոնում, նայեց նորա վրայ և հաչեց լետեկցը...

Նա գնում էր ճանապարհով և մտածում մահուան, մերձաւորների վշտի և հօր բարոյապէս կրած տանջանքների մասին: Նորա երեւակայութեան մէջ պատկերանում էին բազմաթիւ, այլ և այլ ճանապարհորդական արկածներ՝ մէկը միւսից հրաշալի, գեղազարկան վայրեր, ահաւելի գիշերներ, անսպասելի հանդիպումներ: Երեւակայում էր երկայն շրջապատաւորների, խրճիթ՝ մենմենակ կանդնած անտառում, մի լուսամուտով, որից պայծառ լոյս էր թափանցում մթութեան մէջ. ինքը կանգնած՝ այդ լուսամուտի առաջ, խնդրում է գիշերելու տեղ... նորան ընդունում են և լանկարծ նա զգում է իրան աւազակների մէջ: Կամ թէ թոււում էր նորան մի բոպէ, որ ինքը ընկնում է մի հարուստ կալուածատիրոջ տուն, ուր իմանալով, թէ նա ով է, կերակրում, խմացնում են նորան, նուազում են նորա համար զաշնամուրի վրայ, լսում են նորա գանդատները և տանտիրոջ գեղեցիկ աղջիկը սիրահարոււմ է նորա վրայ:

Անձնատուր եղած վշտին և գոյնանման մտածմունքների՝ երիտասարդ Շիրեառը շարունակում էր առաջ գնալ... Առաջը, հեռու

մոխրագոյն ամպի տարածած ստուերի տակ, մթին էր տալիս մի պանդոկ, իսկ նրանից աւելի հեռու, հէնց հորիզոնում, նկատելի էր մի փոքրիկ բլրակ. դա հէնց երկաթուղու կայարանն էր: Այդ բլրակը լիշեցրեց նորան այն կապը, որ գոյութիւն ունի այդ տեղի, ուր նա այժմ կանգնած է, և Մոսկւայի մէջ, որտեղ վառուում են լապտերներ, փողոցներում անց ու դարձ են անում կառքեր և կարգացում են դասախօսութիւններ: Եւ նա հաղիւ լաց չեզաւ սրտնեղութիւնից ու անհամբերութիւնից: Հանգիսաւոր բնութիւնը իւր գեղեցիկութեամբ և տիրող մեռելալին լուութիւնը տրամագրում էին նորան դէպի յուսահատութիւն և ատելութիւն:

— Հեռո՛ւ, — լսուեց յետեից մի բարձր ձայն:

Ուսանողի մօտից գեղեցիկութեթև կառքում սլացաւ ծանօթ պառաւ կալուածատիրուհին: Ուսանողը ժպիտը երեսին գլուխ տուեց նորան: Որտեղից էր այս ժպիտը, անմիջապէս մտածեց նա, որ բոլորովին չի յարմարում ներկայ մռայլ տրամագրութեանը. որտեղից էր նա, եթէ որ ամբողջ հոգին լի է ձանձրոյթով և սրտնեղութեամբ:

Հաւանաբար բնութիւնն ինքն է տուել մարդուն խաբելու, ստելու այս ընդունակութիւնը, մտածեց նա, որպէսզի հոգեկան վշտի ծանր րոպէներում կարողանայ թազցնել իւր

կրծքի, իւր սրտի գաղտնիքները, ինչպէս թագնորում է աղուէսը և կամ վայրենի բազը: Ամեն մի ընտանիք ունի իւր ուրախութիւնը և վիշտը, իւր լաւ և վատ կողմերը: Վերջիններս որքան էլ որ սոսկալի լինին, այնուամենայնիւ դժուար նկատելի են կողմնակի մարդկանց. նրանք գաղտնիք են: Հէնց օրինակ, վերջներք այս կալուածատիրուհին, որ քիչ առաջ անցաւ: Նորա հայրը իւր կեանքի կիսում ենթարկուեց Նիկոլայ թագաւորի բարկութեանը, ամուսինը տարուած էր թղթախաղի, իսկ չորս որդիներից և ոչ մէկն էլ մի բան դուրս չեկաւ: Կարելի է երևակայել, թէ որքան սոսկալի տեսարաններ են տեղի ունեցել նորա ընտանիքում, որքան արցունքներ են հոսել, իսկ այն ինչ՝ պատաւը երևում է բախտաւոր, ինքն իւր վիճակից զոհ և իւր ժպիտին պատասխանեց նայնպէս ժպիտով: Յիշեց ուսանողը իւր ընկերներին, որոնք առանձին հաճութեամբ են խօսում ընտանիքների մասին, լիշեց իւր մօրը, որ զրեթէ միշտ ստում է, երբ դէպք է լինում խօսել ամուսնու և որդիների մասին...

Մինչև մթնշուղը Պետրը շարունակում էր գնալ անձնատուր եղած տխուր մտածմունքների: Երբ սկսեց կաթկաթել անձրևը, նա ուղեւորուեց դէպի տուն: Վերագառնալիս

նա վճռեց, ինչ էլ որ լինի, խօսել հօր հետ
և միանգամ ընդմիջտ բացատրել նորան, որ
նորա հետ ապրելը՝ ծանր է և անտանելի:

Տան մէջ ամեն ինչ լուռ էր: Գոյր Վառ-
վառէն պառկել էր դռնապի այն կողմը Ու
մեղմ կերպով տընքում էր գլխացաւից: Նը-
րա մօտ արկղի վրայ նստել էր մայրը և կար-
կատում էր Արթիւկի անդրավարդիկը: Նորա
դէմքը զարմանքի հետ կրում էր մի այնպիսի
արտայայտութիւն, որ կարծես զգում էր,
թէ մի բանում ինքը մեղաւոր է: Եւզրաֆ
Եւանովիչը քալում էր մէկ լուսամտից դէ-
պի միւս լուսամտաը և դժգոհում էր եղա-
նակի վրայ: Նժրա քալուածքից, հազից և
մինչև անգամ ծոծրակից նկատելի էր, որ նա
զգում է իրան մեղաւոր:

— Նշանակում է դու որոշել ես այսօր
զննալ, հարցրեց նա:

Ուսանողը խղճահարուեց նորա, վրայ,
բայց իսկոյն յաղթելով իր այդ նոր զգացողու-
թիւնը, նա սասց.

— Խնդրեմ լսեցէք... Ես ցանկանում եմ
խօսել ձեզ հետ լուրջ կերպով... այո, լուրջ
կերպով... Միշտ ես յարգել եմ ձեզ և... ոչ
մի ժամանակ չեմ թող տուել ինձ խօսել
ձեզ հետ այսպիսի ձևով, բայց ձեր բռնած
ընթացքը... ձեր վերջին վարմունքը...

Հայրը նայում էր լուսամուտին և լուռ
էր: Ուսանողը շփեց ճակատը, կարծես աշխա-
տելով մի բան մտաբերել, և շարունակեց
խիստ լուզուած ձայնով:

— Համարեա ամենայն ճաշի և թէյի
ժամանակ դուք բարձրացնում էք աղմուկ:
Ձեր տուած հացը բոլորի էլ կոկորզումն է
կանգնում: Աչինջ չ'կայ աւելի վերաւորական
և ստորացուցիչ, քան մէկին յանդիմանել իր
տուած մի կտոր հացով: Գուք թէև հայր էք,
բայց ոչ ոք, ոչ Աստուած և ոչ բնութիւնը
չեն տուել ձեզ իրաւունք այդպէս ծանր
կերպով վերաւորել, ստորացնել թողլին, թա-
փել նրանց վրայ ձեր հոգու բոլոր թօյնը:
Գուք տանջել էք մօրս, զրկել էք նորան որևէ
ինքնուրոյնութիւնից, քոյրս բոլորովին մոռա-
ցուլթեան է տրուած; իսկ ես...

...Քո գործը չէ սովորեցնել ինձ, սասց

հայրը:

— Այ, իմ գործն է: Ծագրեցէ՛ք ինձ, որ-
քան կամենաք, բայց հանգիստ թողէք մօրս:
Ես թող չեմ տալիս ձեզ տանջել նորան, շա-
րունակեց ուսանողը, որի աչքերում այդ ժա-
մանակ կարծես կրակ էր վառուած: Գուք
երես էք առել մինչև օրս ոչ ոք չէ հա-
մարձակուել ձեզ հակառակ զնալ, բոլորեքեան
դողացել են ձեր առաջ և պապանձուել, իսկ

այժմ իհարկէ: Գուք կուպիւս, չգաստիարակուած մարդ էք, կուպիտ... անտանելի, անզգայ: Գիւղացիք անգամ անկարող են ձեզ հանդուրժել:

Ուսանողը կորցրեց խօսքի թելը. նա արդէն չէր խօսում, այլ ծակում էր նորան հատ—հատ խօսքերով: Եւզրաֆ Իւանովիչը լսում էր և լռում, կարծես ուշքը վրան չըլինէր, բայց լանկարծ պարանոցը սկսեց կարմրել, կարմրութիւնը անցաւ ամբողջ երեսին և նա շարժուեց:

— Լո՛ր, աղաղակեց նա:

— Հը, չէք սիրում լսել ճշմարտութիւն, լաւ, սկսեցէք գոռալ, շատ լաւ:

— Լո՛ր, ասում եմ քեզ, աւելի սաստկութեամբ գոռաց Եւզրաֆ Իւանովիչը:

Դռան շէմքում երևաց Ֆեոդոսիա Սիմէոնովնան: Նա ստատիկ գունատ էր և կրում էր դէմքի վրայ զարմանքի արտայայտութիւն: Ցանկանում էր ինչ որ բան ասել, բայց չըկարողացաւ և միայն շարժեց մատները:

— Գու ես մեղաւոր, գոռաց Շիրեանը դառնալով դէպի նա. դու ես նորան այդպէս գաստիարակել:

— Ես այլևս չեմ ցանկանում ապրել այս տանը, աղաղակեց ուսանողը լալով և չար արտայայտութեամբ նայելով մօր երեսին: Չեմ ցանկանում ձեզ հետ ապրել:

Վառվառէն դառապի յետեից ճիչ արձակեց և սկսեց բարձր հեկեկալ: Շիրեանը թափ տուեց ձեռքը և դուրս վագեց տանից:

Ուսանողը գնաց իւր սենեակը և անձայն պառկեց: Մինչև կէս գիշեր պառկած էր նա անշարժ, չբանալով աչքերը: Չարակամութիւն չկար նորա սրտում. նա չէր զգում ամօթ, այլ զգում էր մի տեսակ անորոշ հագեկան վիշտ, ցաւ: Նա չէր մեղադրում հօրը, չէր ցաւում մօրը, չէր զգում խղճի խայթոց: Նորա համար պարզ էր, որ բոլորեքեան այժմ տան մէջ զգում են նոյն հագեկան ցաւը, վիշտը, բայց թէ ո՞վ է մեղաւոր, ո՞վ աւելի է տանջւում և ո՞վ քիչ, Սստծուն է լայտնի...

Կէս գիշերին նա գարթեցրեց ծառային և հրամայեց, որ առաւօտեան հինգ ժամին պատրաստ լինի ձին՝ կայտրան գնալու, լետոյ շորերը հանեց, պառկեց, բայց քնել չկարողացաւ: Մինչև առաւօտ լսելի էր նորան հօր օտների ձայնը, որ հանդարտ քայլում էր մի լուսամտուից դէպի միւսը և հառաչում: Ոչ ոք չէր քնել. ամենքը մէկ-մէկ խօսում էին, միայն շշիւնով: Երկու անգամ նորա մօտ եկաւ մայրը, միշտ դէմքի նոյն զարմացական և բուլթ արտայայտութեամբ. երկար խաչա-

կնքում էր նա նորան և ջղալին ցնցումներ
գործում...

Առաւօտեան հինգ ժամին ուսանողը
սիրալիր կերպով մնաս բարև ասաց բոլորին և
մինչև անգամ լաց եղաւ: Անցնելով հօր սե-
նեակի մօտից, նա դռնից ներս նայեց: Եւ-
զրաֆ Իւանովիչը շորերը հագին կանգնել էր
լուսամուտի մօտ և թըխկթըխկացնում էր
ապակիներին: Նա դես ևս չէր պառկել:

— Մնաք բարով, ես գնում եմ, ասաց նա:

Բարի ճանապարհ... Փողերը կլոր սե-
ղանի վրայ են, պատասխատեց հայրը առանց
շուռ գալու:

Երբ ձիապանը տանում էր նորան կայա-
րան՝ սառն և գզուելի եղանակ էր, գալիս
էր անձրև. արևածաղիկները աւելի էին խո-
նարհեցրել գլուխները, իսկ կանաչը աւելի
մուլթ գոյն էր ստացել:



Ս Ե Ի Ա Բ Ե Ղ Ա

Մագիստրոս Անդրէյ Վասիլիչ Կովրինը
բոլորովին լոգնել և քայքայել էր իւր ջղերը: Նա
չէր բժշկուում, բայց մէկ անգամ, զինու շի-
շը առաջներին, նա այդ մասին հարևանցօրէն
ասաց իւր բարեկամ բժշկին, որ խորհուրդ
տուեց նորան գարնան և ամառուան ամիս-
ները անցկացնել գիւղում: Հէնց այդ միջոց-
ներում Կովրինը ստացաւ մի երկար նամակ
Տանեա Պետոցիուց, որ հրաւիրում էր նորան
գիւղ՝ ժամանակ անցկացնելու: Անդրէյ Վա-
սիլիչը վճռեց գնալ:

Ապրիլ ամիսն էր: Անդրէյը նախ ուղև-
որուեց իւր ծննդավայր Կովրինկա գիւղը:
Այստեղ նա մնաց երեք շաբաթ, միայնու-
թեան մէջ անցկացնելով իւր օրերը: Ապա,
երբ ճանապարհները մի փոքր լաւացան, նա

ուղևորուեց դէպի իւր նախկին խնամակալ
և դաստիարակ Պետոցկու մօտ: Պետոցկին վայել-
լում էր Ռուսաստանում յայտնի այգեգործի
համբաւ: Սա տպրում էր Բօրիսոփա գիւղում,
որ գտանւում էր Կովրինկայից ոչ աւել քան
եօթանասուն վերստ հեռաւորութեան վրայ: Գարնանային
փափուկ ճանապարհով գնալը,
նստած ռեզինէ դօղերի վրայ փափուկ երեւ-
ւող կառքում, իսկական հաճոյք էր նորա
համար:

Պետոցկու տունը շատ մեծ էր, սիւնա-
զարդ և առիւծների քանդակներով, որոնց
վրայի ծեփը տեղտեղ վայր էր թափուել: Գըլ-
խաւոր մուտքի մօտ մշտապէս կանգնած էր
լինում սպասաւորը՝ քօւրքը հագին: Հին,
մռայլ և խոժոռ կերպարանք ունեցող այգին,
անգլիական ճաշակով ձևակերպուած, տարած-
ւում էր տանից մինչև գետը՝ գրեթէ մի ամ-
բողջ վերստ երկարութեամբ: Գետի ափը,
որտեղ վերջանում էր այգին, թեք էր՝ կա-
ւային փլուած շերտերով: Սյուտեղ տճել էին
մայրիներ, որոնց մերկացած արմատները նը-
ման էին բրթոտ թաթերի: Ներքևում պըս-
պղում էին ջրի ալիքները, մօշահաւերը ող-
բալի ծըծըւոցով ճախրում էին օդի մէջ և
առհասարակ այնտեղ մշտապէս տիրում էր
այնպիսի տրամադրութիւն, որ թէկուզ նստիր

և վէպ գրիր: Բայց գրա փոխարէն, հէնց
տան մօտը՝ բակում և այգու այն մասը,
ուր պտղատու ծառերն էին և փեթակները,
ուրախ էր: Երեսուն դեսետին ունեցող այգ-
ընդարձակ տարածութիւնը կենսուրախ տպա-
ւորութիւն էր թողնում նոյնիսկ վատ եղա-
նակին: Կովրինը ոչ մի տեղ չէր տեսել ծա-
ղիկների մի այնպիսի հարստութիւն որպիսին
կար այնտեղ: Հրաշալի վարդեր, շուշաններ,
կակաչներ և առհասարակ ամեն տեսակ ծա-
ղիկներ, սկսած բաց սպիտակագոյնից, մինչև
ամենաթունդ սևը, կարելի էր գտնել այնտեղ:
Դեռևս գարնան սկիզբն էր և ամենագեղե-
ցիկ ու փարթամ ծաղիկները դեռ պահուած
էին ջերմոցներում: Այն, ինչ արգէն կար
ծառուղիների երկարութեամբ և այս ու այն
ծաղկանոցներում, այնքանն էլ բաւական էր,
որ նրանց մէջ զբօսնողը զգար իրան գեղեցկի
աշխարհում, մանաւանդ վաղ առաւօտները,
երբ ամեն մի թերթիկի վրայ փայլում է վա-
ղորդեան ցօղը:

Դեռ մանուկ հասակից Կովրինի վրայ
առասպելական տպաւորութիւն էր թողել
այգու այն մասը, ուր միատեղ ի ցօյց էին
դրուած և աճեցրած այն բոլոր բոյսերի, ծա-
ռերի և ծաղիկների տեսակները, որ կային
այգում: Պետոցկին, ինքը արհամարանքով էր

վերաբերուած և համարուած էր այդ բոլորը չնչին բաներ: Ո՛րպիսի այլակերպութիւններ, որպիսի համայական ճնշումներ կատարուած բնութեան վրայ: Այնտեղ կային երկ-կարգ պտղատու ծառեր՝ տանձենիներ, նման բըր-գաձև կաղամախիների, գնդաձև կաղնիներ և լորենիներ, հսկանոցներ խնձորենիներից, կամարներ, ցուցանակներ, բազմաստեղեան աշտանակներ և մինչև անգամ շլորներից ձևակերպած 1862 թիւը՝ այսինքն այն թուականքը, երբ Պեսոցկին առաջին անգամ սկսեց պարապել այգեգործութեամբ: Պատահում էին այնտեղ և գեղեցիկ ուղղաձիգ ծառեր, որոնց բները, ինչպէս արմաւենիները, ուղիղ էր և կարծր. միմիայն ուշի ուշով նայողը կարող էր իմանալ, որ դրանք կոկոռչի և զարգաղաթի թփեր են: Մի քան, որ աւելի ուրախ տեսք և կենդանութիւն էր տալիս այգուն, այդ այն էր, որ այնտեղ տիրում էր մշտական շարժում: Վաղ առաւօտից մինչև երեկոյ ծառերի, թփերի մօտ, ծառուղիներում և ծաղկանոցներում մըջիւնների նման շարժում էին մարդիկ...

Կովրինը հասաւ Բարիսովկա երեկոյեան ժամը 10-ին: Տանեան և նորա հայր Եգոր Սիմէօնիչը մեծ իրարանցման մէջ էին: Պայծառ, աստղալից երկինքը և ջերմաչափը ցոյց

էին տալիս, որ լուսագէծին ցուրտ քամի կըլինի, որից կարող են վնասուել ծառերը: Տարաբախտաբար այգեպան Բւան Կարլիչն էլ գնացել էր քաղաք և ուրիշ ոչ ոքի վրայ չէր կարելի լոյս գնել: Անթրիքի ժամանակ ամբողջ խօսակցութիւնը պըտուում էր այդ հարցի շուրջը: Վճռուեց, որ Տանեան չքնի և գիշերուայ ժամը մէկին պտուղ գործի այգում տեսնելու, թէ ամեն բան կարգին է, իսկ Եգոր Սիմէօնիչը զարթնի ժամը երեքին և մինչև անգամ աւելի վաղ:

Կովրինը և Տանեան, ամբողջ երեկոն անցկացրին խօսելով և կէս գիշերն անց՝ դուրս եկան միասին գէպի այգի: Յուրա էր: Բակում սաստիկ խանձահոտ էր բնկել: Թանձըր, ժանտաղի ծուխը բռնել էր այգու պըտալատու ծառերի ամբողջ ընդարձակ տարածութիւնը, որ կոչւում էր այգու առևտրական մաս և իւրաքանչիւր տարի բերում էր Եգոր Սիմէօնիչին մի քանի հազար լուբլի գուտ արդիւնք: Ծառերը այդ մասում շարուած էին ուղիղ, կանոնաւոր. նրանք կարծես զինուորների վաշտեր լինէին: Խիտ կարգաւորութիւնը և այն հանդամանքը, որ բոլոր ծառերը մի բարձրութեան էին և ունէին բոլորովին միատեսակ զազաթներ և բներ, տեսարանը դարձնում էին միօրինակ և մինչև

անգամ ձանձրալի: Կովրինը և Տանեան-ան-
ցան ծառերի շարքերով, ուր այս ու այն
կողմ մխում էին աղբից, յարդից և ամեն տե-
սակ մնացորդներից կազմուած խարոյկներ:
Մշակները, ինչպէս ստուերներ, թափառում
էին ծխի մէջ: Ծաղկել էին միայն կեռասի,
չլորի ծառերը և խնձորենիների մի քանի
տեսակները: Ամբողջ այգին թաղուած էր
ծխի մէջ և միայն շնկարանքի մօտ Կովրինը
կարողացաւ ազատ շունչ քաշել:

— Դեռ մանուկ հասակից, ես այստեղ
չէի կարողանում տանել ծուխը և փոշտում
էի, ասաց Կովրինը թափ տալով ուսերը,
մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ,
թէ ինչպէս կարող է այժմ ծուխը ցրտից ա-
զատել ծառերը:

— Երբ չկան ամպեր, ծուխը փոխարի-
նում է նրանց, պատասխանեց Տանեան:

— Իսկ ինչ հարկաւոր են ամպերդ:

— Մտախիլապատ ամպոտ եղանակին չի
լինում: ցուրտ քամի

— Այ թէ ինչ:

Եւ նա ծիծաղեց ու բռնեց Տանեայի
ձեռքից: Օրիորդի լայներես, չափազանց լուրջ
և ցրտից կապտած դէմքը սև, նուրբ յօնքե-
րով և նիհար ու վայելչակազմ իրանը, դուր-
զուրանք էին յարուցանում Կովրինի մէջ

դէպի նա: Վերնագգեստի բարձր օձիքը խան-
գարում էր Տանիային ազատ շարժել գլուխը:
Նա մի ձեռքով հաւաքել էր շրջազգեստի
փէշերը՝ գիշերային ցօղից թաց չլինելու
համար:

— Ստուած իմ, նա արդէն չափահաս
է դառել, ասաց Կովրինը: — Սորանից հինգ
տարի առաջ, երբ ես վերջին անգամ գնացի
այստեղից, դուք դեռևս բոլորովին երեխայ
էիք, շատ նիհար, երկար ոտներով, հագնում
էիք կարճ զգեստ և ես բարկացնում էի ձեզ
կատակներով... Ժամանակը ինչպէս փոխում
է մարդկանց:

— Այո, հինգ տարի, (հառաչեց Տանեան: —
Շատ բան է անցել այն օրից: ձշմարիտ
ասացէք, Անդրիւշա, դուք չէք ստուել մե-
զանից, ասաց Տանեան նայելով Կովրինի դէմ-
քին: Ե՛հ, ինչ եմ հարցնում: Դուք տղա-
մարդիկ ապրում էք հետաքրքիր կեանքով,
դուք արդէն մեծ մարդ էք... և ստանու-
թիւնը շատ բնական է: Բայց ինչ էլ որ լի-
նի, Անդրիւշա, իմ ցանկութիւնն է, որ դուք
մեզ ձեր վերաբերմամբ օտար չհամարէք. մենք
ուներնք իրաւունք ձեզանից այդ սպասելու:

— Ես ձեզ օտար չեմ համարում, Տանեա:

— Ազնիւ խօսք:

— Այո, ազնիւ խօսք:

— Դուք այսօր գարմացաք, որ մենք այնքան շատ ունինք ձեր լուսանկարներից: Հայրս պաշտում է ձեզ: Երբեմն ինձ թւում է, որ նա ձեզ աւելի է սիրում, քան ինձ: Նա պարծենում է ձեզանով: Դուք գիտնական էք, բարձր սովորական մարդկանցից, ստեղծել էք ձեզ համար արդէն փալլուն ապագայ: Հայրս հաւատացած է, որ դուք այդպիսի մարդ դարձաք, որովհետեւ ինքն է դաստիարակել ձեզ: Ես չեմ խանդարում նորան այդպէս մտածելու, թող մտածի:

Արդէն սկսել էր լուսանայլ: Օգի մէջ աւելի որոշ երևում էին ծուխը և ծառերի կատարները: Սոխակները երգում էին, իսկ հեռու դաշտերից լսում էր լրբամարգերի աղաղակները:

— Սակայն ժամանակ է քնելու և ցուրտ էլ է, ասաց Տանեան բռնելով Կովրինի ձեռքից: Ենորհակալութիւն, Սնդրիւշա, որ եկաք: Մեր ծանօթները անհետաքրքիր մարդիկ են և այն էլ քիչ: Մենք ունինք միմիայն այգի, այգի, այգի և ուրիշ ոչինչ: Ծառի բուն, կիսաբուն, սագախնձոր, հարսնախնձոր, կաթնախնձոր պատուաստումն... ահա թէ ինչ բաներ են մեզ հետաքրքրում և ինչով ենք զբաղուած, — ասաց նա ծիծաղելով: Մեր ամբողջ կեանքը կապուած է այգու հետ. մինչև անգամ

են նորան Մարսի և կամ հարաւային Խաչի որևէ աստղի վրայից: Բայց, սիրելիս, առասպելի ամենաէականը և հետաքրքրականը այն է, որ ուղիղ հազար տարի անց այն օրից, երբ սե արեգան գնալիս է եղել անապատով, նորա կրկներևութիւնը դարձեալ պէտք է ընկնի մեր մթնոլորդի մէջ և երևայ մարդկանց: Հազար տարին որպէս թէ լրանում է... և մենք սե արեգային սպասելու ենք այսօր կամ վաղը:

— Տարօրինակ օգտերևութ է, ասաց Տանեան, որին դուր չեկաւ առասպելը:

— Բայց ամենից գարմանային այն է, ծիծաղելով ասաց Կովրինը, որ ես ոչ մի կերպ չեմ կարողանում մտաբերել, թէ որտեղից է իմ գլուխը մտել այդ առասպելը, կարգացել եմ որևէ զրքում, լսել եմ, թէ երագում եմ տեսել: Երգում եմ, որ չեմ լիշում: Առասպելը ինձ զբաղեցնում է և ես այսօր ամբողջ օրը նրա մասին եմ մտածել:

Արձակելով Տանեային հիւրերի մօտ, Կովրինը դուրս եկաւ տձնից և խորատուգճված անցաւ ծաղկանոցների մօտով: Արեգապարզ արդէն մայր էր մտնում: Ծաղիկները նոր էին ջրուած և տարածում էին օդի մէջ խոնաւ, բայց դուրեկան բուրմունք: Տան մէջ սկսեցին նորից երգել, ջութակի ձայնը

Տեոուից մարդկային ձայնի տպաւորութիւն էր թողնում: Կովրինը լարելով չիշողութիւնը, որպէսզի մտաբերէ, թէ որտեղ է լսել և կամ կարգացել առասպելը. ի՛նչ դանդաղ քայլերը ուղղեց զէպի ծառաստանը և աննկատելի կերպով հասաւ մինչև գետը:

Գետի զառիվայր ափով և ծառերի մերկացած արմատների վրայով անցնում էր մի նեղ կածան: Կովրինը այդ նեղ ճանապարհով իջաւ զէպի գետը: Նորա երևալը անհանգստացրեց մօրահաւերին և վախեցրեց երկու բաղերի: Մօռայ մայրիկների գազաթները տեղ-տեղ դեռ լուսաւորուած էին մայր մտնող արեգակի վերջին ճառագայթներով, իսկ գետի մակերևույթի վրայ արդէն կատարեալ երեկոյ էր: Կովրինը քարերի վրայով անցաւ գետի միւս կողմը: Նժրա առաջ այժմ տարածւում էր մի ընդարձակ դաշտ, որ ծածկուած էր դեռ նոր բուսած և չճաղկած հաճարի արտերով: Ոչ մի մարդկային բնակութիւն, ոչ մի կենդանի շունչ չէր երևում այնտեղ: Կովրինին թւում էր, թէ կածանը, որի վրայ արդէն ինքը դուրս էր եկել, կըտանի իրան այն առասպելական տեղը, ուր մայր մտաւ արեգակը և որտեղ այնպէս փառահեղ կերպով դեռ վառւում էր երեկոյեան վերջալոյսը:

«Ո՛րքան այտեղ խաղաղ է և ազատ, մտածում էր Կովրինը. ամբողջ աշխարհը կարծես ինձ վրայ է նայում, թաք է կացել և սպասում է, որ ես հասկանամ նորան...»:

Բայց ահա հաճարի արտերը սկսեցին ալեկոծուել: Երեկոյեան մեղմ գեփիւօը շուտով անցաւ նրանց վրայով: Մի րոպէ անց, նորից փչեց քամին, բայց արդէն աւելի սաստկութեամբ. հաճարը տարուբերուեցաւ և լետուից լսուեցաւ մայրիկների խուլ հառչանքը: Կովրինը զարմառքի մէջ էր: Հորիգունի վրայ, փոթորկի, կամ թաթառի նմանութեամբ երկրից զէպի երկինք բտրձրանում էր մի երկար սև սիւն: Ստուերագծերը պարզ չէին, բայց իսկոյն կարելի էր որոշել, որ նա մի տեղում կանգնած չէ, այլ սաստիկ արագութեամբ շարժւում է ուղղակի Կովրինի վրայ: Որքան սիւնը մօտենում էր, նա այնքան աւելի պարզ էր երևում և համեմատաբար փոքր: Կովրինը շտապով գցեց իրան հաճարի արտը, որպէսզի ճանապարհ տայ նրան: Նա հագիւ կարողացաւ այդ անել...

Սրբեղան սև վերարկուով և ձեռքերը ծալած կրճքին, անցաւ մօտիցը. նորա գլուխը սպիտակահներ էր և յօնքերը սև... Նժրամերկ ոտները չէին հասնում գետնին: Անցնելով երեք սաժէն տարածութիւն, նա լետ

նայեց, գլխով արաւ Կովրինին, ժպտաց փա-
ղաքշաբար և միւսնոյն ժամանակ խորա-
մանկ կերպով: Բայց որպիսի նիհար և
սարսափելի գունատ դէմք: Նորից աճելով՝
նա անցաւ գետը, ընդհարուեց կաւահող ա-
փին, մայրիներին և ինչպէս ծուխ անյայտա-
ցաւ նրանց միջոք:

— Ահա տեսնում էք... մրմնջաց Կով-
րինը. նշանակում է առասպելի մէջ կայ
ճշմարտութիւն:

Կովրինը վերադարձաւ տուն, չաշխատե-
լով ինքն իրան բացատրել օտարոտի երևոյթի
պատճառը: Այն հանգամանքը, որ նա կարո-
ղացել էր այնքան մօտիկից պարզ տեսնել ա-
բեղայի ոչ միայն սև վերարկուն, այլև դէմ-
քը, աչքերը, լցնում էր նորա սիրտը լի գո-
հանակութեամբ:

Ծառաստանում և այգում հանդարտ
անց ու դարձ էին անում մարդիկ, իսկ տա-
նը դեռ նուազում էին, ետևաբար ոչ ոք
չէ տեսել արեղային: Նա սաստիկ ցանկանում
էր այդ բոլորի մասին պատմել ճանեային և
Եգոր Սիմէօնիչին, բայց մտածեց, որ նորանք
հաւանաբար զառանցանքի տեղ կըղնեն իւր
խօսքերը և կըսկոեն անհանգիստ լինել իր
մասին: Լաւ է լուել: Ուրախ տրամադրութեան
տակ՝ Կովրինը մտաւ հիւրասենեակը, որ սկսեց

բարձր ծիծաղել, երգել և պարել հիւրերի
հետ: Ամենքը նկատում էին, որ նա այսօր
ուրախ է, ոգևորուած, և դէմքը կարծես
պայծառացել է:

III

Ընթրիքից յետոյ, երբ հիւրերը գնացին,
Կովրինը առանձնացաւ իւր սենեակը և պառ-
կեց բազմոցի վրայ: Նա ցանկանում էր մտա-
ծել արեղայի մասին, բայց մի բոլորից լեռո
ներս մտաւ ճանեան:

— Անդրիւշն, ահա կարգացէք հայրկի
յօգուածները, ասաց նա, տալով Կովրինին
մի կապոց բրօշիւրներ և սրբագրութիւններ:
Գեղեցիկ յօգուածներ են: Նա լաւ է գրում:
— Լաւ, — վրաբերեց Եգոր Սիմէօնիչը
ճանեայից յետոյ մտնելով ներս սենեակը և
տկամայ ծիծաղելով: Խնդրեմ չլսես դժբան և
չկարգաս, բայց եթէ ցանկանում ես քնել,
չնորհ արն, գեղեցիկ միջոց են քուն բերելու:

— Իմ կարծիքով շատ գեղեցիկ յօգուած-
ներ են, ասաց ճանեան խոր համոզմունքով.
Կարգացէք, Անդրիւշն, և ինքներդ կըհա-
մոգէք հայրկիին աւելի լաճախ գրել: Նա
կարող էր այգեպանութեան լիակատար ձեռ-
նարկ պատրաստել:

Եզոր Սիմէօնիչը սկսեց հրհռալ, կարմրեց և այնպիսի խօսքեր էր ասում, որպիսիքն սովորաբար ասում են ամաչկոտ հեղինակները: Վերջապէս նա սկսեց անձնատուր լինել: — Այդ դէպքում ամենից առաջ կարգա՛ Գօշի յօղուածը և ահա այս ուսուերէն յօղուածները, ասաց նա, դողդոջուն ձեռքերով ջուղկկելով բրօշիւրները. հակառակ դէպքում քեզ համար անհասկանալի կըլինի: Առաջ քան կարգալը իմ առարկութիւնները, պէտք է ծանօթանաս, թէ ինչ նիւթի մասին եմ առարկում: Բայց ինչ եմ ասում, լիմա՛բ բաներ են... ձանձրալի ե ժամանակ էլ է քնելու:

Տանեան դուրս եկաւ: Եզոր Սիմէօնիչը նստեց Կովրինի մօտ, բազմօցի վրայ և խորը հառաչեց:

— Այն, իմ եղբայր, սկսեց նա մի փոքր լուսթիւնից լետույ, այդպէս իմ սիրելի մագիստրոս: Տես, յօղուածներ էլ եմ գրում, մասնակցում ցուցահանդէսների, ստանում եմ մեղալներ... Պեսոցկու խնձորները գլխու չափ են, Պեսոցկին, ասում են, այգիով իրան համար կարողութիւն ձեռք բերեց; մի խօսքով հարուստ և երջանիկ է Կաչուբէլը: Բայց ինչու են պէտք այդ բոլորը, հարցնում եմ: ձշմարիտ որ այգին գեղեցիկ է և օրինակելի... Դա այգի չէ, այլ մի ամբողջ հիմնարկութիւն,

որ ունի պետական բարձր նշանակութիւն, որովհետև դա, այսպէս ասած, առաջին աստիճանն է դէպի ուսական տնտեսութեան և արհեստագործութեան նոր գորագլուխը: Բայց ինչու համար, ինչ նպատակ:

— Գործը խօսում է իր մասին:

— Ես այդ մտքով չեմ ասում: Ես ցանկանում եմ իմանալ, թէ ինչ կըլինի այգիս, երբ ես մեռնեմ: Այն դրութեամբ, ինչ տեսնում ես դու այժմ, իմ մահից լետ նա չի դիմանայ և մի ամիս անդամ: Յաջողութեան ամբողջ գաղտնիքը նրանում չէ, որ այգին մեծ է և բանւորներ շատ, այլ այն, որ ես սիրում եմ գործը, ես սիրում եմ այգին, թերևս իմ անձից աւելի: Նայիր ինձ, ես ինքս եմ ամեն բան անում, աշխատում եմ առաւօտից մինչև գիշեր: Բոլոր պատուաստները ես եմ անում, ինքս եմ տնկում ծառերը, կտրատում նրանց աւելորդ մասերը, մի խօսքով ամեն ինչ ես եմ անում: Ես չեմ սիրում, երբ ինձ օգնում են, այդպիսի բոպէներում իմ մէջ զարթնում է նախանձ, ես դառնում եմ կոպիտ: Յաջողութեան ամբողջ գաղտնիքը սիրոյ մէջ է. անհրաժեշտ է, որ այգետէրը աջալուրջ հետևէ գործին, չիմալէ իւր բանակ ձեռքերը: Գործին նա պէտք է անձնատուր լինի բոլոր հօգով, այնպէս որ,

եթէ պատահի երբեկցէ մի ժամով հիւր լինել ուրիշ տեղում, նորա սիրտը անդադար այգու հետ լինի, նա անհանգստութիւն զգայ նստած տեղումը, մտածելով թէ ինչ կարող է պատահել այգու հետ իւր բացակայութեան ժամանակ: Երբ ես մեռնեմ, ո՞վ պէտքէ հետեւէ այգուն, այգեպանը, թէ բանւորները: Ահա, սիրելի բարեկամ, մեր գործում առաջին թշնամին օտար մարդն է և ոչ նապաստակը, բզէզը և կամ ցուրտը:

— Հապա Տանեան ինչ է, — ծիծաղելով հարցրեց Կովրինը: Անկարելի է, որ նա աւելի վնասակար լինի, քան նապաստակը: Նա սիրում է և հասկանում է գործը:

— Այո, նա սիրում է և հասկանում է գործը: Եթէ իմ մահից լետոյ նորա ձեռքն ընկնի այգին և նա անձամբ սիսէ կառավարել, անկասկած լաւ կըլինի: Բայց եթէ նա, Աստուած ոչ անէ, ամուսնանայ, շշիւնով ասաց Եզոր Սիմէօնիչը և վախեցած նայեց Կովրինի փրայ: Ամուսնանալուց լետոյ, կ'ունենայ երեխաներ և այնուհետեւ այգու մասին մտածելու ժամանակ էլ չի ունենայ: Ահա թէ ինչպէս եմ գլխաւորապէս վախենում: Ամուսինը կարող է լինել մի երիտասարդ, որ շատ փոք ստանալու ակնկալութեամբ, աճուրդով կըտայ այգին մանրավաճառներին և հէնց առաջին

երազումս բացի խնձորից և տանձից ուրիշ ոչինչ չեմ տեսնում: Իհարկէ այդ բոլորը լաւ են և օգտակար, բայց երբեմն մարդ ցանկանում է և որևէ ուրիշ բան ձանձրալի միակերպութիւնից խոյս տալու համար: Ես լիչում եմ, երբ դուք արձակուրդներին, կամ հէնց այնպէս, երբ գալիս էիք մեզ մօտ, տան մէջ մի տեսակ թարմութիւն էր ընկնում, նա աւելի պայծառանում էր, կարծես շար հանուած լինէին ջահից և կահ, կարասիներից ծածկոցները: Ես այն ժամանակ փոքր էի, բայց այնուամենայնիւ հասկանում էի:

Տանեան խօսում էր երկար և խորը զգացումով: Կովրինի գլխում չանկարծ ծագեց այն միտքը, որ ինքը ամառուայ ընթացքում կարող է կապուել այդ փոքր, թոյլ, շատակար խօս արարածին, գրաւուել նորանով, սիրահարուել նորա վերայ: Նորանց գրութեան մէջ, այդ շատ կարելի էր և բնական և այդ միտքը հաճուք էր պատճառում նրան: Նա խոնարհուեց դէպի Տանեայի գեղեցիկ և մտազբաղ դէմքը ու կամացուկ երգեց.

Չեմ ծածկում քեզանից Անէգին.
Խելքից դուրս սիրում եմ Տանեային.
Երբ վերագարձան տուն, Եզոր Սիմէօ-

նիչը արդէն վեր էր կացել: Կովրինը չէր ցանականում քնել. նա սկսեց խօսել ծերունու հետ և նորա հետ միասին վերադարձան այգի: Եգոր Սիմէօնիչը բարձրահասակ էր, լայնաթիկունք, գուրս ընկած փորով և տանջոււմ էր շնչարգելութեամբ, բայց միշտ այնպէս արագ էր քայլում, որ գժուար էր նորա յետևից հասնել: Նորա գէմքը կրում էր չափազանց մտազբաղ մարդու արտայայտութիւն: Եարունակ շտապում էր և այն մի այնպիսի ձևով, որ կործես, եթէ մի բոպէ անգամ ուշանայ, ամեն բան արդէն կորած կըլինի:

— Այ քեզ բան... (սկսեց Եգոր Սիմէօնիչը կանգ առնելով, որպէսզի շունչ քաշէ: Գետնի վրայ, ինչպէս տեսնում ես, եղեամ է դրել, բայց փայտի վրայ բարձրացրու ջերմաչափը մէկ-երկու սաժէն գետնից բարձր և այնտեղ տաք է... ինչո՞ւն է այդ:

— Ծշմարիտ ասած՝ չգիտեմ, ասաց Կովրինը ծիծաղելով,

— Հըմ... Ամեն բան գիտենալ, իհարկէ, անկարելի է... Որքան էլ որ լայնածաւալ լինի մարդու ուղեղը, այնուամենայնիւ ամեն ինչ չի կարելի տեղաւորել այնտեղ: Գու, կարծեմ, դարձեալ աւելի փիլիսոփայութեամբ ես հետաքրքրուում...

— Այո, կարգում եմ հոգեբանութիւնից, բայց ընդհանրապէս պարապում եմ փիլիսոփայութեամբ:

— Քեզ չի՞ ձանձրացնում:

— Ընդհակառակը հէնց դորանով եմ ես միայն աղբում:

— Տայ Աստուած... շարունակեց Եգոր Սիմէօնիչը, մտածման մէջ շօյելով իւր սպիտակահէր այտամօրուսը: Տայ Աստուած: Ես շատ ուրախ եմ... ուրախ եղբայր...

Բայց յանկարծ ինչ որ ձայն հասաւ նորա ականջին, նաբա գէմքը խոժոռուեց, նա վազեց գէպի այն կողմը, որտեղից ձայնն էր գալիս և շուտով անյայտացաւ ծառերի ու ծխի ամպերի մէջ:

— Ո՞վ է կապել ձին խնձորենուց, լըսուեցաւ նորա յուսահատական, սիրտ կորաւտող աղաղակը: Ո՞ր անպիտանն, որ անըզգամն է համարձակուել անել այդ: Աստուած իմ, Աստուած իմ, փչացրին, ցրտահար արին, սպրտկանեցին այգիս, այգիս փչացաւ. նիս Աստուած:

Երբ նա վերադարձաւ Կովրինի մօտ, նորա գէմքը կրում էր տանջոււմ, վերաւորուած մարդու արտայայտութիւն:

— Ի՞նչպէս վարուել այս անիծուած ժողովրդի հետ, ասաց նա լացակումած և ձեռքերը պարզելով: Ստեօպկան գիշերը աղբ է կրել և ձին կապել ծառից. անպիտան կենդանին խճճուել է, քաշքշուել և դորանով ծառի արմատները երեք տեղ վնասուել են: Այս ինչ է, հարցնում եմ նորան, իսկ նա տխմարը, միմիայն աչքերն է ճրպճպացնում և լռում: Այդպիսիներին կախելը դեռ քիչ է:

Հանգստանալով՝ նա փաթաթուէց Կովրինին և համբուրեց նորան:

— Տայ Աստուած... Աստուած տայ... մըրմնջաց նա: — Ես շատ ուրախ եմ, որ եկար, չափազանց ուրախ: Ենորհակալութիւն: Յետոյ նա նոյն արագ քայլուածքով և մտազբաղ դէմքով անցաւ ամբողջ այգին ու ցոյց տուէց իւր նախկին սանին այգու բոլոր մասերը և աչքի ընկնող տեղերը:

Դեռ նորանք շրջում էին, որ ծագեց արեգակը և պայծառ լուսաւորուէց այգին: Օրը սկսեց տաքանալ: Պայծառ, գեղեցիկ օրուէայ նախազգացումը լցրեց Կովրինի սիրտը մի առանձին բերկրութեամբ: Նա լիջեց, որ այդ դեռ մայիսուէայ սկիզբն է, որին յաջորդելու է մի ամբողջ ամառ: Նոյնքան գեղեցիկ, պայծառ ու երկար օրերով և նա զգաց սրտի մի այնպիսի ուրախութիւն, որպիսին

զգում էր մանուկ հասակում, երբ վազվզում էր այգու մէջ: Այդ տպաւորութեան տակ նա ինքը փաթաթուէցաւ ճերունուն և գուրգուրանքով համբուրեց նորան: Երկուսն էլ զգացուած՝ գնացին տուն և նստան թէյ խմելու հին, ճենապակեայ բաժակներով. թէյի հետ կային հումսեր և շաքարեհաց: Այս փոքր բաներն անգամ նորից լիջեցրին Կովրինին իւր մանկութիւնը և երիտասարդութիւնը: Գեղեցիկ ներկան և անցեալի քաղցր լիշողութիւնները միախառնուելով նորա հոգու մէջ, առաջացրել էին ճնշող բայց հաճելի զգացում:

Կովրինը սպասեց մինչև Տանեայի քնից վերկենալը, որի հետ սուրճ խմեց և ապա մի զբօսանք կատարելով, գնաց իւր սենեակը պարապելու: Նա ուշադրութեամբ կարդում էր, նկատողութիւններ էր անում և երբեմն միայն բարձրացնում էր աչքերը, որպէսզի նայէ բաց լուսամուտներից և կամ գիտէ թարմ, առսուտեան ցօղով դեռ ծածկուած ծաղիկներով, որոնք ծաղկամաններով դրուած էին սեղանի վրայ: Նա նորից կախ էր գցում աչքերը գրքի վրայ և նորան թուում էր, որ իւր մարմնի իւրաքանչիւր ջիղը, ամեն մի երակը լի է գոհութեան զգացմունքով:

II

Գիւղում Կովրինը սկսեց վարել նոյնպէսի ջղային և անհանգիստ կեանք, որպիսին քաղաքում: Նա շատ էր կարգում և գրում, սովորում էր իտալերէն: Զբօսնելու ժամանակ էլ նա ամբողջովին հեռու չէր պարապմունքից, այն միտքը, որ շուտով դարձեալ նստելու է պարապելու, հաճոյք էր պատճառում նորան: Նա այնքան քիչ էր քնում, որ ամենքը գործանում էին: Երբ լինում էր, որ ցերեկը պատահամբ քնում էր կէս ժամ, այնուհետև արդէն ամբողջ գիշերը այլևս չէր քնում ու գործանալին այն էր, որ անքուն գիշերից լետ, նա լինում էր առոյգ և ուրախ:

Նա խօսում էր շատ, խմում էր զինի և ծխում թանկագին սիգարներ: Պետոցկիների մօտ չաճախ գրեթէ ամենաչն որ, գալիս էին երկու հարևան օրիորդներ, սրոնք Տանայի հետ միասին դաշնամուր էին նուագում և երգում: Երբեմնապէս գալիս էր և մի երիտասարդ, դարձեալ հարևան, որ գեղեցիկ ածում էր ջուլթակ: Կովրինը լսում էր երաժշտութիւնը և երգեցողութիւնը ազահուլթեամբ: Այդ երկուսն էլ խիստ ազգում էին նորա վրայ, որ չաճախ ֆիզիքապէս արտա-

յայտում էր նորա գէմքի վրայ: Նորա աչքերը վառւում էին, իսկ գլուխը թեքւում էր մի կողքի վրայ:

Մէկ անգամ, երեկոյեան թէյից լետոյ, նա նստել էր պատշգամբում և կարգում էր: Հիւրասենեակում այդ ժամանակ Տանեան, օրիորդները և երիտասարդը ջուլթակի վրայ սովորում էին Բրագի լայտնի գիշերերգը: Տանեան երգում էր սօփրանօ, իսկ օրիորդներէց մէկը կոնտրալայ: Կովրինը աշխատում էր լսել բառերը. նրանք ուսներէն էին, էր լսել բառերը. նրանք ուսներէն էին, բայց ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ նրանց միտքը: Աերջապէս վայր գնելով գիրքը, նա սկսեց ուշադրութեամբ լսել և հասկացաւ. հիւանդ երևակայութեամբ աղջիկը գիշերը այգում լսում է ինչ որ խորհրդաւոր ձայներ: Այդ ձայները լինում են մինչ այն աստիճան գեղեցիկ և արտասովոր, որ աղջիկը ստիպուած է լինում խոստովանել, թէ դա սրբազան երաժշտութիւն է, որ մեզ մահկանացուներին համար անհասկանալի է, ուստի և դարձեալ բարձրանում է դէպի երկինք: Կովրինի աչքերը սկսեցին խփռել: Լետոյ նա վեր կացաւ և կարծես ուժաթափ եղած, անցաւ հիւրասենեակով, ապա դահլիճով և երբ երգեցողութիւնը դադարեց, նա

բունեց Տանեայի ձեռքից և նորա հետ դուրս եկաւ պատշգամբը:

— Այսօր հէնց առաւօտունից ինձ զբաղեցնում է մի ինչ որ առասպել, ասաց նա: Չեմ լիշում կարգացել եմ որևէ գրքում, թէ լսել եմ ուրիշներից: Առասպելը շատ օտարտի է, մութ և ոչ մի բանի չչարմար-
ւող: Հագար տարի սրանից առաջ, ինչ որ արեղայ, սև հագած, գնում էր Սրբբիայի, թէ Նուբիայի անապատով: Մի քանի մղոն հեռու այնտեղից, որտեղով գնալիս է եղեւսև արեղան, ձկնորսները տեսնում են մի ուրիշին՝ լճի վրայ գնալիս: Այդ երկրորդ արեղան կրկնե-
րւայթ է լինում: Այժմ մոռացէք լուսի բո-
ւոր կանոնները, որոնց իհարկէ առասպելը չի բնդունում և լսեցէք շարունակութիւնը: Կրկներեւոյթից ստացւում է երկրորդը, յետոյ երրորդը, և այդպիսով սև արեղայի պատկերը սկսում է անվերջ հաղորդակել մթնոլորդի մի շերտից միւսը: Նորան տեսնում էին մէկ Աֆրիկայում, մէկ Իսպանիայում, մէկ Հրնդ-
կաստանում և կամ հեռու հիւսիսում... Աեր-
ջապէս նա դուրս է գալիս երկրի մթնոլորդի սահմաններից և այժմ թափառում է ողջ տիեզերքի մէջ, երբէք չընկնելով այնպիսի պայմանների մէջ, որ կարողանայ աղօտանալ, նսեմանալ: Շատ կարելի է այժմ տեսնում

տարում ամեն ինչ կրփշանայ: Կանալք մեր գործում, Աստուածային պատիժ են:

Եգոր Սիմէօնիչը հաւայեց և լսեց մի փոքր:

— Անկեղծ ասած, ես չեմ ցանկանում, որ Տանեան ամուսնանայ: Գուցէ դա եսասիրու-
թիւն է իմ կողմից, բայց ինչ արած, ես վա-
խենում եմ: Մեզ մօտ յաճախ գալիս է ինչ որ երիտասարդ և ջութակ է ճրնկճնկաց-
նում: Լու գիտեմ, որ Տանեան այդ պարո-
նին երբէք չի առնի, համոզուած եմ, բայց և այնպէս չեմ կարող տանել նորա ներկա-
յութիւնը: Պէտք է խոստովանուել, եղբայր, որ ես շատ տարօրինակ մարդ եմ:

Եգոր Սիմէօնիչը վերկացաւ և լուզուած սիսեց քայլել սենեակի մէջ: Նա ցանկանում էր, ինչ որ կարենոր բան ասել, բայց չէր համարձակում:

— Ես քեզ չափազանց սիրում եմ և պէտք է խօսեմ հետդ անկեղծութեամբ, վերջապէս ասաց նա, ձեռքերը գնելով գրպանները: Մի քանի փափուկ հարցերի ես վերաբերում եմ պարզ և ուղղակի ասում եմ այն, ինչ որ մտածում եմ. տանել չեմ կարող այսպէս ասած զաղտնի խորհուրդներ, մտքեր: Ասում եմ պարզ, դու միակ մարդն ես, որին կարող էի առանց երկիւղի տալ աղջկաս: Գու խե-
լացի մարդ ես, և զգայուն և թույլ չես տայ,

որ մեռնի իմ սիրած գործը: Ահա գլխաւոր պատճառը: Ես քեզ որդու պէս սիրում եմ... և պարծենում եմ քեզանով: Եթէ քո և Տանեայի մէջ փոխադարձ սէր և ամուսնութեան ցանկութիւն առաջ դար, ես շատ ուրախ կըլինէի և մինչև անգամ բախտաւոր: Ասում եմ պարզ, առանց քաշուելու, ինչպէս ազնիւ մարդ:

Կովրինը ծիծաղեց: Եզոր Սիմէօնիչը դուռը բաց արաւ դուրս գնալու և կանգ առաւ շէմքի վրայ:

— Եթէ դու և Տանեան որդի ունենաք, ես նորան այգեգործ կըգործնեմ, ասաց նա մտածելով: Սակայն դա դատարկ երեւակայութիւն է... Գիշեր բարի:

Միայնակ մնալով՝ Կովրինը պառկեց, ինչպէս յարմար էր և սկսեց կարգալ յօդուածները: Սրտնք կրում էին գանազան վերնագրեր, ինչպէս օրինակ. «Մէջ ընդ մէջ հողի մշակման մասին», «Մի քանի խօսք պ. Հ. նկատողութիւնների առթիւ», «Ելի մի քանի խօսք պատուատման մասին քնած ակնուէրով» և այլն: Բոլորի մէջ էլ ընդհանրապէս նկատուում էր խիստ, յարձակողական տօն: Այն յօդուածները, որոնց վերնագրին նայելով, պէտք է որ մեղմ ոճով գրուած լինէին, սակայն նրանք էլ գերծ չէին խիստ, յարձա-

կողական տօնից, որ մինչե նոյն իսկ ջղայնութեան էր հասնում: Այսպէս օրինակ «Ռուսական Անտոնովկա խնձորի մասին» յօդուածում, որ ըստ երևոյթին աւելի մեղմ պէտք է գրուած լինէր, նա կծու խօսքերի մի ամբողջ հեղեղ ուղղում է այգեգործների հասցէին, որոնք ուսումնասիրում են բնութիւնը ամբիօնների բարձրութիւնից, անուանելով նորանց դիպլոմաւոր տգէտներ: Այդ յօդուածը սկսում էր «audiatur altera pass» և վերջանում «sapienti sat» խօսքերով: Լաւ չէր խօսում և Գօշի մասին, որի լաջողութիւնը բացատրում էր ընդհանուր տգիտութեամբ: Այդտեղ նա միևնոյն ժամանակ անկեղծ ցանկութիւն էր լայտնում, որ այժմ արգելուում է պտուղ գողացող, ծառեր կոտրատող գիւղացիներին թակել ձաղկիչներով:

«Գեղեցիկ գործեր են, մտածեց Կովրինը. այստեղ կայ առողջ միտք, բայց նոյնպէս և կիրք ու կռիւ: Երևի ամեն տեղ և բոլոր ասպարէզներում էլ գաղափարական մտքիկ լինում են ջղային ու աչքի ընկնում զգայունութեամբ: Հաւանաբար այդպէս էլ հարկաւոր է»:

Նա լիշեց Տանեային, որին այնքան դուր են գալիս Եզոր Սիմէօնիչի յօդուածները: Գունատ, նիհար, ոչ մեծ հասակով օրիորդը, իւր լայն բացուած, թուխ ու խելացի

աչքերով, որ շարունակ լաւած ուր որ նա-
յում են և կարծես մի բան որոնում, այժմ
գրաւել էր Կովրինի ուշադրութիւնը: Քալ-
ուածքը մանր է և արագ, ինչպէս հօրը,
շատ խօսում է, սիրում է վիճել և այդ ժա-
մանակ ամենաչնչին խօսքերն անգամ արտա-
բերում է դէմքի մի առանձին արտայայտու-
թեամբ: Երևի շատ ջղային է:

Կովրինը սկսեց շարունակել կարգալը,
բայց ոչինչ չհասկանալով, վեր գցեց գերքը:
Նախկին ուրախ տրամադրութիւնը, որի ազ-
դեցութեան տակ նա քիչ առաջ պարում
էր և լում երաժշտութիւնը, այժմ ճնշում
էր նորա սիրտը, և առաջացրել էր նորա մէջ
մի շարք մտքեր: Նա վեր կացաւ և սկսեց
քայլել սենեակում, մտածելով սև արեղայի
մասին: Նիւթէ այդ օտարոտի և անբնական
երևոյթը միմիայն ես եմ տեսել, նշանակում
է, որ ես հիւանդ եմ, իմ ուղեղը բնական
գրութեան մէջ չէ, մտածում էր նա: Կով-
րինը երկիւղ զգաց, բայց այդ երկար չտևեց:

«Ձէ որ ոչ ոքի վատ բան չեմ անում,
հետեւաբար իմ ուղեղային հիւանդութիւնը
վնասակար չէ», մտածեց նա և նորան զար-
ձեալ վերագարձաւ իւր նախկին ուրախ տրա-
մադրութիւնը:

Նա նստեց բազկաթոռի վրայ, երկու
ձեռքերով բռնելով գլուխը: Անհասկանալի ու-
րախութիւնը լցրել էր նորա ամբողջ հոգին:
Նա նորից վեր կացաւ, անցաւ սենեակի մի-
ջով մի քանի անգամ և նստեց պարապելու:
Կարդացածը գոհացում չէր տալիս նորան:
Նա կարիք էր զգում ինչ որ հսկայական, ան-
ըմբռնելի, ապշեցնող բանի: Լուսադէմին նա
շորերը հանեց և մտաւ անկողին, թէև ա-
կամայ: Հարկաւոր էր քնել:

Երբ լսուեցին Եգոր Սիմէօնիչի քայլերի
ձայնը, որ գնում էր այդի, Կովրինը գանգա-
հարեց և հրամայեց սպասաւորին գինի բերել:
Մեծ բաւականութեամբ խմեց նա մի քանի
կիթալ լաֆետ, ապա գլուխը քաշեց վերմա-
կի տակ և քնեց:

IV

Եգոր Սիմէօնիչը և Տանեան լաճախ
կուում էին և ուղղում միմեանց հասցէին
վերաւորական խօսքեր:

Առաւօտեան, ինչպէս պատահեց կուուե-
ցին ինչ որ պատճառով: Տանեան լաց եղաւ
և փակուեց սենեակում: Նա դուրս չեկաւ
և սենեակից ոչ ճաշի ժամանակ և ոչ թէլի:
Եգոր Սիմէօնիչը սկզբում քայլում էր խրոխտ

և աշխատում էր ցոյց տալ, որ իրան համար ճշմարտութիւնը և կարգ ու կանոնը ամենից բարձր են աշխարհում: Բայց շուտով ընկճուեց հոգով: Նա տխուր քալում էր ծառատանում և հառաչում «Ա՛խ Աստուած:» ձաշի ժամանակ բերանը ոչ մի պատառ չըզրեց: Վերջապէս խղճահարուած և մեղաւորի նման նա մօտեցաւ Տանեայի սենեակի փակ դռանը և անվստահ ձայնով կանչեց.

— Տանեա, Տանեա:

Պռան այն կողմից լրսուեցաւ Տանեայի թույլ, արատաւքներից խեղդուած և միեւնոյն ժամանակ վճռողական ձայնը:

— Թողէք ինձ հանգիստ, խնդրում եմ ձեզ:

Տանտէրերի տրամագրութիւնը կարծես ազդել էր ամբողջ տան վրայ և մինչև անգամ այն մարդկանց, որոնք աշխատում էին այգում: Կովրինը խորասուզուած էր իւր պարագմունքի մէջ, որ կլանել էր նորա ամբողջ հետաքրքրութիւնը: Վերջապէս նա էլ սկսեց ձանձրանալ և զգաց իրան մի տեսակ անյարմար դրութեան մէջ: Որպէսզի մի կերպ ցրէ տիրող ընդհանուր վատ տրամագրութիւնը, նա վճռեց հաշտեցնել նորանց: Երեկոյեան դէմ Կովրինը թըխկթխկացրեց Տանեայի սենեակի դուռը:

— Ա՛լ, ա՛լ, միթէ ամօթ չէ ձեզ, ասաց նա կատակով Տանեային, որի դէմքը այդ ժամանակ թախծալի էր և ծածկուած կարմիր բլծերով: Երևում էր, որ նա շատ էր լաց եղել: — Միթէ իրաւ դուք լուրջ կերպով... ա՛յ, ա՛յ:

— Բայց եթէ դուք իմանայիք, թէ ինչպէս նա տանջում է ինձ, ասաց Տանեան և դառն արցունքները առատութեամբ հոսեցին նորա խոշոր աչքերից: Նա շարունակ տանջել է ինձ, աւելացրեց նա կոտորատելով ձեռքերը: Ես նորան ոչինչ չասացի... ոչինչ... Ես միայն նկատեցի, որ կարիք չկայ... աւելորդ բանւորներ պահել: Չէ որ... ահա մի ամբողջ շաբաթ է, ինչ նորտնք անգործ են և ոչինչ չեն անում... Ես... ես միայն այդ ասացի, իսկ նա գոռաց ինձ վրայ և ուղղեց իմ հասցէին... շատ վիրաւորական խօսքեր: Ինչո՞ւ համար, հարցնում եմ:

— Բաւական է, բաւական, խօսեց Կովրինը ուղղելով Տանեայի գլխի սանրուածքը: Եղածն անցել գնացել է: Չի կարելի այդքան երկար խռով մնալ, այդ լաւ չէ... մանաւանդ որ նա անսահման սիրում է ձեզ:

— Նա թունաւորել է իմ ամբողջ կեանքը, շարունակեց Տանեան հեկեկալով: Այստեղ ես միայն կրում եմ վիրաւորանքներ և... նախատինքներ: Նա ինձ աւելորդ է համա-

բում տան մէջ: Եւ իրաւունք էլ ունի: Հէնց
վաղը կը հեռանամ այստեղից և կը մտնեմ
հեռագրատան մէջ ծառայութեան... թող...

— Լաւ, լաւ, հարկաւոր չէ լաց լինել,
Տանեա, հարկաւոր չէ, սիրելիս: Գուք եր-
կուսդ էլ դիւրագրգիւ էք, ջղային և երկուսդ
էլ մեղաւոր: Գնանք, ես ձեզ կը հաշտեցնեմ:

Կովրինը խօսում էր փաղաքշարար և
համոզեցուցիչ կերպով, իսկ Տանեան շարու-
նակում էր լաց լինել, կոտորատել ձեռքերը,
ցնցումներ գործել, կարծես ճշմարիտ մի մեծ
դժբախտութիւն պատահած լինէր: Կովրինին
աւելի ցաւ էր պատճառում այն, որ մէջ տեղը
իսկապէս մի լուրջ բան չկար, իսկ նա տանջւում
էր խորապէս: Ինչպիսի գատարկ պատճառ-
ներն անգամ բաւական են, որ այս թույլ արարա-
ծին գարձնեն դժբախտ ամբողջ օրով և նոյնիսկ
ամբողջ կեանքում: Մխիթարելով Տանեային,
Կովրինը մտածում էր, որ բացի այս աղջկա-
նից և նորա հօրից, ամբողջ աշխարհում, ցերե-
կը, եթէ նոյնիսկ կրակով էլ մանգալու լինի չի
գտնի մարդիկ, որոնք սիրէին իրան այնպէս,
ինչպէս սիրում են սրանք: Աեռ շատ փոքր հա-
սակից զըրկուելով ծնողներից, նա գուցէ մինչև
մահ չի մանար թէ ինչ է անկեղծ փաղաքշանքը,
այն անմեղ և ոչ մի գատողութիւն չընդու-
նող սէրը, որ մարդիկ տածում են դէպի միմի-

այն ամենամօտիկ մերձաւորները: Եւ նա
զգաց, որ իւր կիսահիւանդ, քայքայուած
ջղերը, ինչպէս երկաթը մագնիսին, այնպէս
համապատասխանում են այս արտասուող, ցըն-
ցումներ գործող աղջկայ ջղերին: Նա այլևս
արդէն չէր կարող սիրել առողջ, պնդակազմ,
կարմրաթուշ կնոջ, իսկ գունատ, թույլ, ան-
բախտ Տանեան դուր էր գալիս նորան:

Եւ նա մեծ բաւականութեամբ շոյում
էր Տանեայի մագերը, ձեռքերը սեղմում էր
իւր ափերի մէջ, սրբում էր արցունքները...
Վերջապէս Տանեան դադարեց լաց լինելուց:
Նա դեռ երկար գանգատուեց հօր վրայ, հա-
մարում էր իւր կեանքը ծանր ու սնտանելի
այս տան մէջ, աղերսում էր Կովրինին մտնել
իւր դրութեան մէջ: Յետոյ սկսեց փոքր առ
փոքր ժպտալ, հոգոց քաշել, որ Աստուած
իրան այդպիսի վատ բնաւորութիւն է տուել
վերջ ի վերջոյ բարձր ծիծաղելով, անուանեց
իրան լիմար և դուրս վագեց սենեակից:

Երբ մի փոքր յետոյ Կովրինը դուրս ե-
կաւ այգի, Եգօր Սիմէօնիչը և Տանեան, կար-
ծես ոչինչ պատահած չլինէր, միասին գրօս-
նում էին ծառուղիում: Երկուսն էլ ուտում
էին հաճարի հաց աղով, որովհետև երկուսն
էլ քաղցած էին:

V

Քոհայն բանից, որ իրան յաջողուեց
 հաշտեցնել Տանեային հօր հետ, Կովրինը գնաց
 ծառաստանը, այստեղ նստեց մի նըս-
 տարանի վրայ և սկսեց մտածել: Լսուեցան
 կառքերի և կանացի ծիծաղի ձայներ. նշա-
 նակում է, որ հիւրեր եկան: Երեկուցեան եր-
 կար ստուերները սկսեցին տարածուել այգում:
 Կովրինի ականջին խուլ կերպով հասնում էին
 ջութակի և երգողների ձայները: Սև արե-
 ղաչի պատկերը նորից սկսեց զբաղեցնել նո-
 րան: Ո՞րտեղ, երկրագնդի օր մասում և կամ
 ի՞նչ մոլորակի վրայ արդեօք այժմ թափա-
 ուում է նա:

Հագիւ նա մտաբերեց առասպելը և պատ-
 կերացրեց իւր երևակայութեան մէջ հաճարի
 արտում տեսած աղօտ տեսիլը, երբ հէնց
 մայրիների լետեից, դէմ առ դէմ գուրս եկաւ
 կամաց, առանց նոյնիսկ փոքր աղմուկի միջա-
 հասակ մի մարդ, բայց, սպիտակահեր գլխով,
 ամբողջովին սև հագած և ոտաբոբիկ: Նա
 նման էր աղքատի: Նորա գունատ և կարծես
 մեռելային դէմքի վրայ խիստ աչքի էին ընկ-
 նում սև լօնքերը: Սիրալիր կերպով ողջու-
 ելով, օտարականնր անձայն մօտեցաւ նստա-

րանին և նստեց: Կովրինը ճանաչեց նորան. նա
 սև արեղան էր: Սի բոպէ երկուսն էլ նա-
 յում էին միմեանց վրայ, Կովրինը զարմացած,
 իսկ սև արեղան գուրգուրանքով և մի փոքր
 նենգութեամբ, ինչպէս այն ժամանակ: Նորա
 դէմքի արտայայտութիւնը խելացի էր:

— Բայց չէ՞ որ դու օգերևոյթ ես, խօ-
 սեց Կովրինը. ինչպէս է, որ դու այստեղ ես
 և ինձ հետ նստած մի նստարանի վրայ, դա
 չի յարմարուում առասպելի հետ:

— Սյդ միւնոյն է, հանգարտ ձայնով
 ոչ միանգամից պատասխանեց արեղան, գառ-
 նալով դէպի Կովրինը: Առասպելը, օգերևոյ-
 թը և ես քո զրգուում երևակայութեան
 արդիւնքն ենք: Ես ուրուական եմ:

— Ուրեմն դու գոյութիւն չունիս, հար-
 ցրեց Կովրինը:

— Մտածիր, ինչպէս կամենաս, ասաց
 արեղան մեղմ ժպտալով: Ես գոյութիւն ու-
 նիմ քո երևակայութեան մէջ, իսկ քո երևա-
 կայութիւնը կազմում է բնութեան մի մա-
 սը, նշանակում է ես գոյութիւն ունիմ բը-
 նութեան մէջ:

Քո դէմքը խիստ ծերի տալուորութիւն
 կրող, խելացի և վերին աստիճանի արտայա-
 տիչ է, ասաց Կովրինը, կարծես սպրեւ ես
 աւելի, քան հազար տարի: Ես չգիտէի, որ

իմ երևակայութիւնը ընդունակ է ստեղծելու այդպիսի անսովոր օգերեւութ: Բայց ինչու դու այդպիսի հիացմունքով ես նայում ինձ, ես քեզ դուր եմ գալիս:

— Այո՛, դու մէկն ես այն սահաւաթիւ ընտրեալներէց, որոնք իրաւամբ կոչուում են Աստուծոյ ընտրեալներ: Գու՛ ծառայում ես յաւիտենական ճշմարտութեանը: Գո՛ մտքերը, գիտաւորութիւնները, լայնածաւալ գիտութիւնդ և քո՛ ամբողջ կեանքը կրում են իրանց վրայ Աստուածային, երկնային կնիք, որովհետև նուիրուած են խելացիին և գեղեցկին՝ այսինքն այն բոլորին, ինչ որ յաւիտենական են:

— Գու՛ ասացիր «յաւիտենական ճշմարտութեանը»... Բայց մի՞թէ մարդկանց հասանելի է և կամ հարկաւոր յաւիտենական ճշմարտութիւնը, եթէ չկայ յաւիտենական կեանք:

— Յաւիտենական կեանք կայ, ասաց արեղան:

— Գու՛ հաւատո՞ւմ ես մարդկանց անմահութեանը.

— Այո՛, իհարկէ: Զեզ՝ մարդկանցդ սպասում է մեծ և փայլուն ապագայ: Որքան շատ գտնուին՝ երկրագնդի վրայ այնպիսի մարդիկ, ինչպէս դու ես, այնքան աւելի շուտ կ'իրագործուի այդ ապագան: Առանց այնպիսի

մարդկանց, որոնք ծառայում են այն բոլորին, ինչ որ վեհ է և ապրում են գիտակցաբար ու ազատ, մարդկութիւնը կըլինէր մի չնչին բան: Բնական շաւղով ընթանալով՝ նա շատ ուշ կըհասնէր իւր երկրային պատմութեան վախճանին: Գու՛ք մի քանի հազար տարով վաղ էք մտցնում նորան յաւիտենական ճշմարտութեան թագաւորութեան մէջ և զրանում է իսկապէս ձեր մեծ ծառայութիւնը: Գու՛ք ձեզանով մարմնացնում էք Աստուածային օրհնութիւնը, որ հանգել է մարդկանց վրայ:

— Իսկ ինչ է յաւիտենական կեանքի նպատակը, հարցրեց Կովրինը:

— Ինչպէս ամեն մի կեանքի, նոյնպէս և նրա նպատակը երջանկութիւնն է: Իսկական երջանկութիւնը գիտութեան մէջ է, իսկ յաւիտենական կեանքը ներկայացնում է անհամար և անսպասելի աղբիւր գիտութեան համար: Այդ մտքով են ասուած Աւետարանի հետևեալ խօսքերը. «Իմ Հօր տանը օթևաններ շատ կան»:

— Եթէ դու գիտենայիր, թէ՛ որքան հաճելի է քեզ լսելը, ասաց Կովրինը, տրորելով ձեռքերը:

— Շոտ ուրախ եմ:

— Բայց ես գիտեմ, որ երբ դու գնաս, ինձ կըսկսի անհանգստացնել քո ինչ լինելու հարցը: Դու ուրուական ես, դու գալլիւցինացիալի արդիւնքն ես, նշանակում է, ուրեմն, ես հոգեկան հիւանդ եմ, անբնական դրութեան մէջ եմ:

— Թէև այդպէս է, բայց չպէտք է վերգովուել: Դու հիւանդ ես, որովհետև աշխատել ես ոչ թից վեր, յոգնել ես: Դու քո առողջութիւնը զոհ ես բերել գաղափարին և հեռու չէ այն թուփէն, երբ նրան կրտաս և կեանքդ: Բոլոր բնատուր և չափազանց ագնիւ բնաւորութիւնները ընդհանրապէս ձգտում են գրան:

— Կարո՞ղ եմ հաւատար ինքս ինձ, քանի որ գիտեմ հոգեպէս հիւանդ լինելս:

— Իսկ ինչից գիտես, որ հանճարեղ մարդիկ, որոնց հաւատում է ամբողջ աշխարհը, նոյնպէս չեն տեսել ուրուականներ: Այժմ գիտնականներն ասում են, որ հանճարը և խելագարութիւնը ազգակիցներ են: Իմ բարեկամ, առողջ և ուղեղով բնական են լինում միայն սահմանափակ մարդիկ: Ջղային դարի, մտաւոր յոգնածութեան, սերնդի ալտասեռման և ալլ ալսպիսի բաների մասին խորհրդածութիւնները լուրջ կերպով կարող են

լուզել միմիայն նրանց, որոնք կեանքի նպատակը տեսնում են ներկալի մէջ:

— Հռովմայեցիք ասում էին mens sanm corpore sano (առողջ հոգին առողջ մարմնի մէջ):

— Ոչ ամեն զան ճշմարիտ է, ինչ որ ասել են Հռովմայեցիները և Յոյները: Այն բոլորը, ինչով որ մարգարէները, բանաստեղծները, գաղափարի նահատակները զանազանում են սովորական մարդկանցից, հակառակ են Ֆիզիքական առողջութեան: Կրկնում եմ, եթէ ցանկանում ես լինել առողջ և ուղեղով բնական դրութեան մէջ, այն ժամանակ մտի՛ր նախիր:

— Ձարմանալի է, ասաց Կովրինը. դու կրկնում ես այն, ինչ որ լաճախ իմ մտքովս է անցել: Դու կարծես գիտակ լինիս իմ գաղտնի մտքերին: Բայց թողնենք իմ մասին խօսելը: Ի՞նչ ես հասկանում դու լաւտեսական ճշմարտութիւն ասելով:

Արեղան չպատասխանեց: Կովրինը նայեց նորա վրայ և չկարողացաւ պարզ տեսնել նորա գէժքը: Գիմագծերը աղօտացել էին: Կամաց, կամաց սկսեցին անյայտանալ Կովրինի տեսողութիւնից արեղալի գլուխը, ձեռքերը: Նորա մարմնից կարծես միախառնուե-

ցաւ նստարանի հետ և երեկոցեան խաւարի մէջ անյայտացաւ բոլորովին:

— Պալլիւցինացիան վերջացաւ, ասաց Կովրինը ծիծաղելով. բայց ափսոս:

Կովրինը վերկացաւ և ուղևորուեց զէպի տուն: Նա ուրախ էր և իրան երջանիկ էր զգում: Այն, ինչ որ ասել էր սև աբեղան, շոյում էր նորա ինքնասիրութիւնը, հոգին և ամբողջ էութիւնը: Ուրբան բաղդաւորութիւն է լինել Աստուծոյ ընտրելի, ծառայել յաւիտենական ճշմարտութեանը, նուիրուել գողափարին ամբողջ էութեամբ և պատրաստ լինել մեռնելու ընդհանուրի բարօրութեան համար: Ուրբան երջանկութիւն է տեղ բռնել այն մարդկանց շարքում, որոնք մարդկութիւնը մի քանի հազար տարով աւելի վաղ արժանի են դարձնում Աստուծոյ արքայութեանը և այգալիսով ազատում նորան մի քանի հազար տարիների աւելորդ մեղքերից և տանջանքներից: Նորա լիշողութեան մէջ պատկերացաւ իւր անբիծ, ժուժկալ կեանքը, որ անցել էր ամբողջովին աշխատանքի մէջ: Նա լիշեց, թէ ինչ է սովորել ինքը և ինչ սովորեցրել ուրիշներին ու դրտաւ, որ աբեղայի խօսքերի մէջ չկայ չափազանցութիւն:

Ծառաստանում Կովրինը պատահեց Տանեային: Նորա վրայ արդէն ուրիշ հանգերձ էր:

— Պուք այտե՞ղ էք, ասաց Տանեան, իսկ մենք ձեզ որոնում ենք, հա որոնում, բայց ինչ է պատահել ձեզ, զարմացած հարցրեց նա՝ նայելով Կովրինի ուրախութիւնից փայլող դէմքին և աչքերին, որոնք լի էին արտասուքով: Ուրբան դուք տարօրինակ էք, Անդրիւշա:

— Ես երջանիկ եմ, Տանեա, ասաց նա, ձեռքերը դնելով նորա ուսին: Պուք վերին աստիճանի համակրելի արարած էք, սիրելի Տանեա: Ես անչափ ուրախ եմ, անչափ ուրախ:

Եւ նա ջերմ կերպով համբուրեց նորա երկու ձեռքերը ու շարունակեց,

— Ես փոքր ինչ առաջ ճաշակեցի քաղցր, հրաշալի, ոչ երկրային բոպէներ, բայց բոլորը պատմել ձեզ չեմ կարող, որովհետև դուք ինձ խելագար կը համարէիք և կամ չէք հաւատայ խօսքերիս: Խօսե՛ք ձեր մասին, սիրելի Տանեա: Ես ձեզ սիրում եմ: Ձեր մտերմութիւնը, ձեզ հետ յաճախ տեսնուելը ինձ համար արդէն պահանջ է դառել: Զգիտե՛մ, ինչ պէտք է անեմ առանց ձեզ, երբ ես այտեղից գնամ:

— Դուք կըմոռանաք մեզ գնալուց հէնց երկու օր լետոյ, ծիծաղելով ասաց Տանեան: Մենք աննշան մարդիկ ենք, իսկ դուք մեծ:

— Ոչ, խօսենք յուրջ կերպով, ասաց Կովրինը: Ես կըվերցնեմ ձեզ ինձ հետ: Այո՛, Տանեա: Մենք միասին կըգնանք: Յանկանո՞ւմ էք լինել իմը:

— Այ, թէ ինչ, ասաց Տանեան և ցանկանում էր նորից ծիծաղել, բայց չյաջողուեց: Նորա դէմքի վրայ երևացին կարմիր բծեր:

Տանեայի շնչառութիւնը սկսեց արագանալ և նա իւր շտապ, շտապ քայլերը ուղղեց ոչ թէ դէպի տուն, այլ դէպի ծառաստանը:

— Ես այդ մասին չէի մտածում... չէի մտածում, ասում էր նա, կոտրատելով ձեռքերը, կարծես թէ յուսահատութեան մէջ լինէր:

Իսկ Կովրինը գնում էր նորա լետուից ուրախութիւնից փայլող դէմքի նոյն արտայայտութեամբ:

— Ես սէր եմ ցանկանում, սէր, որ ընդգրկէր իմ ամբողջ էութիւնը: Այդ սէրը միայն դուք, Տանեա, կարող էք պարգևել ինձ: Ես երջանիկ եմ, երջանիկ:

Տանեան շփոթուած էր. նա կորացաւ, կծկուեց և կարծես միանգամից տասը տարով

ծերացաւ: Կովրինը գտնում էր, որ նա այդ դրութեամբ էլ գեղեցիկ է և բարձր արտայայտիչ իւր հրճուանքը:

— Ո՛րքան նա գեղեցիկ է.

IV

Երբ Եգոր Սիմէօնիչը Կովրինից տեղեկացաւ, որ ոչ միայն արդէն տեղի է ունեցել փոխադարձ համաձայնութիւն իւր և Տանեայի մէջ, այլ և մինչև անգամ շուտով լինելու է հարսանիքը, սաստիկ յուզուեց: Նա երկար քայլում էր սենեակի մի անկիւնից միւսը՝ աշխատելով թագցնել իւր ներքին յուզմունքը: Նորա ձեռքերը սկսեցին գողգողալ պարանոցը կարծես ընդլայնուեց և կարմրեց. նա հրամայեց լծել կառքը և գնաց ինչ որ տեղ: Տանեան տեսնելով, թէ ինչպէս իւր հայրը մտրակեց ձիուն և մինչև ականջները քաշեց գլխարկը, հասկացաւ նորա հոգեկան ներքին յուզմունքը, փակուեց սենեակում և ամբողջ օրը լաց եղաւ:

Ջերմոցներում արդէն հասել էին գեղձը և շրորը: Առանձին խնամք և հոգացողութիւն էր հարկաւոր նրանց հաւանքելու, խնամքով հաստատելու և ճանապարհելու դէպի Մոսկուա: Ենորհիւ այն բանի, որ ա-

մառը շատ տաք էր և չորային, հարկաւոր էր լինում ջրել իւրաքանչիւր ծառը, իսկ այդ պահանջում էր շատ ժամանակ և բանւոր ուժեր: Միևնույն ժամանակ ծառերի վրայ երևացին ահագին քանակութեամբ թրթուրներ, որոնց բանւորները և մինչև անգամ Եգոր Սիմէօնիչը ու Տանեան ուղղակի սպանում էին մատներով: Կովրինը չէր կարողանում առանց զգուանքի նայել այդ տեսարանի վրայ: Այս բոլորի հետ պէտք էր և պատուէրներ ընդունել աշնան համար պտուղներ և ծառեր հասցնելու ու վարելու ահագին գրագրութիւն: Գործի ամենատաք ժամանակը սկսուեցին և դաշտային աշխատանքները, որոնց վրայ բանում էին այգու բանւորների կէսից աւելին: Եգոր Սիմէօնիչը տենդային դրութեան մէջ էր: Սաստիկ այրուած արևից և տանջուած, նա այգուց դաշտ էր վազում և դաշտից այգի, գանգատուում էր, որ ինքը հազար կտոր է լինում. որ այդպէս տանել չի կարող և գնդակահար կըլինի:

Կարծես այս բոլորը քիչ էին, պէտք էր հոգս քաշել և օժիտի մասին, որին Պետոցկիները պակաս նշանակութիւն չէին տալիս: Տան մէջ բոլորի գլուխներն էլ պըտուում էին մկրտաների, կարմեքենաների չըխկչիկոցից, ութու հոտից և նեղսիրտ, ջղային

դերձակուհու կամայականութիւններից: Հակառակի պէս ամենայն օր էլ գալիս էին հիւրեր, որոնց հարկաւոր էր զբաղեցնել, կերակրել և մինչև անգամ պահել գիշերելու: Բայց այս բոլոր տաժանակիր աշխատանքը անցաւ աննկատելի, կարծես երազի մէջ: Տանեային թւում էր, թէ սէրը և երջանկութիւնը անսպասելի կերպով պաշարեցին իրան, թէև դեռ տասչորս տարեկան հասակից հաւատացած էր, որ Կովրինը անպատճառ կ'ամուսնանայ իրան հետ: Նա գարմացել էր, շուարել և չէր հաւատում ինքն իրան... Երբեմն նորա սիրտը լցւում էր մի այնպիսի ուրախութեամբ, որ նա ցանկութիւն էր զգում սաւառնել դէպի ամպերը և այնտեղից աղօթել Արարչին: Երբեմն էլ, երբ լանկարծ լիջում էր, որ օգոստոս ամսին թողնելու է հօրը, անջատուելու է հայրենական օջախից և կամ, Սոստուած գիտէ, թէ սրտեղից նորա միտքն էր ընկնում այն, որ ինքը մի չնչին արարած է և անարժան այնպիսի մի մեծ մարդու, ինչպէս Կովրինն է, նա առանձնանում էր իւր սենեակը, գուռը բանալիով փակում և մի քանի ժամ շարունակ դառնապէս լաց էր լինում: Հիւրեր եղած ժամանակ լանկարծ նորան թւում էր, որ Կովրինը չափազանց գեղեցիկ է և որ բոլոր

օրիորդները սիրահարուած են նորա վրայ և նա-
խանձուած են իրան: Այդպիսի բուպէներու
նորահարուած էր բերկրութեամբ, նա
զգուած էր իրան վեհ, կարծես թէ յաղթել
էր ամբողջ աշխարհին, բայց բաւական էր,
որ Կովրինը սիրալիր կերպով ժպտար որևէ
օրիորդի երեսին, և նա արդէն խանդոտու-
թիւնից կըսկսէր դողալ, փակուած էր սենեա-
կուած և սկսուած էր արտասուել: Այդ նոր
զգացումները բոլորովին տիրապետել էին
նորան: Նա օգնուած էր հօրը մեքենայաբար. ոչ
դեղձը, ոչ թրթուռները և ոչ բանւորները
նորա աչքին չէին երևում. ժամանակն էլ
անցնում էր աննկատելի կերպով արագ:

Եգոր Սիմէօնիչը առաջուայ պէս դար-
ձեալ աշխատում էր առաւօտից մինչև երե-
կոյ, միշտ շտապում էր, համբերութիւնից
զուրս էր գալիս, բարկանում էր և այս բո-
լորը տեղի էին ունենում մի տեսակ դի-
թական կիսաքուն գրութեան մէջ: Նորանում
կարծես բուն էին դրել երկու մարդ. մէկը
խկական Եգոր Սիմէօնիչը, որ լսելով այգե-
պան Իւան Կարլիչի տեղեկութիւնները այ-
գում տեղի ունեցող անկարգութիւնների
մասին, յուզուած էր և յուսահատութեան
մէջ ձեռքերով բռնում գլուխը, իսկ երկ-
րորդը՝ ոչ իսկական Եգոր Սիմէօնիչը, այլ մի

մարդ, որ կիսահարեածի նման լանկարձ-
կտրում է Կարլ Իւանիչի խօսքը գործի մա-
սին, ձեռքով խփում էր նորա ուսին և ըսկ-
սում քթի տակ խօսել:

— Խնչ կ'ուզես աստ, մեծ նշանակու-
թիւն ունի արիւնը: Նորա մայրը զարմանա-
լի ազնիւ և խելացի կին էր: Մեծ բաւակա-
նութիւն կըզգար մարդ նայելով նորա բա-
րի, պայծառ և հրեշտակային գէմքին: Նա
գեղեցիկ կերպով նկարում էր, երգում էր,
զրում էր և ոտանաւորներ, խօսում էր հինգ
օտար լեզուներով... Խեղճը մեռաւ բարա-
կացալից. հոգուն արքայութիւն:

Ոչ իսկական Եգոր Սիմէօնիչը հառա-
չում էր և մի փոքր լսելուց լետոյ, դար-
ձեալ շարունակում.

— Երբ որ նա գեռ մանուկ էր և սպ-
րում էր իմ տանը, նորա գէմքի արտայայ-
տութիւնն էլ նոյնպէս հրեշտակային էր,
պայծառ և բարի: Նորա հայեացքը, շար-
ժումները, խօսակցութիւնը նոյնքան նուրբ
էին և զրաւիչ, որքան մօրը, իսկ սպա
խելքը. նա միշտ զարմացնում էր մեզ իւր
խելացի խօսքերով: Պէտք է ասած, որ իզուր
չէ՛ արժանացել մագիստրոսութեան աստիճանի,
այն, իզուր չէ: Սպասիր, Իւան Կարլիչ, և

կրտսնես տասը տարուց չես ինչպիսի մարդ կրդառնայ նա. հատը չես գտնի:

Բայց այդտեղ իսկական Եգոր Սիմէօնիչը յանկարծ մտաբերելով, ահօելի կերպարանք էր ընդունում. ձեռքերով բռնում էր գլուխը և գոռում:

— Անիծուածները կեղտոտեցին, փչացրին, ցրտահար արին այգին. այգիս կորաւ:

Իսկ Կովրինը աշխատում էր նախկին ջանասիրութեամբ: Նա չէր նկատում իւր շուրջը տիրող իրարանցումը: Սէրը միայն իւր էր ածել կրակի վրայ: Տանեալի հետ ունեցած իւրաքանչիւր տեսութիւնից լետոյ, նա լի հոգեկան մեծ բուականութեամբ, առանձնանում էր սենեակը և սկսում պարապել: Նա գրքին և կամ ձեռագրին կայում էր մի այնպիսի ագահութեամբ և խանդով, ինչպէս օրինակ խանդով համբուրւում էր Տանեալի հետ և սիրոյ խոստումներ անում միմեանց: Սա արեղալի ասածները Աստուծոյ ընտրեալների, յաւիտենական ճշմարտութեան և մարդկութեան փայլուն ապագայի մասին, առանձին եռանդ էր ներշնչում նորան. նորա հոգին լցում էր հպարտութեամբ և անձնական արժանաւորութիւնների գիտակցութեամբ: Մաբաթը մէկ, կամ երկու անգամ, ծառաստանում և կամ տան մէջ, նա հանդի-

պում էր սև արեղալին և երկար խօսում նորա հետ: Այս հանգամանքը ոչ միայն չէր վախեցնում նորան, այլ ընդհակառակը ողևորում էր, որովհետև նա արդէն խօրը համոզուած էր, որ դոյնանման երևոյթները այցելում են միայն ընտրեալ և գաղափարին նուիրուած մարդկանց:

Մէկ անգամ սև արեղան երևեցաւ ճաշի ժամանակ սեղանատանը և նստեց լուսամուտի մօտ: Կովրինը ուրախացաւ և շատ ճարպիկ կերպով Եգոր Սիմէօնիչի և Տանեալի հետ խօսակցութիւն սկսեց այնպիսի նիւթի մասին, սր կարողանար հետաքրքիր լինել և արեղալին. սև հիւրը լսում էր և սիրալիբ կերպով շարժում գլուխը, իսկ Եգոր Սիմէօնիչը և Տանեան նոյնպէս լսում էին և ուրախ, ուրախ ծիծաղում: Նորանք երբէք չէին կասկածում, որ Կովրինը խօսում է իւր գալլիւցինացիալի հետ և ոչ իրանց հետ:

Աննկարագրելի կերպով անցաւ Վերափոխման պատը և շուտով հասաւ հարսանիքի օրը: Եգոր Սիմէօնիչի ջերմ ցանկութեան համաձայն, հարսանիքը կատարուեց շքեղ կերպով, աղմկայոյզ և ականջ երկու օր: Սոսկուալից բերել էր տրուած թանկագին խմիչքներ և ուտելիքներ. ծախուեց մինչև

երեք հազար ըուբլի, բայց շնորհիւ վատ երաժշտութեան, աղմկայոյզ կենացների և սպասաւորների իրարանցման, հիւրերը ոչ մի բաւականութիւն չստացան:

VII

Չմեռուայ երկար գիշերներից մէկն էր: Կովրինը պառկել էր անկողնում և կարգում էր մի ֆրանսերէն վէպ: Տանեան արդէն վաղուց քնել էր և երբեմնապէս քնի մէջ արտասանում էր ինչ որ անկապ խօսքեր: Քաղաքի կեանքին սովոր չլինելուց, խեղճի գըլուխը ցաւում էր երեկոները:

Խփեց ժամը երեքը: Կովրինը հանգըրեց մոմը և պառկեց: Երկար պառկած էր նա անկողնում խփած աչքերով, բայց քնել չկարողացաւ: Սենեակում տիրող խիստ տօթը, ինչպէս նորան յետոյ թուաց, և Տանեայի քնի մէջ զառանցելը, թօյլ չէին տալիս նորան քնելու: Չորս և կէսին նա նորից վառեց մոմը և այդ ժամանակ տեսաւ սև արեղային, որ նստած էր բազկաթոռին իւր անկողնու մօտ:

— Բարև, ասաց սև արեղան և մի փոքր լուսութիւնից յետոյ հարցրեց. — ինչո՞ւ մասին ես այժմ մտածում:

— Փառքի մասին, պատասխանեց Կովրինը: Փոքր ինչ առաջ կարգացի մի ֆրանսերէն վէպ, ուր դուրս էր բերուած մի երիտասարդ գիանական, որ լիմարութիւններ է գործում, կաշուց դուրս է գալիս փառք ձեռք բերելու համար: Ինձ համար անհասկանալի է այդպիսի մի տենչանք դէպի փառքը:

— Որովհետև դու խելացի ես. փառքը քեզ չի հետաքրքրում և դու նրան վերաբերում ես այնպէս, ինչպէս մի խաղալիքի:

— Այո՞ ճշմարիտ է:

— Հուշակ ունենալու բախտը քեզ չի ժպտում: Ասենք ինչ մի պարծենալու և կամ փառասիրութիւնը շոյող ու ուսանելի բան է, եթէ անունդ ոսկէ տառերով գրեն մահարեթէ անունդ վրայ, իսկ ժամանակը անհետ կ'անէ նրան: Բարեբախտաբար ձեզ նմանների թիւը բաւականին շատ է և մարդկային թօյլ լիջողութիւնը անկարող է իւր մտքի մէջ պահել բոլորի անունները:

— Շատ հասկանալի է, ասաց Կովրինը, ինչ էլ կարիք կայ, որ լիջեն: Բայց թողնենք այս և խօսենք մի այլ բանի մասին, օրինակ բախտի մասին: Ի՞նչ է բախտը:

Խփեց ժամը հինգը. Կովրինը նստել էր անկողնու վրայ, ոտները կախ զցած և խօսում էր. նորա դէմքը դարձած էր դէպի արեղան:

— Հին ժամանակ մի երջանիկ մարդ, որ ծփում էր անսահման բախտաւորութեան մէջ, վերջ ի վերջոյ սկսեց երկիւղ կրել իւր այդ բախտաւորութիւնից և որպէսզի մեղմացնէ աստուածների սիրտը, նա նրանց զոհ բերեց իւր սիրելի մատանին: Ինչ էլ, ինչպէս պօլիկրատին, սկսել է փոքր ինչ անհանգըստացնել իմ անձնական բախտաւորութիւնը: Առաւօտից մինչև երեկոյ ես լինում եմ ուրախ տրամադրութեան տակ: Աւրախութեան զգացմունքը իմ մէջ ճնշել է բոլոր մնացած զգացմունքներս: Ես չգիտեմ, թէ ինչ է վիշտը, տխրութիւնը և կամ ձանձրոյթը: Ահա ես չեմ քնում, ինչ տանջում է անքրնութիւնը, բայց ես չեմ ձանձրանում: Լուրջ եմ ասում, ես սկսել եմ տարակուսուել:

— Բայց ինչո՞ւ, զարմացած հարցրեց արեղան: Մի՞թէ ուրախութիւնը գերբնական զգացմունք է, մի՞թէ նա մարդու բնական պահանջներից մէկը չէ: Որքան մարդ մտքով և բարոյապէս բարձր աստիճանի վրայ է կանգնած, և որքան նա աւելի ազատ է, այնքան կեանքը նորա համար կըլինի քաղցըր: Սոկրատէսի, Իիօզինէսի և Մարկոս Աւրելիոսի կրծքի մէջ բաբախում էր ուրախութեան զգացմունքը և ոչ տխրութեան:

Առաքեալն էլ ասում է. — մշտապէս ուրախ եղիր և կըլինես բախտաւոր:

— Բայց եթէ յանկարծ աստուածները բարկանան, կատակի տալով և ծիծաղելով հարցրեց Կովրինը: Եթէ նրանք առնեն ձեռքիցս իմ բոլոր յարմարութիւնները և ստիպեն ինձ ցրտից դողալ, սովից տանջուել, այն ժամանակ հազիւ թէ այդ բանը ինձ դուր գար:

Տանեան այդ ժամանակ զարթնելով, զարմացած և սարսփահար նայեց ամուսնու վրայ: Կովրինը խօսում էր դառած դէպի բազկաթուր, ձեռքով, ոտքով էր անում, ծիծաղում էր. նորա աչքերը փայլում էին և ծիծաղի մէջ հնչում էր ինչ որ օտարոտի բան:

— Անդրբիւշա՛, ո՞ւմ հետ ես խօսում, հարցրեց Տանեան բռնելով Կովրինի ձեռքից: Ո՞ւմ հետ, Անդրբիւշա՛:

— Ի՛նչ, սւմ հետ, շփոթուեց Կովրինը: Ահա նրա հետ... Ահա նա նստած է, ասաց նա, ցոյց տալով սև արեղային:

— Ոչ ոք չկայ այստեղ... ոչ ոք, Անդրբիւշա, դու հիւանդ ես:

Տանեան փաթաթուեց ամուսնուն այնպէս, որ կարծես ուզում էր պաշտպանել նո-

րան տեսիլքից. նա ձեռքով ծածկեց նորա աչքերը:

— Ի՞նչ հիւանդ ես, հեկեկալով ասաց Տանեան, որ միևնոյն ժամանակ դողում էր ամբողջ մարմնով: Ներքիւ ինձ, սիրելիս, իմ թանկագին, բայց ես վաղուց արդէն նկատել եմ, որ քո հոգեկան աշխարհը խանգարուած դրութեան մէջ է... Անդրիւշա, դու հոգեպէս հիւանդ ես...

Տանեայի դողը անցաւ և Կովրինինը: Նա մի անգամ էլ նայեց դէպի բազկաթոռը, որ արդէն դատարկ էր. յանկարծ թուլութիւն զգաց ոտների ու ձեռքերի մէջ, վախեցաւ և սկսեց հագնուել:

— Այդ ո՛չինչ, Տանեան, ո՛չինչ, ասաց Կովրինը դողալով: Ի՛րաւ է, որ ես մի փոքր հիւանդ եմ... ժամանակ է արդէն այդ մասին քեզ յայտնելու:

— Ես արդէն վաղուց նկատել էի... հայրիկն էլ նույնպէս նկատել էր, խօսեց Տանեան, աշխատելով զսպել հեծկլտանքը: Ի՞նչ ինքք քեզ խօսում ես. օտարօտի կերպով ժպտում... չես քնում: Օ՛հ, Աստուած իմ. Աստուած իմ, փրկիր մեզ, կանչեց Տանեան սարսափահար: Բայց դու, Անդրիւշա, մի վախենար, ի սէր Աստուծոյ, մի վախենար:

Տանեան նույնպէս սկսեց հագնուել՝ նորան նայելով: Կովրինը այժմ միայն հասկացաւ իւր գրութեան ամբողջովին վտանգաւոր լինելը, հասկացաւ, թէ ինչ բան է սև արեղան և իւր խօսակցութիւնները նորա հետ: Այժմ նորա համար շատ պարզ էր որ ինքը խելագար է:

Երկուսն էլ անգիտակցաբար, առանց իմանալու, թէ ինչու, հագնուեցին և գնացին դահլիճ: Տանեան առաջից, իսկ Կովրինը նորա լետեկից: Դահլիճում գիշերային վերարկուն հագին և մոմը ձեռին՝ կանգնած էր արդէն Եգոր Սիմէօնիչը, որ հիւր էր եկած նորանց մօտ: Նա զարթնել էր լացի ձայնից:

— Ի՞նչ մի վախենար, Անդրիւշա, ասում էր Տանեան դողալով այնպէս, որ կարծես տենդով բռնուած լինէր, մի վախենար... հայրիկ, այդ բոլորը կ'անցնի... կ'անցնի բոլորը...

Կովրինը լուզմունքից չէր կարողանում խօսել: Նա ցանկանում էր կատակի ձևով ասել աներոջը:

— Ենորհաւորեցէք ինձ. ես, կարծեմ, խելագարուել եմ, բայց նա կարողացաւ միայն շրթունքները շարժել և դառն կերպով ժպտալ:

Առաւօտեան 9-ը ժամին նորան հազգրին վերարկուն և բուրբը, շալերով փաթաթեցին և նստացնելով փակ կառքում, տարան բժշկի մօտ: Կովրինը սկսեց բժշկուել:

VIII

Նորից եկաւ ամառը և բժիշկը պատուիրեց նորան գնալ գիւղ: Կովրինը արգէն առողջացել էր, այլևս չէր տեսնում սև աբեղային և մնում էր միայն, որ կազդուրէ իւր ֆիզիքական ոյժերը: Ապրելով աներոջ մօտ գիւղում, նա շատ կաթ էր գործածում. պարպում էր օրը միայն երկու ժամ և դադարել էր գինի խմելուց ու ծխելուց:

Նշխական տօնի նախընթաց երեկոյեան տանը հսկում կար: Երբ դպիրը քահանային տուեց բուրվառը և նա սկսեց խնկարկել, այն ժամանակ հնադարեան, ընդարձակ դահլիճում կարծես մի տեսակ գերեզմանային հօտ փչեց: Կովրինը սկսեց ձանձրանալ: Նա դուրս եկաւ այգի և սկսեց զբօսնել: Փարթամ ծաղիկները չէին զբաւում նորա ուշագրուլթիւնը: Նա մի փոքր նստեց նստարանի վրայ և ապա վերկենալով անցաւ դէպի ծառատունը: Հասնելով գետին, նա ափից ցած իջաւ ուղիղ, մինչև գետի եզերքը և այստեղ

մտածման մէջ կանգնեց ու սկսեց նայել ջրին: Մաւր, մամուպատ արմաւներով մայրիները լուռ էին. նորանք կանգնած էին անշարժ և անխօս ու կարծես չէին ճանաչում Կովրինին, որին տեսել էին նախորդ տարին ուրախ, առօրց և աւելի երիտասարդ կերպարանքով: Եւ իսկապէս, նորա գլուխը խուզում էր, զեզեցիկ երկար մազերը այլևս չկային, քալուածքի մէջ չէր արտայայտում կենդանութիւն, իսկ գէմքը համեմատաբար անցեալ տարուայ հեալցուել էր, բայց և դունտուել:

Քարերի վրայով անցաւ միւս ափը: Այնտեղ, ուր անցեալ տարի հաճարի արտեր կային, այժմ պտուկած էին խրբուկի հնձած խուրձեր: Արեւը արդէն մայր էր մտել: Հօրիգանի վրայ, երկնակամարի մի լայն շերտ ներկուել էր ծիրանի գոյնով, որ գուշակում էր վաղուայ համար քամատ եզանակ: Ամենայն ինչ խաղաղ էր: Կովրինը իւր հայեացքը ուղղեց դէպի այն կողմը, որտեղից անցեալ տարի առաջին անգամ երեսց սև արեղան և այդ գրուլթեամբ մնաց քսան բոպէ, մինչև որ սկսեց աղօտանալ երեկոյեան վերջալոյսը...

Հսկումը արգէն վերջացել էր, երբ Կովրինը գժգոհ ինքն իրանից և հոգեպէս ընկճուած՝ վերադարձաւ տուն: Եզօր Սիմէօնիջը և Տանեան նստել էին տան ներքին

լարի՛ի պատշգամբի աստիճանների վրայ և թէլ էին խմում: Նորանք խօսում էին ինչ որ բանի մասին, բայց տեսնելով Կովրինին, խօսքերը չանկարծ կտրեցին: Կովրինը այդ բանից և նորանց դէմքի արտալայտութիւնից, եզրակացրեց, որ խօսակցութիւնը իւր մասին է եղել:

— Կարծեմ կաթ խմելուդ ժամանակն է, ասաց Տանեան ամուսնուն:

— Ո՛չ, ժամանակը չէ... պատասխանեց Կովրինը, նստելով պատշգամբի ամենացած աստիճանի վրայ: Խմիր ինքդ, ես չեմ ցանկանում:

Տանեան անհանգստութեամբ նայեց հօր երեսին և ասաց այնպիսի մի ձայնով, որ կարծես իրան մեղուոր էր զգում:

— Դու ինքդ տեսնում ես, որ կաթը քեզ օգուտ է:

— Ա՛յո, շատ օգուտ է, դառն ժպիտով պատասխանեց Կովրինը: Ենորհաւորում եմ ձեր լաջողութիւնը. կարճ ժամանակում քաշս աւելացել է էլի մի գրուանքայ: Եւ նա պինդ սեղմեց գլուխը ձեռքերի մէջ ու շարունակեց սրտնեղութեամբ. — Ինչո՞ւ, ինչու բժշկեցիք ինձ: Այն բույր միջոցները և զգուշութիւնները, որ դուք գործադրում էք իմ առողջութեան համար, վերջ ի վերջո՛ւ կըհասց-

նեն ինձ լիմարութեան: Ես լիմարացայ: Ճշմարիտ է ես հիւանդ էի, անձնական արժանաւորութիւնների մասին ունեցածս գաղափարը հասնում էր իմ մէջ մինչև մոլորութեան, բայց ես այն ժամանակ գտնէ ուրախ էի, առօրէ և մինչև անգամ բախտաւոր: Ես հետաքրքիր անձնաւորութիւն էի և արտասովոր: Այժմ ես ոչնչով չեմ գանազանւում սովորական մարդկանցից: Ես դառել եմ տափակ: Ինձ ձանձրացնում է ապրելը... Ա՛խ, որքան դաժան կերպով վարուեցիք դուք ինձ հետ: Ես ունէի գալլիւցիիացիայ, բայց ո՞ւմ էր խանգարում իմ այդ հիւանդութիւնը, հարցնում եմ ձեզ, ո՞ւմ:

— Աստուած գիտէ, թէ ինչ ես խօսում, հառաչելով ասաց Սգոր Սիմէօնիչը: Մինչև անգամ ձանձրալի է լսելը:

— Եւ միք լսէ:

Մարդկանց և առանձնապէս Սգոր Սիմէօնիչի ներկայութիւնը այժմ խիտ զրգռում էր Կովրինին: Նա պատասխանում էր նորան սառն և մինչև անգամ կոպիտ կերպով, նայում էր նորա վրայ հեզնաբար և ատելութեամբ: Սգոր Սիմէօնիչը շփոթւում էր, հազում էր մի այնպիսի ձևով, որ կարծես մեղաւոր լինէր, թէև ոչ մի մեղք չէր գտնում իւր վարմունքի, դէպի նա ունեցած

յարաբերութեան մէջ: Տանեալի համար անհասկանալի էր, թէ ինչո՞ւ այդպէս կտրուկ կերպով փոխուեցին նրանց սիրելի յարաբերութիւնները: Նա ցանկանում էր հասկանալ այդ, բայց չէր կարողանում: Նորա համար պարզ էր միայն այն, որ յարաբերութիւնները օրէց-օր վատանում են, և որ հայրը վերջին ժամանակները խիստ ընկել է, ծերացել, իսկ ամուսինը դառել է ջղալին, կամակոր, մանրակրկիտ և անհետաքրքիր: Նա այլևս չէր ծիծաղում և երգում, ճաշերին ոչինչ չէր ուտում և ամբողջ գիշերներով չէր քնում: Նա կարծես սպասում էր ինչ որ ահաբեկ բանի և այնքան տանջուեց, որ մէկ անգամ ճաշից լետույ ուշաթափուեց և այդ դրութեամբ մնաց մինչև երեկոյ: Հսկումի ժամանակ նորան թուաց, թէ հայրը լաց է լինում և այժմ երբ երեքով նստած էին պատշգամբում, նա գործ էր դնում ամեն ջանք, որպէսզի չմտածէ այդ մասին:

Ո՞րքան բախտաւոր էին Բուզզան, Մահմէտը և կամ Նէքսուլիը, որոնց ծայրայեղ ոգևորութիւնը, մտքի յափշտակութիւնը երկիւղ չէր ազդում բարեկամներին և չէին բժշկում բժիշկների մօտ, ասաց Կովրինը: Եթէ Մահմէտը ընդունէր զեղ ջղերը հանգստացնելու համար, աշխատէր օրը միայն

երկու ժամ և խմէր կաթ, այն ժամանակ այդ նշանաւոր մարդուց կըմնար այնքան հեռք, որքան իր շնից: Սրտացաւ ազգականները և բժիշկները վերջ ի վերջոյ կըհասցնեն այնտեղ, որ մարդկութիւնը կըրթանայ, տափակութիւնը կըհամարուի հանձար և քաղաքակրթութիւնը կ'ընկնի: Եթէ դուք զեռտենայիք, թէ որքան շնորհակալ եմ ձեզանից, հեզնական ժպիտով և սրտնեղութեամբ ասաց Կովրինը:

Նա զգաց, որ խիստ զրգուած է և որպէս զի խուսափած լինի և աւելորդ խօսքեր ու վերաւորանքներ օտելուց, նա վերկացաւ և շտապով ներս գնաց: Տիրում էր լուսթիւն: Ծիախտաի տունկերի և յայտընների բուրմունքը բաց պատուհանների միջով տարածուել էր տան մէջ: Լուսնի աղօտ լույսը կանաչաւուն բծեր էր գույցըրել ահագին, մութ դահլիճի յատակի և գաշնամուրի վրայ: Կովրինը մտաբերեց անցեալ ամառուայ իւր հրճուանքը, որ պատճառում էին իրան նոյն լուսնկա: գիշերները և անուշահոտ բուրմունքը: Նախորդ տարուայ տրամագրութիւնը իւր մէջ վերակենդանացնելու համար, նա շտապով գնաց իւր առանձնասենեակը, վառեց մի թուենդ սիգար և հրամայեց սպասաւորին բերել զինի: Սիգարից նորա բերանը

դառնացաւ, նա զգաց զգուանք դէպի նա, իսկ գինուց էլ այն համը չտացաւ, ինչ որ անցեալ տարի: Նորա գլուխը սկսեց պտըտուել և սիրտը թրթռալ, այնպէս որ հարկաւոր էր միջոցներ ձեռք ասնել:

— Հայրեկը պաշտում է քեզ, իսկ դու չգիտեմ ինչու այնպէս վատ ես վարւում նորա հետ, խօսեց Տանեան քնելուց առաջ: Այդ բանը խիստ վատ է ազդում նորա վրայ: Նայիր, նա ծերանում է ոչ թէ օրերով, այլ ժամերով: Աղաչում եմ քեզ, Անդրիւշա, ի սէր Աստուծոյ, ի սէր քո հանգուցեալ հօր և իմ հանգստութեանը, եղիր նորա Հետ սիրալիր:

— Ձեմ կարող և չեմ ցանկանում:

— Բայց ինչո՞ւ, հարցրեց Տանեան ամբողջ մարմնով դողալով: Բացատրիր ինձ, ինչո՞ւ:

— Որովհետև նա ինձ դուր չի գալիս, ահա թէ ինչու, ասաց առանց այլևայլութեան Կովրինը ուսերը թափ տալով: Բայց չխօսենք նորա մասին. նա քո հայրն է:

— Ձեմ կարող հասկանալ, ս՛չ, չեմ կարող, խօսեց Տանեան լռելով հայեացքը մի կէտի վրայ և նորա քունքերը կնճռուեցին: — Ինչ որ անըմբռնելի և սարսափելի բան է կատարւում մեր տան մէջ: Դու փոխուել

ես բոլորովին... Դու խելացի ես, ոչ սովորական մարդկանցից և լանկարծ զայրանում ես ամեն մի չնչին բանի համար, խառնում ես դատարկ վէճերի մէջ... Այնպիսի չնչին բաներ են լուզում քեզ, որ երբեմն մարդ ուղղակի զարմանում է և չի հաւատում, որ այդ դու ես: Մի բարկանար, խնդրեմ, շարունակեց նա, վախենալով ինքն իրան խօսքերից և համբուրելով նորա ձեռքերը: Դու խելացի, բարի և ազնիւ մարդ ես: Եղիր արգարացի դէպի հայրս: Նա շատ բարի է:

— Նա բարի չէ, այլ բարեհոգի: Աօդեվիներում, վէպերում և կեանքի մէջ ես պատահել եմ այդպիսի մարդկանց, ինչպէս քո հայրն է: Նորանք ունենում են կոշտ, բայց բարեհոգի մարդու արտայայտութիւն, լինում են չափազանց հիւրասէր և տարօրիւնակ: Մի ժամանակ այդպիսի տիպերը իմ մէջ յարուցանում էին ցաւակցութիւն և ծիծաղ, իսկ այժմ տանել անգամ չեմ կարող այդպիսիներին: Նորանք ետական են լինում մինչև սկիռի ուղեղը: Ամենից անտանելին ինձ համար նորանց կոշտ մարդու արտայայտութիւնն է և այն որկարային, զուտ եղային և կամ խօզային լուսատեսութիւնը: Տանեան նստեց անկողնի վրայ և գլուխը դրեց բարձին:

— Դա տանջանք է, խօսեց նա և նորա ձայնից երևում էր, որ սաստիկ չոզնել է և դժուարութեամբ է կարողանում խօսել: Զմեռուանից սկսած մի բոպէ հանգիստ չեմ ունեցել... Այդ արդէն սարսափելի է: Աստուած իմ, ես տանջուում եմ...

— Այո՛, իհարկէ, ես ապուշ եմ, իսկ դու և քո հայրը եզիպտական մանուկներ, իհարկէ:

Ատելութիւնը և հեզուութիւնը բոլորովին չէին չուզում Կովրինի դէմքին: Տանեալին թւում էր, որ նորա դէմքը տգեղացել է և դատել անհամբոյր: Նա արդէն առաջ էլ նկատել էր, որ ինչ որ բան պակասում է նորա դէմքին, կարծես այն օրից, երբ սկսել էր խուզուել, փոխուել էր և դէմքը: Նա ցանկանում էր ասել նորան որևէ փրակորական խօսք, բայց իսկոյն զգաց, որ իրան այգպէս զրդողը թշնամական զգացմունքն է, վախեցաւ և դուրս գնաց ննջարանից:

IX

Կովրինը ստացաւ առանձին ամբիօն: Առաջին դասախօսութիւնը պէտք է լինէր դեկտեմբերի երկուսին. այդ մասին արդէն լայտարարութիւն էր կախուած համալսարանի միջանցքում, բայց նշանակուած օրը նա

հեռագրով հաղորդեց, որ հիւանդութեան պատճառով անկարող է կարգաւ դասախօսութիւնը:

Նորա կոկորդից արիւն էր գնում: Նա թքում էր արիւն, իսկ ամառուայ մէջ պատահում էր մէկ-երկու անգամ, որ արիւնը առատութեամբ հասում էր նորա բերանից: Այդպիսի ժամանակ նա չափազանց թուլանում էր և ընկնում քնած զրութեան մէջ: Այդ հիւանդութիւնը այնքան էլ չէր վախեցնում նորան, որովհետև գիտէր, որ իւր հանգուցեալ մայրը, նոյն հիւանդութեամբ ապրել էր տասը տարի և մինչև անգամ աւելի: Բժիշկներն էլ հաւատացնում էին, որ դա վտանգաւոր չէ և միայն խորհուրդ էին տալիս չլուզուել, վարել կանոնաւոր կեանք և քիչ խօսել:

Յունուարին դասախօսութիւնը դարձեալ անդի չունեցաւ նոյն պատճառով, իսկ փետրուարին արդէն ուշ էր և մնում էր թողնել եկող ասրուան:

Ապրում էր նա արդէն ոչ թէ Տանեալի, այլ մի ուրիշ կնոջ հետ, որ երկու տարով մեծ էր իրանից: Սա խնամում էր նորան, ինչպէս երեխի: Կովրինը սիրով հնազանդուում էր նորան. այժմ նորա արամազրութիւնը դատել էր խաղաղ և հպտասկող: Երբ Վարվառա

Նիկոլաւեանն, այսպէս էին կոչում նորան, պատրաստուում էր նորան Ղրիմ տանելու, Կովրինը շընդիմացաւ, թէ և զգում էր, որ այդ ճանապարհորդութիւնից ոչինչ լաւ բան սպասել չի կարելի:

Նորանք հասան Սևաստապօլ երեկոյեան և իջեանեցին հիւրանոցում, որպէսզի հանգստանան և միւս օրը շարունակեն ճանապարհը գէպի Եալտա: Երկուսին էլ յօգնեցրել էր ճանապարհը: Վարվառա Նիկոլաւեանն թէյ խմեց և պառկեց քնելու. նորա աչքերը շուտով խփուեցին: Կովրինը չէր պառկում: Կեռ տանը, ճանապարհ ընկնելուց մի ժամ առաջ, նա ստացել էր նամակ Տանեայից և վճռել էր բաց չանել: Այժմ այդ նամակը ընկած էր գրպանում և նրա մասին յիշողութիւնը անհաճելի կերպով յուզում էր Կովրինին: Նա այժմ անկեղծ և մինչև հոգու խորքը համոզուած էր, որ իւր կողմից սխալ քայլ էր Տանեայի հետ ամուսնանալը. գոհ էր, որ վերջնականապէս բաժանուել է նորանից: Նորա կարծիքով, Տանեան վերջ ի վերջոյ դառել էր շարժւող կենդանի կմախք. ամեն բան մեռել էր նորա մէջ, բացի ակընդհատ նայող խոժոռ ու խելացի աչքերից: Յիշողութիւնը այդ կնոջ մասին յարուցանում էր նորա մէջ միմիայն ցաւակցութիւն գէպի

նա և օրտնեղութիւն: Ծրարի վրայի ձեռագիրը մտաբերել տուեց նորան, թէ ինչպէս երկու տարի առաջ անարդար և դաժան կերպով էր վարուում այն մարդկանց հետ, որոնք ոչնչով մեղաւոր չէին և որոնց վրայ թափում էր իւր հոգու բոլոր դատարկութիւնը, ձանձրոյթը, օրտնեղութիւնը, որ առաջանում էր մենակութիւնից և կեանքից անբաւական լինելուց: Ի դէպ լիջեց այլև, թէ ինչպէս մէկ անգամ պատահոտեց և մանր կտորների վերածեց իւր գիսերտացիան և այն բոլոր յօգուածները, որ գրուած էին հիւանդութեան ժամանակ: Թղթի կտորները բաց պատուհանից թափուելով, քամու հոսանքով տարուեցան գէպի ծառերը և ծաղիկները: Նրանց իւրաքանչիւր տողի վրայ նա կարգում էր օտարոտի և ոչ մի հիմունք չունեցող յաւակնութիւն, թեթեամիտ գայրոյթ, յանգանութիւն և ինքնահաւանութեան մոլութիւն. նորան թւում էր, թէ նորանց վրայ կարգում է իւր բոլոր յանցանքների նկարագրութիւնը: Բայց երբ վերջին տետրակը արդէն պատահաց երբ վերջին տետրակը արդէն պատահաց էր և դուրս ածուեց պատուհանից, նորա սիրտը յանկարծ ինչ որ պատճառով լրջուեց դառնութեամբ, նա գնաց կնոջ մօտ և ուղղեց նորան շատ վիրաւորական խօսքեր: Աստուած իմ, ինչպէս նա հարուածում էր

նորան: Մէկ անգամ աւելի խորը վիրաւորած լինելու համար, ասաց նորան, որ իւր հայրը տգեղ դեր է կատարել իրանց ամուսնութեան խնդրում և որ նա ինքն է խընդրել իրան ամուսնանալ քեզ հետ: Եգորը Սիմէօնիչը պատահաբար լսեց այդ խօսքերը, ներս վազեց սենեակը և յուսահատութիւնից չկարողացաւ արտասանել և ոչ մի խօսք. նա միայն ոտները խփում էր յատակին և տարօրինակ կերպով մօնչում, կարծես լեզուն պոկ էր եկել արմատից: Տանեան նայելով հօր վրայ, աղիողորմ ճիչ արձակեց և ուշագնաց եղաւ: Այդ արդէն չափազանց էր:

Այդ բոլորը վերակենդանացան նորա լիշողութեան մէջ. միմիայն մի հայացք ձգելով նամակի ձեռագրի վրայ: Կովրինը դուրս եկաւ պատշգամբ: Տաք և խաղաղ գիշեր էր, օդի մէջ գգալի էր խոնաւութիւն, որ տարածւում էր ծովից: Հրաշալի ծովախորշը անդրադարձնում էր իր մէջ լուսինը և կրակները. նա այնպիսի մի գոյն ունէր, որ դժուար կարելի էր անուն գտնել. նա ներկայացնում էր կանաչ և կապույտ գոյների նուրբ միախառնումն: Տեղ-տեղ ջրի գոյնը նմանութիւն ունէր կապույտ արջասպի, իսկ տեղ-տեղ լուսնի օսկեշող ճառագայթները այնքան էին խառնում, որ կարծես ջրի փոխարէն լըց-

նում էին ծովախորշը. ընդհանուր ամամբ շատ նուրբ ներգաշնակութիւն կար գոյների և խաղաղ բնութեան մէջ:

Ներքին յարկում, հէնց պատշգամբի տակը, պէտք է որ լուսամուտները բաց լինէին, որովհետեւ շատ պարզ լուում էր այնտեղից եկող կանացի խօսակցութեան և ծիծաղի ձայներ: Այնտեղ ըստ երևոյթին երեկոյթ կար:

Կովրինը ջանք արաւ և բացեց նամակը. նա մտաւ սենեակ և սկսեց կարգալ:

«Հէնց այժմ մեռաւ հայրս: Իմ այս կորստի պատճառը դու ես, դու սպանեցիր նորան: Այդին փշանում է, նորա մէջ այժմ անօրէնութիւն են անում օտար ձեռքեր՝ այսինքն կատարուեց այն, ինչուց այնքան վախում էր խեղճ հայրս. դորա պատճառն էլ դարձեալ դու ես: Ես տտում եմ քեզ ամբողջ հոգովս և ցանկանում եմ քեզ շուտով ոչնչանալ: Ա՛խ, ինչպէս ես տանջւում եմ: Իմ հօգին կրճում է անտանելի վիշտը... Անիծուած լինիս դու: Ես քեզ համարում էի ոչ սովորական մարդկանցից, հանճարի տեղ էի ընդունում, սիրեցի քեզ, լայց բանից դուրս եկաւ, որ դու խելագար ես...»:

Կովրինը չկարողացաւ շարունակել կարգալը. նա պատռոտեց նամակը և վերածեց:

Անհանգստութիւնը, որ աւելի երկիւղի բնաւորութիւն ունէր, տիրապետեց նորան: Պատասխան այն կողմում քնել էր Վարվառա Նիկոլաեանան, որի շնչառութեան ձայները հասնում էին Կովրինի սկանջին: Ներքեւից էլ լսում էին կանացի խօսակցութեան և ծիծաղի ձայներ: Չնայելով սորան, Կովրինին այսուամենայնիւ թւում էր, թէ ամբողջ հիւրանոցում բացի իրանից չկայ և ոչ մի կենդանի շունչ: Անբախտ և վշտահար Տանեայի անէծքը ճնշում էր նորա ամբողջ հոգեկան աշխարհը: Նա կասկածանքով և միևնույն ժամանակ երկիւղով էր նայում դռանը, կարծես վախենալով չիների ներս մտնի այն անիմանալի սլոթը, որ որևէ երկու տարուայ ընթացքում այնպէս քայքայեց իւր և մերձաւորների կեանքը:

Նա արդէն փորձով գիտէր, որ երբ ջղերը բնական զրութիւնից դուրս են գալիս, նրանց հանգստացնելու համար ամենալաւ միջոցն է աշխատանքը: Հարկաւոր էր նրստել սեղանի առաջ և ստիպել իրան, ինչ էլ որ լինի, կենդրանանալ որևէ մտքի վրայ: Նա հանեց կարմիր թղթապանակից մի տետրակ, որի վրայ խզրզած էր մի ոչ մեծ ժողովածու լօղուածի ծրագիր: Այդ նա կազմել էր այն գիտաւորութեամբ, որ եթէ Ղրիմում անգոր-

ծութիւնից սկսէ ձանձրանալ, գրագուռի նսրանով: Նա նստեց սեղանի առաջ և սկսեց պարագել: Նորան թւում էր, թէ վերագոռնում է իւր վրայ նախկին խաղաղ, հլու և անտարբեր տրամագրութիւնը: Նա սկսեց մինչև անգամ խորհել աշխարհի ունայնութեան մասին: Արքան շատ բան է վերցնում մեզանից կեանքը, մտածում էր նա, այն չնչին, կամ ամենասովորական բարիքների համար, որպիսին նա կարող է տալ մեզ: Օրինակ, որպէսզի քառասուն տարեկան հասակում ստանալ ամբիոն, լինել սովորական պրօֆեսոր, թույլ, ձանձրալի և անհասկանալի ոճով արտայայտել սովորական և այն էլ օտարի մտքերը, մի խօսքով, որպէսզի հասնել միջակ ուսումնականի աստիճանի, հարկաւոր էր իրան սովորել տասնուհինգ տարի, աշխատել զօր ու գիշեր, քաշել ծանր հոգեկան հիւանդութիւն, կրել ծանր ըսպէներ անյաջող ամուսնութեան պատճառով և վերջապէս գործել ամեն տեսակ շատ լիմարութիւններ ու անարգարութիւններ, որոնց մասին լիշելը անգամ հաճելի չէ: Կովրինը այժմ պարզ գիտակցում էր, որ ինքը արտասովոր ընդունակութիւնների տէր մարդ չէ և սիրով հաշտւում էր այդ մտքի հետ: Նորա կարծիքով իւրաքանչիւր մարդ

պէտք է գոհ լինի նորանով, ինչ որ իսկապէս է:

Զբաղմունքը բոլորովին կարող էր հանգստացնել նորան, բայց պատահաբար նամակը, որ սպիտակին էր տալիս յառակի վրայ, խանգարում էր նորան կենդրոնանալ: Նա վերկացաւ սեղանի մօտից, հաւաքեց նամակի կտորտանքը և գուրս ածեց լուսամուտից, բայց ծովային մեղմ քամին խանդարեց և նամակի կտորտանքը թափուեցին հէնց լուսամուտի առաջ: Նորից նորան տիրեց անհանգստութիւնը, որ աւելի երկիւղէ էր նման, նորից նորան սկսեց թուալ, որ ամբողջ հիւրանոցում բացի իրանից ոչ ոք չկայ... Նա գուրս եկաւ պատշգամբը: Ծովախորշը, ինչպէս կենդանի շունչ, նայում էր նորա վրայ իւր բազմաթիւ երկնազօյն, կապուտ, փերուզէ և կրակոտ աչքերով ու հրապուրում էր նորան: Տօթ էր, աւելորդ չէր լինի լողանալ:

Յանկարծ ներքին յարկում սկսեցին աչծել ջուլթակի վրայ և երգել երկու կանացի քնքոյշ ձայներ: Նիւթը ծանօթ էր Կովրինին: Նիրա մէջ խօսում էր հիւանդոտ երևակայութեամբ ինչ որ աղջկայ մասին, որ գիշերը այգում լուծ է խորհրդաւոր ձայներ և եզրակացնում է, որ դա սրբազան ներգաշնակութիւն է, որ մեզ մահկանացուներին հա-

մար անհասկանալի... Կովրինի չունչը կտրուում էր: Թախիծը սկսեց ճնշել նորա սիրտը: Սնցեակի քաղցր լիշատակը արթնացաւ, վերակենդանացաւ նորա կրծքի մէջ:

Փոթորիկի նմանութիւն ունեցող սև, բարձր սիւնը երևեցաւ ծովախորշի միւս ափին: Նա ահռելի արագութեամբ շարժոււմ էր ծովախորշի վրայով ուղիղ դէպի հիւրանոցի վրայ և որքան մօտենում էր, այնքան փոքրանում ու աւելի մութ գոյն էր ստանում: Կովրինը հագիւ կարողացաւ մի կողմ քաշուել նրան ճանապարհ տալու համար... Սև արեղան բաց, սպիտակահէր գլխով, սև յօնքերով, ոտաբոբիկ և ձեռքերը ծալած կրծքին՝ անցաւ մօտովը և կանգնեց սենեակի մէջտեղը:

— Ինչո՞ւ չհաւատացիք ինձ, յանդիմանութեամբ հարցրեց նա, փաղաքշտբար նայելով Կովրինի վրայ: Եթէ դու այն ժամանակ հաւատայիր ինձ, որ հանճար ես, քո այս երկու տարին չէր անցնի տխուր և անբովանդակ:

Կովրինը արգէն հաւատում էր, որ ինքը Աստուծոյ ընտրեալներէց է և հանճար: Նա խօսոյն մտաբերեց իւր նախկին բոլոր խօսակցութիւնները սև արեղայի հետ և ցանկանում էր խօսել, բայց արիւնը կոկորդից

Հոսեց ուղղակի կրճքի վրայ և նա չգիտենալով ինչ անել, ձեռքերը քսեց կրճքին, որից և ձեռնոցները արիւնից թրջուեցին: Նա ցանկանում էր կանչել Վարվառա Նիկոլաւնային, որ քնած էր դռնապի այն կողմը, բայց գժուարութեամբ կանչեց.

— Տանեան.

Նա ընկաւ յատակի վրայ, յետոյ կիսով չափ բարձրանալով, յենուեց կռան վրայ և նորից կանչեց:

— Տանեան:

Նա կանչում էր Տանեային, մեծ այգին ցօղապատ, փարթամ ծաղիկներով, կանչում էր ծառաստանը, մայրիները մամռապատ արմատներով, հաճարի արուը, իւր հրաշալի գիտութիւնը, կանչում էր իւր երիտասարդութիւնը, համարձակութիւնը, ուրախ օրերը. կանչում էր կեանքը, որ այնքան գեղեցիկ էր: Նա տեսաւ յատակի վրայ, հէնց իւր երեսի մօտ, արեան լճակ ու թուլութիւնից այլ ևս չկարողացաւ արտասանել և ոչ մի խօսք: Անսահման ու անիմանալի երջանկութեան զգացումը ամբողջովին տիրապետել էր նորան: Ներքեւում, պատշգամբի տակ, ածում էին գիշերերգ, իսկ սև արեղան շշնջում էր նորա ականջին, որ դու հանճար ես և մեռնում ես միայն այն պատճառով, որ քո թոյլ կազմուածքը

արդէն կորցրել է իւր հաւատարակչութիւնը և այլևս չի կարող ծառայել, պատասխան լինել հանճարի համար:

Երբ Վարվառա Նիկոլաւնան զարթնեց և դուրս եկաւ դռնապի յետեից, Կովրինը արդէն մեռած էր: Երջանկութեան ժպիտը դրօշմել էր նորա սառը գէմքի վրայ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1, Քնել եմ ցանկանում	3
2, Գիմնագիտութ.	16
3, Քննիչը	22
4, Ընտանիքի հայրը	34
5, Թշնամիներ	43
6, Ապօրինի գաւակ	73
7, Աքսորանքի մէջ	83
8, Անտանելի մարդիկ	103
9, Սև արեղայ.	121

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Գիմել՝ Сел. Больш. Караклисъ,
В. Арабаджянцъ

«Ազգային գրադարան»



NL0319760



12.677

891.71

Q-34